

ԱՐԴՅՈ՞Ք ԱՄԵՆԱԲԱՐՁՐՅԱԼ ԱԼԼԱՅԸ ՄԵԿԸ, ԹԵ ԵՐԵՔՆ Է

[Հայերեն - Armenian – أرمني]



Հեղ. Դոկ. Մուկեթիհի Իբն Մահմուդ Ասսաքքար



Թարգմանությունը:

EUROPEAN ISLAMIC RESEARCH CENTER (EIRC)

& Աննա Ռ. Հակոբ
Ստուգող հանձնաժողով:
Աբու Առամ

الله جل جلاله، واحد أم ثلاثة؟



د. منقذ بن محمود السقار



ترجمة:

المركز الأوروبي للدراسات الإسلامية

& أنا ر. يعقوب

مراجعة: أبو آرام

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Առաջին հերթին, փառք ու երախտագիտություն լինի Ալլահին, Ամենաբարձրյալ Աստծուն: Մեծ պատվով, ես ներկայացնում եմ այս համեստ աշխատանքը իմ ընթերցողին, հուսալով, որ Ամենաբարձրյալ Աստվածը կօգնի նրան ընկալել և ընդունել նրանց շարքերը, ովքեր տեղյակ են ճշմարտությանը և ում Նա ուղղորդել է:

Հետևելով մարգարե Մուհամմեդի (Խ.Ա.Ո.Ն) ավանդույթին, ես ցանկանում եմ հայտնել իմ երախտագիտությունը նրանց, ովքեր առաջարկել են իրենց օգնությունը, աշխատանքին և իմ հաջողության ավարտի գործընթացին, իրենց աղոթքները ուղղելով Ամենաբարձրյալին:

Ես ցանկություն ունեմ իմ երախտագիտությունը հայտնել իմ առաքինի ծնողներին, ովքեր մեծ շնորհ են պարգևել ինձ շարունակաբար խրախուսելով և աջակցելով: Ես նույնպես իմ երախտագիտությունն եմ հայտնում իմ հավատարիմ կնոջը, աշխատանքի ավարտի ընթացքում իր շարունակական աջակցության և իմ կողքին լինելու համար:

Ես նույնպես սրտանց իմ երախտագիտությունն եմ հայտնում թարգմանիչների թիմին, Պր. Մահմուդ Սալահին, Պր. Ալի Քասիմին, ովքեր մեծ դեր են խաղացել անգլիախոս ընթերցողի գրքի տարածման հարցում:

Վերջապես, ես իմ երախտագիտությունն եմ հայտնում Դուկ Ջոն Էլսին, ով մեծ հաճույքով կատարել է վերջնական սրբագրությունը: Լինելով այլ հավատքի, Նա կատարել է դա, քանի որ փնտրում է ճշմարտությունը և հետևում է ուսումնասիրությունների և քննարկումների գիտական մեթոդներին:

Ես նույնպես իմ երախտագիտությունն եմ հայտնում իմ բոլոր եղբայրներին, ընկերներին և գործընկերներին, ովքեր որևէ դեր են ունեցել գրքի ավարտի հարցում:

Դոկ. Մուհեթի Իբն Մահմուդ Ասսաքքար

mongiz@maktoob.com

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(Ասա. Նա Ալլահին է, Մեկը և Միակը, Ալլահը, Հավերժ, Կատարյալ, Նա չի ծնում, ոչ էլ ծնվում է և ոչինչ նման չէ Նրան): (Սուրբ Դուրան 112:1-4)

(Քրիստոսը, Մարիամի որդին, ոչ ավելին, քան առաքյալ, շատերը առաքյալներ են, ովքեր նախորդել են նրան: Նրա մայրը, ճշմարտության կին էր: Նրանք երկուսն էլ սնվել են: Տեսեք, թե ինչպես է Ալլահը իր նշանները պարզաբանում նրանց, սակայն տեսեք, թե ինչպես են նրանք ստում ճշմարտությունը): (Սուրբ Դուրան 5:75)

(Նա ոչ ավելին էր, քան ծառա. Մենք շնորհում ենք Մեր երախտագիտությունը նրան և Մենք նրան դարձրել ենք օրինակ իսրայելի Չավակներին): (Սուրբ Դուրան 43:59)

(Նրանք ասում են. «Ալլահը, Ամենաողորմածը, ծնել է որդի»: Իրոք, դուք առաջ եք բերում մի բան, որը հրեշավոր է: Ըստ այդ, երկինքները պատրաստ են այրվել, երկիրը պատռվել և լեռները ընկնել ավերակների: Որ նրանք պետք է որդի վերագրեն Ամենաողորմած Ալլահին: Քանի որ չի համապատասխանում Ամենաբարձյալ Ալլահի մեծությանը, որ Նա որդի ծնի: Երկինքների և երկրի արարածներից բոլորը պետք է գան առ Ամենաողորմած Ալլահը որպես ծառա: Նա նրանցից, բոլորից չի պահանջում հաշիվ և հաշվառում է նրանց բոլորին ճշգրտորեն: Եվ նրանցից բոլորը Դատաստանի Օրը միայնակ կգան Նրա մոտ): (Սուրբ Դուրան 19:88-95)

Այս առաքիլի տարբերակները ամփոփում են Մահմեդական հայեցակարգը, հավատքը և համոզմունքը Ալլահին¹ Ամենաբարձրային², Մեկին և Միակին և Նրա մարգարե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն)³: Նա առաքիլի մարգարե և մեծ առաքյալ է, ում Ամենաբարձրյալ Ալլահը ուղարկել է հայտնել

¹ Մահմեդականները սովորություն ունեն կիրառել «Ալլահ» անունը, որը հանդիսանում է Ամենաբարձրյալ Աստծո գեղեցիկ անուններից մեկը, որն էլ փոխարինում է անգլերեն «Աստված» բառին: «Ալլահ» խոսքը անարատ և եզակի է ի տարբերություն անգլերեն «Աստված» բառի, որն էլ կարելի է կիրառել տարբեր ձևերով: Եթե մենք ավելացնում ենք «ներ» մասնիկը «Աստված» բառին, այն դառնում է «Աստվածներ», որն էլ հեզնակի թիվն է: Ալլահը եզակի թիվ է, գոյություն չունի ոչ մի հոգնակի թիվ: Եթե մենք ավելացնենք «ուհի» մասնիկը «Աստված» բառին, այն դառնում է «Աստվածուհի» որն էլ իզական աստված է: Գոյություն չունի ոչ արական, ոչ էլ իգական Ալլահ: Մեծ Կրոնների Աստծո գաղափարը» Դոկ. 2աքիր Աբդուլ Քարիմ էջ.18

² Մահմեդականները առանց փառաբանության չեն նշում, Ալլահի անունը: Ամենաբարձրյալ խոսքը համապատասխանում է արաբերեն «Սուբհանահու Ուաթաալա» խոսքերին, որն էլ նշանակում է «Փառք Նրան, Նա վեր է ամենից» Սուրբ Դուրան 17:43 Այս երկու բառերի անգլերեն իմաստը «Սուրբ Դուրանի» իմաստներից է, որը հեղինակել է Աբդուլլահ Յուսուֆ Ալի: Ուստի, այս գրքի մեջ ես կիրառում եմ «Ալլահ Ամենաբարձրյալ» խոսքը, երբ վերաբերվում է Ամենաբարձրյալ Աստծուն, բացառությամբ մեջբերումների և մեկնաբանությունների:

³ Մահմեդականները չեն նշում Մարգարեի անունը առանց պատվելու Նրան իրենց աղոթքների և խնդրանքների մեջ: Խ.Ա.Ո.Ն հապավումը նշանակում է Խաղաղություն Աստծո Օրինանքը Նրան, որը նշում են մարգարեին և երբ նշում են Կուլս Մարիամին: Իսկ (Խ.Ա.Ո.Ն) հակասում է Խաղաղություն լինի Նրանց խոսքերին, երբ նշում են ավելի քան մեկ մարգարեի:

միաստվածությունը և աջակցել է նրան նշաններով և ուղղորդությամբ:

Միաստվածությունը, որը կրել է Մուհամմեդը (Խ.Ա.Ո.Ն) մարդկությանը, հանդիսանում է նրան նախորդող բոլոր մարգարեներին (Խ.Ա.Ո.Ն) հավատքը և համոզմունքը:
«Մենք չենք ուղարկել ձեզ նախորդող որևէ առաքյալ, առանց ԻՄ այս հայտնության, որ գոյությունն չունի ոչ մի աստված բացառությամբ Ինձ, ուստի երկրպագեք և ծառայեք Ինձ:» (Սուրբ Ղուրան 21:25)

Ամեն դեպքում, Քրիստոնյաները հակադրվում են Մահեմդականներին, քանի որ նրանք հավատք են ընծայում, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) Ամենաբարձրյալ Ալլահի Որդին է, իսկ ոմանք էլ հավատք են ընծայում, որ նա ինքը, Ամենաբարձրյալ Ալլահն է: Նրանք նույնպես հավատք են ընծայում, որ Նա, Ամենաբարձրյալ Ալլահը, իջել է երկնքից, մարմնավորված, ում ապտակել, տանջել և խաչել են, մարդկության մեղքի քավության համար, որը նրանք ծառանգել են իրենց հայր Ադամից:

Հարց է ծագում, թե որտեղի՞ց է բխել այս համոզմունքը և արդյո՞ք իրենց գրքերի մեջ առկա է որևէ վկայություն, որը աջակցում են այս գաղափարին: **(Ասա «Բերեք ձեր համոզիչ ապացույցը»):** (Սուրբ Ղուրան 21:24)

Իմ շարքի երրորդ հատվածի մեջ, հաշվի առնելով խնդրի կարևորությունը և լրջությունը, ես առաջադրում եմ կարևոր մի հարցը, թե արդյո՞ք Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում է Աստծո մարգարեն և արդյո՞ք Ամենաբարձրյալ Ալլահը մեկն է, թե երեքը:

Հարցերին պատասխանելու նպատակով ես կփորձեմ ուսումնասիրել և հետազոտել Սուրբ Աստվածաշունչը, Հին և Նոր Կտակարանները, որոնց ուղղորդում են հոգևորականների և արևմտյան մտածողների փաստարկները:

Օվ, Ալլահ, ցույց տուր և առաջնորդիր մեզ առ ճշմարտություն, իրոք, դու ճշմարիտ ուղղու ես տանում նրան, ում ցանկանում ես:

Դոկ. Մուևքիդի Իբն Մահմուդ Ասսաքքար

Մեքքա, Սաուդյան Արաբիա/ Ռաբիի Աուալ, 1424 (Լուսնային օրացույց)

ՀԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԸ ԸՍՏ ՄԱՅՄԵԴԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ

Ընդհանուր առմամբ Մահմեդականների Հիսուսին (Խ.Ա.Ռ.Ն) վերաբերվող հավատքը այն է, որ Նա հանդիսանում է պատվելի և առաքինի Մարիամի որդին, Նա ծնվել է հրաշագործ կերպով, առանց տղամարդու միջամտության: Ամենաբարձրյալ Ալլահը Նրան ուղարկել է Իսրայելի Չավակներին որպես մարգարե և առաքյալ, որպեսզի հայտարարի միաստվածություն և մարգարեացնի վերջին մարգարեի գալուստը: Ամենաբարձրյալ Ալլահը Նան աջակցում է Նրան հզոր հրաշքներով: Մարտահրավեր նետելով Հրեաներին, ովքեր, ըստ իրենց սովորության սպանել են մարգարեներին, ցանկություն ունեին սպանել Նրան, Նա շարունակեց իր առաքելությունը և Ամենաբարձրյալ Ալլահը փրկեց **Նրան** իրենց չար դավադրությունից և Նրան բարձրացրեց երկինքներ:

Նույնպես, Մահմեդականները հավատք են ընծայում, որ մինչ Դատաստանի Օրը Հիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) կվերադառնա, կոչելով բոլորին երկրպագել Ամենաբարձրյալ Ալլահին, Մեկին և միակին, հետևել Նրա կանոնադրությանը և օրենքին, կոտրելով խաչը և բարձրացնելով միաստվածության դրոշը:

Հավատքի պարզաբանության և լրացուցիչ լուսաբանության համար, մենք կվերանայենք Սուրբ Ղուրանի տարբերակները, որը Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) մասին բացահայտեց Ամենաբարձրյալ Ալլահը:

Սուրբ Ղուրանը նշում է, որ Ամենաբարձրյալ Ալլահը պատվել է Հիսուսին (Խ.Ա.Ռ.Ն) դարձնելով Նրան անարատ Կույս Մարիամի որդին, ում Ամենաբարձրյալ Ալլահը վեր է դասել բոլոր ազգերի կանանցից: **«Ահա, հրեշտակները ասացին. «Օվ Մարիամ, Ալլահը ընտրել է քեզ և դարձրել անարատ, վեր է դասել բոլոր ազգերի կանանցից»»:** (Սուրբ Ղուրան 3:42)

Այն նույնպես նշում է, որ Ամենաբարձրյալ Ալլահը պատվել է նրան շնորհներով. **«Մեծ շնորհով նրա Տերը ընդունեց նրան. Նա նրան մեծացրեց անարատության և գեղեցկության մեջ. Նա գտնվում էր Չաքարիայի հոգացության ներքո: Յուրաքանչյուր անգամ, երբ Նա մտնում էր նրա մենխուլը տեսնելու նրան, Նա գտնում է նրա պաշարը: Նա ասում է. «Օվ Մարիամ, Որտեղի՞ց է քեզ այս ամենը»: Նա պատասխանում է. «Ալլահից, քանի որ Ալլահը մատակարարում է պաշար նրան, ում Նա է ցանկանում առանց սահմանների»»** (Սուրբ Ղուրան 3:37), Չաքարիան որդեգրեց նրան այն բանից հետո, երբ մայրը ուխտեց իր զավակին նվիրել Ամենաբարձրյալ Ալլահին և որ Նա պատվիրեց նրան երկրպագել Նրան: **«Օվ Մարիամ, երկրպագիր քո Տիրոջը հավատարմորեն. Տարածվիր և խոնարհվիր աղոթքի մեջ նրանց հետ, ովքեր խոնարհվում են»:** (Սուրբ Ղուրան 3:43)

Մարիամը (Խ.Ա.Ո.Ն) հղիացավ, երբ Ամենաբարձրյալ Ալլահը հրեշտակի միջոցով ավետեց նրան և անվանեց նրան: **«Ահա, հրեշտակները ասացին. «Օվ Մարիամ, Ալլահը ավետիս է տալիս քեզ իր խոսքը, նրա անունը կլինի Հիսուս Զրիստոս, Մարիամի որդի, պատվավոր տեղը կունենա այս աշխարհում և Հետագա և կլինի Ալլահի մերձավորներից»»:** (Սուրբ Ղուրան 3:45)

Տարբերակները հայտարարում են, որ Ամենաբարձրյալ Ալլահը արարեց գալիք զավակին, Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) իր խոսքը, առանց մարդկային միջամտության: Նա արարեց նրան առանց հոր, սակայն այդ նրան չի դարձնում աստվածային, քանի որ Ամենաբարձրյալ Ալլահը անսովոր եղանակով արարեց նաև Ադամին: **«Ալլահի առջև Ադամը նմանվում է Հիսուսին: Նա արարեց նրան հողից և այնուհետ ասաց նրան. «Եղիր»: Եվ Նա եղավ»:** (Սուրբ Ղուրան 3:59) Ամենաբարձրյալ Ալլահը արարեց երկուսին էլ, Հիսուսին և Ադամին «Եղիր» խոսքով:

Սուրբ Ղուրանը նույնպես նշում է այս սուրբ մանուկի ծնունդը, որպես առաջին հրաշք, ով (Խ.Ա.Ռ.Ն.) առանց հոր է: **«Եվ, Մենք դարձրել ենք Մարիամի որդուն և Նրա մորը որպես Նշան»:** (Սուրբ Ղուրան 23:50) այնուհետ Ամենաբարձրյալ Ալլահը ստիպեց Նրան խոսել օրորոցի մեջ, որպեսզի հերքի իր մորը, անարատ կույսին ուղղված Յրեաների չար մեղադրանքը:

«Նրանք ասում են. «Ինչպե՞ս ենք մենք կարող խոսել մեկի հետ, ով օրորոցի մանուկ է»: Նա ասում է, ես իրոք, Ալլահի ծառան եմ: Նա ինձ տվել է հայտնություն և դարձրել է ինձ մարգարե և Նա օրհնել է ինձ, որտեղ էլ որ ես լինեմ և պատվիրել է ինձ աղոթք և բարեգործություն իմ կյանքի ընթացքում: Նա ինձ դարձրել է բարի իմ մոր նկատմամբ և ոչ թե ամբարտավան կամ թշվառ, այսպիսով խաղաղություն լինի ինձ այն օրը, երբ ես ծնվել եմ և այն օրը, երբ ես կկնքեմ իմ մահկանացուն, և այն օրը երբ ես կհամբարձվեմ կրկին կյանք»: (Սուրբ Ղուրան 19:28-33)

«Նա պետք է խոսի մարդկանց հետ մանուկ և չափահաս հասակում: Եվ նա պետք է լինի առաքինիների մեջ»: (Սուրբ Ղուրան 3:46)

Երբ նա (Խ.Ա.Ռ.Ն.) դարձավ չափահաս, Ամենաբարձրյալ Ալլահը նախորդ շատ մարգարաների պես ուղարկեց Նրան: **«Եվ նրանց հետքերով Մենք ուղարկեցինք Հիսուսին, Մարիամի որդուն»:** (Սուրբ Ղուրան 5:46)

Նրա ուղերձը պետք է լրացներ Մովսեսի (Խ.Ա.Ռ.Ն.) ուղերձը: **«Ես եկել եմ ձեզ մոտ, որպեսզի հաստատեմ Օրենքը, որը նախորդում է ինձ: Եվ դարձնեմ թույլատրելի այն մի հատվածը, որը մինչ այդ արգելվում էր»:** (Սուրբ Ղուրան 3:50), ուստի Ամենաբարձրյալ Ալլահը տվեց Նրան Թորայի գիտությունը. **«Ահա, ես ուսուցանեցի քեզ Գիրքը և Իմաստությունը, Օրենքը և Ավետարանը»:** (Սուրբ Ղուրան 5:110) և Նա հայտնեց Ավետարանը Նրան(Խ.Ա.Ռ.Ն.): **«Մենք ուղարկեցինք Նրան**

Ավետարան. այնտեղ էր լույսը և ուղղարդությունը»:
(Սուրբ Ղուրան 5:46)

Ամենաբարձրյալ Ալլահը աջակցել է Ռիսուսին (Խ.Ա.Ո.Ն) հրաշքներով և տվել է շատ նշաններ, որպեսզի բավարար լինի իր ժողովրդին համոզել հավատք ընծայել նրան: **«Ահա, դու պատրաստում ես կավից, ինչպես որ կար թռչունի կերպար, Իմ թուլյատվությամբ և դու փչում ես և այն դառնում է թռչուն Իմ թուլյատվությամբ և դու բժշկում ես կույրին և բորոտին Իմ թուլյատվությամբ: Եվ ահա, դու համբարծում ես հանգուցյալին Իմ թուլյատվությամբ»:** (Սուրբ Ղուրան 5:110)

Ավելին, որպես աջակցություն, Ամենաբարձրյալ Ալլահը նրան տվել է անտեսանելիի գիտելիքը. **«Ես հայտնում եմ ձեզ, թե ինչով եք դուք սնվում և ինչ եք դուք ամբարում ձեր տները: Իրոք, Նշան է ձեզ համար, եթե դուք հավատք եք ընծայում»:** (Սուրբ Ղուրան 3:49) և աջակցեց նրան Սուրբ Յոգով, Գաբրիել հրեշտակով (Խ.Ա.Ո.Ն): **«Մենք տվեցինք Ռիսուսին, Մարիամի Որդուն Պարզ Նշաններ և ամրացրինք նրան Սուրբ Յոգով»:** (Սուրբ Ղուրան 2:87)

Սուրբ Ղուրանը ցույց է տալիս որ Ռիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում էր միայն Իսրայելի Չավակների համար. **«Եվ նշանակում է նրան առաքյալ Իսրայելի Չավակներին, իր ուղերձի հետ»** (Սուրբ Ղուրան 3:49) և նա տալիս է ուղերձը նրանց: **«Եվ հիշեք Ռիսուսը, Մարիամի որդին ասաց. «Օվ Իսրայելի Չավակներ, ես Ալլահի առաքյալն եմ, ում ուղարկել են ձեզ, հաստատելու Օրենքը, որը նախորդել է ինձ և ավետելու ձեզ ինձ հաջորդող Մարգարեի մասին, ում անունը կլինի Ահմեդ»:** (Սուրբ Ղուրան 61:6)

Սուրբ Ղուրանը հայտնում է Ամենաբարձրյալ Ալլահի զգուշացումը ընդդեմ Ռիսուսի (Խ.Ա.Ո.Ն) չափազանցման և ծայրահեղացման: **«Օվ Գրքի Մարդիկ, Մի չափազանցեք ձեր կրոնի մեջ, Մի ասեք Ալլահից**

ոչինչ, բացառությամբ ճշմարտության: Քրիստոսը, Մարիամի որդին, ոչ ավելին է քան Ալլահի առաքյալը և Նրա Խոսքը, որը Նա շնորհեց Մարիամին և հոգի, որը ելնում է Նրանից»: (Սուրբ Ղուրան 4:171) Եվ այս հանդիսանում է ճշմարիտ բնույթը և ինքնությունը: **«Այսպիսին էր Ջիսուսը, Մարիամի որդին, սա է ճշմարտության հայտարարությունը, որի մասին Նրանք սին վիճում են: Վայել չէ Ալլահի մեծությանը, որ Նա որդի ծնի: Փառք Նրան, երբ Նա որոշում է, Նա միայն ասում է «Եղիր» և այն լինում է»:** (Սուրբ Ղուրան 19:34-35) Քանի որ Ամենաբարձրյալ Ալլահը Արարեց Նրան Իր Խոսքով «Եղիր» Աստված որևէ որդու կարիք չունի լինի Ջիսուսը, թե մեկ այլը:

Բացի այդ Սուրբ Ղուրանը հայտնում է, որ Ջիսուսը (Խ.Ա.Ո.Ն) չի հայտնել իր աստվածայնություն: Չակառակը Նա կժխտի և կմերժի յուրաքանչյուրին, ով կհայտարարի իր աստվածայնությունը և դա տեղի կունենա այն ժամանակ, երբ Ամենաբարձրյալ Ալլահը կհարցնի Նրան. **«Եվ ահա, Ալլահը կասի. «Օվ Ջիսուս, Մարիամի որդի, արդյո՞ք դու ասել ես մարդկանց երկրպագեք ինձ և իմ մորը ինչպես աստվածներ ի նսեմացում Ալլահի»»:** **«Նա կասի. «Փառք Քեզ, երբեք ես չեմ կարող ասել այն, ինչի իրավունքը չունեմ ասելու: Եթե ես ասեի նմանատիպ բան, դու անշուշտ տեղյակ կլինեիր այդ մասին: Դու տեղյակ ես, թե ինչ է իմ սրտում, չնայած ես տեղյակ չեմ, թե ինչ է Քեզ մոտ: Քանի որ Դու տեղյակ ես ամբողջովին այն բանի, ինչ գաղտնի է: Երբեք ես չեմ ասել Նրանց որևէ բան, բացառությամբ, ինչ Դու պատվիրել ես ինձ ասել, «երկրպագեք Ալլահին, իմ Տիրոջը, ձեր Տիրոջը և ես վկա եմ Նրանց, մինչ ապրում եմ Նրանց մեջ, երբ Դու չէիր վերցրել ինձ վեր, Դու Նրան Դիտորդն էիր և Քո արքայությունը և վկայությունը ամենին»:** (Սուրբ Ղուրան 5:116-117) Նա (Խ.Ա.Ո.Ն) կարող էր ասել, որ Նա ուղղակի մարդ է:

Ուստի, Քրիստոնյաները հավատք են ընծայում նրան որպես աստվածայնության և Աստծո որդու, ինչն էլ կեղծիք է: **«Այսպիսին էր Հիսուսը, Մարիամի որդին, սա ճշմարտության հայտարարությունն է, որի մասին նրանք գուր վիճում են»:** (Սուրբ Դուրան 19:34) **«Եվ, Քրիստոնյաները Քրիստոսին կոչեցին Ալլահի որդի: Դա նրանց շուրթերի խոսքն է»:** (Սուրբ Դուրանի 9:30) տարբերակները նույնպես մեղադրում են նրանց, ովքեր ասում են, որ Հիսուսը (Խ.Ա.Ու.Ն) հանդիսանում է նույն ինքը, Ամենաբարձրյալ Ալլահը:

«Անարգանքի մեջ են իրոք նրանք, ովքեր ասում են, որ Ալլահը Քրիստոսն է, Մարիամի որդին: Ասա. «Այդ դեպքում, ով ունի նվազագույն իշխանություն ընդդեմ Ալլահի, եթե Նրա կամքն էր ոչնչացնել Քրիստոսին, Մարիամի որդուն, Նրա մորը և բոլորին, յուրաքանչյուրին, ով երկրի վրա է»: (Սուրբ Դուրան 5:17)

Ուստի, այս մեծ մարգարեի հավատքը հանդիսանում է Մահմեդական հավատքի սյուներից մեկը և Ամենաբարձրյալ Ալլահը չի ընդունի նրան, ով գերծ է դրանից: **«Մարգարեն հավատք է ընծայում այնին, ինչ հայտնել է նրան Տերը, ինչպես վարվում են հավատքի մարդիկ: Նրանցից յուրաքանչյուրը հավատք էր ընծայում Ալլահին, Նրա հրեշտակներին, Նրա գրքերին և Նրա առաքյալներին»:** Մենք ոչ մի տարբերություն չենք դնում Նրա առաքյալների միջև»:

(Սուրբ Դուրան 2:285)

Թող Ամենաբարձրյալ Ալլահի գթասրտությունը և խաղաղությունը լինի նրանց բոլորին:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Անկախ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մասին նրանց տարբեր կարծիքների, Քրիստոնյա աղանդները հավատք են ընծայում, որ նա հանդիսանում է մարմնավորված Աստվածը⁴, աջակցելով այս հայտարարությունը Հին և Նոր Կտակարանների տարբեր հատվածներով, որը խոսում է նրա Աստվածայնության մասին: Այս հատվածները նրան կոչում են տեր, Աստված կամ Աստծո Որդի, փոխանցում, որ Ամենաբարձրյալ Ալլահը մարմնավորվել է նրա մեջ և որ նա արարել է որոշ արարածներ: Նրանք համարում են, որ նրա գույակությունը անհայտի և իր Համբարձման մասին, հանդիսանում է նրա Աստվածայնության ամենամեծ վկայությունը:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՎԿԱՅՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ

Մինչ հետևյալ վկայության քննարկումը, կարևոր է նշել և հաշվի առնել հետևյալ նշումները.

1. Ամբողջ Աստվածաշնչի, Հին թե Նոր Կտակարանի մեջ, առկա չէ ոչ մի հատված, որտեղ ինքը, Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հայտնել է իր աստվածայնությունը կամ խնդրել է մարդկանց երկրպագել իրեն: Ավելին, նրա ժամանակակիցներից ոչ մեկը չի երկրպագել նրան: Հրեաները նրան համարել են մեկը, ով հայտնել է

⁴ Բացառելով Եհովայի Վկաներին և որոշ Միաստվածական Եկեղեցիների, քանի որ նրանք ժխտում են Քրիստոսի Աստվածայնությունը և Երրորդությունը: Չնայած նրանք հավատք են ընծայում Սուրբ Աստվածաշնչին, նրանք ոչ մի վկայություն չեն գտնում, որը հաստատում է այս սկզբունքը, ուստի նրանք ժխտում են այն:

մարգարեությունը, ոմանք հավատք են ընծայել, սակայն մեծամասնությունը ժխտել են ամբողջ գաղափարը:

Սուրբ Աստվածաշնչի մեջ առկա չէ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության որևէ հիմք: Ինչ վերաբերվում է խնդրին, հեռուստատեսային մի բանավեճի ընթացքում, Դիդաթը մարտահրավեր է նետում Շվեդ արքեպիսկոպոսին ասելով. «Ես իմ գլուխը կդնեմ հեղիոտիսի տակ, եթե դուք ինձ ցույց տաք մեկ տարբերակ, որտեղ ինքը Հիսուսը ասում է. «Ես Աստված եմ» կամ «Երկրպագեք ինձ»»:

Իր «Գաղտնիքների Բանալին» գրքի մեջ, Քահանա Ֆենդերը բացատրում է, թե ինչու Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) Նոր Կտակարանի մեջ բացահայտ չի հայտնել իր աստվածայնությունը: Նա ասում է.

«Ոչ ոք ի վիճակի չէ ընկալել հարաբերությունն ու միությունը, որը տեղի է ունեցել մինչև նրա հարությունը և համբարձումը: Եթե նա այդպես վարվեր, նրանք կարող էին ընկալել, որ նա Աստված է մարդկային մարմնի մեջ... Հրեա բարձրագույն քահանաները ցանկություն ունեին բռնել և քարկոծել նրան, փաստը այն է, որ նա չի հայտարարել իր աստվածայնությունը, բացառությամբ առակներով և հանելուկներով»:⁵

Հրեաների հանդեպ վախը հանդիսանում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ինքնությունը թաքցնելու Ամենաբարձրյալ Ալլահի անընդունելի պատճառը: Նա սովորություն ուներ յուրաքանչյուր անգամ դեմ կանգնել և մեղադրել Հրեաներին և այնուհետ, տեղի է ունենում այն, ինչ նշել են Ավետարանները: «Սակայն անեծք ձեզ, դպիրներ և Փարիսեցիներ, երկերեսանիներ, քանի որ դուք փակել եք երկնքի արքայությունը մարդկանց առջև, քանի դուք ոչ ինքներդ եք մտնում, ոչ էլ թույլատրում եք նրանց, ովքեր կարող են մտնել այնտեղ ... դուք կույր առաջնորդներ ... դուք հիմարներ և կույրեր... Անեծք ձեզ դպիրներ և Փարիսեցիներ,

⁵ «Հայտնված ճշմարտությունը» Ռահմաթուլլահ ԱլՀինդի հատոր 3 Էջ.718-724

երկերեսանիներ, քանի որ դուք նման եք ճերմակազարդ շիրիմների, դուք սողուններ, դուք ուխտադրուժներ, ինչպե՞ս եք կարող դուք փախչել դժոխքի դատապարտությունից»։ (Մատթեոս 23/13-34) Չարմանալի է, թե ինչպես և ինչու է նա մարդկությունից թաքցնում իր ինքնությունը։ Նմանատիպ արարքը շեղում և ուղղորդում է շփոթմունքի։

2.Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) ոչ մի աշակերտ նրան Աստված չի համարել, քանի որ ոչ ոք չէր երկրպագում նրան։ Ի լրացում, աշակերտները և Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) ժամանակակիցները նրան համարում են միայն մարգարե։ Ես ավելի ուշ կբարձրաբանեմ։

3.Ամենահզոր վկայությունը, որը ներկայացնում են Քրիստոնյաները, որպեսզի ապացուցեն Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) աստվածայնությունը հանդիսանում է միայն Հովհաննեսի Ավետարանը և Պողոսի Նամակները, մինչդեռ Սինոպտիկները չեն ներառում որևէ պարզ հատված, որը ապացուցում է դա։

Փաստացի, վկայությունների բացակայությունը Սինոպտիկ գրերի մեջ պատճառ հանդիսացավ, որպեսզի Հովհաննեսը կամ հեղինակը, գրառի Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) աստվածայնության մասին Ավետարանը։ Այս Ավետարանի մեջ մենք գտնում ենք, որ նա գրառեց այն, ինչ մյուսները չեն գրառել և որ այս Ավետարանը լի է փոխաբերություններով և փիլիսոփայությամբ, որը տարբերվում է Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) պարզ միջավայրից և ոճից, որն էլ ստիպեց շատ ժամանակակիցների հետևել նրան։

4.Պարզ հատվածի բացակայությունը, որը ապացուցում է Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) Աստվածայնությունը Սինոպտիկ գրերի մեջ, պատճառ հանդիսացավ որպեսզի Քրիստոնյաները ուղղվեն դեպի կեղծ և շեղված Աստվածաշնչյան խմբագրությունների։ Օրինակ նրանք ավելացրել են միակ պարզ հատվածը, որը Հովհաննեսի Առաջին Նամակի մեջ հայտնում է երրորդության մասին։ (Հովհաննես 1,5:7)

Մենք այլ օրինակ կարելի է գտնել Պողոսի առաջին նամակի մեջ, որը ուղղված էր Տիմոթեոսին: Խմբագիրների կեղծիքը ակնհայտ է: Այն ասում է. «մեծ է աստվածայնության առեղծվածը. Աստված երևաց մարմնով»: (Տիմոթեոս 1,3:16)

Ըստ Քրիստիանի, տվյալ տարբերակը կեղծիք է: Նա ասում է. «Դա կեղծիք է, քանի որ 'Աստված' բառը առկա չէ բնօրինակի մեջ, փոխարենը այն պարունակում է երրորդ անձ ցույց տվող «Նա» դերանունը կամ «Այդ» ցուցադրական դերանունը:

Բացատրելով այս կեղծիքի պատճառը, պատմությունը և ժամանակը, Քահանա Ջեյմս Անասը ասում է.

« «Որը» բառի ավելի ճշգրիտ ընթերցումը, այն է, որ շատ տարբերակների մեջ հին աստվածաբանները չեն նշում այն, ինչը նրանք կերտել են, երբ մերժել են Արիոսին: Այդ փոփոխության պատճառը Նոր Հունական Ձեռագրերի մեջ հանդիսանում է երկու խոսքերի նմանությունը: Նրանք նման են սղագրության մեջ, միակ տարբերությունը փոքրիկ կետն է: Շատ հավանական է, որ հեղինակները լրացրել են այս փոքր հատվածը, որպեսզի բացատրեն իմաստը, ուստի, փոխել են «որը» բառը «Աստված» բառի հետ: Այնուհետ, այն տարածվել է միջին դարերի տարբեր կրկնօրինակների մեջ, հակամարտելով հնագույն կրկնօրինակների հետ, որը պարունակում է միայն «Այդ»⁶բառը:

Եթե, մենք ճշգրիտ ընթերցենք Պողոսի վերոհիշյալ տարբերակը, որը վերաբերում է առանձին խմբագրի մտադրված կեղծիքին, մենք կարող ենք գտնել, որ այն խոսում է կենդանի մարմնի մեջ գտնվող աստվածային կերպարանքի մասին, սակայն Նոր թարգմանությունները փոփոխել են այն Հիսուսի մեջ Աստծո մարմնավորման վկայությամբ:

⁶ Մեթոդական Աստվածաբանություն, Ջեյմս Անաս, էջ.206
ճշմարտությունը Հայտնվել է հատոր 2 էջ.460

Կաթոլիկ Ջեսյուսի խմբագրությունը, Դուայ Ռեյմի և Մուրդոքի Աստվածաշունչները հեռացրել են կեղծիքը և ուղղել են տարբերակը: Այն ասում է. »Մեծ Ե աստվածայնության առեղծվածը. Որը հայտնվել է մարմնով«: (Տիմոթեոս 1,3:16) փոխարինելով «Աստված» բառը ավելի ճշգրիտ «որը» բառով: Հետևաբար փոփոխելով իմաստը և Հիսուսի մեջ Աստծո մարմնավորման վկայությունը ի չիք է դառնում:

Այս կեղծիքների այլ օրինակ է հանդիսանում Հուդայի Նամակի թարգմանչի փոփոխությունը: Ամենահայտնի և տարածված Բողոքական խմբագրության Վերանայված Արքա Ջեսյուսի (Հակոբոսի) տարբերակի մեջ, մենք տեսնում ենք, այն ինչ կարող է խաբել և շեղել ընթերցողին: Այն ասում է. "Այժմ նրան, ով ի վիճակի է քեզ ետ պահել ընկնելուց և մեծ հրճվանքով քեզ անմեղ ներկայացնել նրա փառքի, միակ իմաստուն Աստծո, մեր Փրկչի առջև, թող լինի փառք և մեծություն, գերիշխանություն և հզորություն այժմ և հավետ»: (Հուդա 1:24-25)

Փաստը այն է, որ տարբերակը նշում է «Փրկիչ Աստծուն», ով կարող է փրկել մարդկանց Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) առաքելությամբ և ուղերձով, սակայն ոչ թե ինքնին Հիսուսի մասին: Կաթոլիկ Ջեսյուս խմբագրության և Ամերիկյան Տիպական Տարբերակի մեջ, մենք գտնում ենք հետևյալ տարբերակը. "միակ, իմաստուն Աստծուն, մեր Փրկչին, Հիսուս Քրիստոսի մեր տիրոջ միջոցով, փառք և մեծություն, իշխանություն և հզորություն»: (Հուդա 1:25)

Բողոքական խմբագրության մեջ, նրանք հեռացրեցին Հիսուսի անունը, նշելով, որ նա հանդիսանում է Փրկիչ և ոչ թե փրկության ուղղին: Այն Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) կոչում է «միակ իմաստուն Աստված», սակայն Կաթոլիկ խմբագրության հատվածը խոսում է ամենաբարձրյալ Ալլահի մասին, «միակ, իմաստուն Աստծո, մեր Փրկչի»: Քրիստոնյաները կեղծեցին տարբերակները, երբ նրանք ի վիճակի չէղան գտնել որևէ վկայություն, որը ապացուցում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնությունը:

Սիրելի եղբայր, նա, ով փնտրում է ճշմարտությունը, ես հրավիրում եմ ձեզ միանալ մեզ, միասին ձեռք ձեռքի տված գիտականորեն ուսումնասիրել Քրիստոնյաների գրավոր վկայությունը, որտեղ նրանք հայտնում են, որ ապացուցել են Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) Աստվածայնությունը:

Գոյություն ունեն այս վկայության վեց կարգեր.

1. Տարբերակներ, որոնք Հիսուսին վերագրում են աստվածայնություն, որը կոչում են «Աստծո տիտղոսներ»:
2. Տարբերակներ, որոնք նշում են Աստծո որդի ունենալը
3. Տարբերակներ, որոնք նշում են Աստծո դրսևորումը
4. Տարբերակները, որոնք նրան են վերագրում են Աստծո բնութագրերը
5. Տարբերակներ, որոնք նրան են վերագրում Աստվածային արարքները
6. Հիսուսի հրաշքները, որպես նրա աստվածայնության ապացույց

1. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ՈՐՈՆՔ ՀԻՍՈՒՄԻՆ ՎԵՐԱԳՐՈՒՄ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյաները ներկայացնում են այնպիսի հատվածներ, որոնք Հիսուսին վերագրում են աստվածայնությունը և հավատք են ընծայում, որ այս խոսքերը հանդիսանում են դրա վկայությունը: Առաջինը «Յաշուա» անունն է, որը ծագում է եբրայերեն «յեիուա քիալաս» արտահայտությունից, որն էլ թարգմանաբար նշանակում է «Աստված փրկել է»:

Հաջորդ հատվածը կարելի է տեսնել Եսայու Գրքի մեջ. «Քանի որ մեզ համար մանուկ է ծնվում, մեզ որդի է տրվում և իշխանությունը պետք է լինի նրա ուսերին, և նրա անունը կլինի Հոյակապ, Խորհրդական, Հզոր Աստված, Հավերժ Հայր, Խաղաղության Արքայագն»։ (Եսայի 9:6)

Նրանք նույնպես հավատք են ընծայում, որ Դավիթի նկարագրությունը հանդիսանում է փրկչի անքակտելի ապացույցը, որովհետև Դավիթը կոչեց նրան «Տեր»։ «Տերը ասաց իմ Տիրոջը, Նստիր իմ աջ ձեռքի մոտ, մինչ ես կբերեմ քո թշնամիներին քո ոտքերի մոտ: Տերը ուղարկեց Սիոնից քո իզոր գավազանը: Կառավարիր քո թշնամիներին: Քո ժողովուրդը իրենց ազատորեն կներկայացնեն քո իշխանության օրը, սուրբ հանդերձով, վաղ առավոտյան, քո երիտասարդությունը կլինի քոնը: Տերը երդվել է և չի փոխի իր միտքը, «Դու հանդիսանում ես հավերժ քահանա Մելիքսեդեքի հրամանից հետո»»։ (Սաղմոսներ 110:1-4)

Եզրից եզրի քահանա Իբրահիմ Սաիդը ասում է.

«Յուրաքանչյուրը, ով ընթերցելով Սաղմոս 110 –ը և համոզված չէ Հիսուսի Աստվածայնությանը, հանդիսանում է երկուսից մեկը: Կամ նա անգրաճանաչ և տգետ է, ում աչքերը քողարկված են հիմարաբար, այնպես, որ նա ի վիճակի չէ տեսնել, կամ նա ամբարտաճան է, ում սիրտը

լցված է համառությամբ և նա ցանկություն չունի տեսնելու»:⁷

Գոյություն ունի ևս մեկ այլ հատված, որը ըստ նրանց համոզմունքի հանդիսանում է Հիսուսի Աստվածայնության ապացույցը: Գիրք Եսայի 7:14 ասում է. «Ուստի ինքը, Տերը կտա ձեզ նշան, ահա կույսը կբեղմնավորվի և կծնի որդի և կկոչի Էմմանուել»: «Էմմանուել» նշանակում է «Աստված մեզ հետ»:

Նրանք հավատք են ընծայում, որ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ծնունդը հանդիսանում է այս մարգարեության լրացումը, քանի որ հրեշտակը գուշակեց Մարիամի փեսացուին, հյուսն Հովսեփին.

«Նա կծնի որդի և դուք կկոչեք նրան Հիսուս, քանի որ նա կփրկի իր ժողովրդին իրենց մեղքերից: Այս ամենը տեղի ունեցավ, որպեսզի լրացվի այն, ինչ Տերը ասել է մարգարեի միջոցով. «Ահա, կույսը կբեղմնավորվի և կծնի որդի և նրանք կկոչեն նրան Էմմանուել, որը նշանակում է Աստված մեզ հետ (Մատթեոս 1:18-23) Ըստ Քրիստոնյաների, նրան Էմմանուել կոչելը, «Աստված մեզ հետ» հանդիսանում է նրա աստվածայնության վկայությունը:

Ի լրացում, նրանք ներկայացնում են Նոր Կտակարանի Պողոսի, Թոմասի և Պետրոսի խոսքերը ,որոնք կապված են այս խնդրի հետ: «Քանի որ մարմինը Ջրիստոս է, ով Աստված է ամենից վեր, օրինյալ հավերժ»: (Հռոմեացիներ 9:5)

«Թոմասը պատասխանեց և ասաց նրան. «Իմ Տեր և իմ Աստված»»: (Հովհաննես 20:28)

«Այնուհետ Պետրոսը վերցրեց նրան և սկսեց հանդիմանել ասելով. «Հեռու լինի քեզանից, Տեր. Թող այս երբեք չկատարվի քեզ հետ»: (Մատթեոս 16:22)

⁷ Ղուկասի Ավետարանի Մեկնաբանություն, Իբրահիմ Սափիդ, Էջ.504

«Ինչ վերաբերում է խոսքին, որ նա ուղարկել է Իսրայել, քարոզելով խաղաղության ավետիս Զիսուն քրիստոսի միջոցով, (նա ամենի Տերն է)»: (Գործք 10:36)

Հայտնության մեջ գոյություն ունի մեկ այլ հատված. «Քանի որ տերերի Տերն է և արքաների Արքան»: (Հայտնություն 17:14)

ԱՆՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՆՐԱՆՑ ԿՐՈՂՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՑՈՒՅՑԸ

Այս խոսքերից ոչ մեկը Զիսունսին (Խ.Ա.Ռ.Ն) աստված չի դարձնում: Այս խոսքերից շատերը կիրառում են որպես միայն անուններ և եթե որևէ մեկի անունը աստված է, դա նրան այդպիսին չի դարձնում: Ըստ Նոր Կտակարանի, մարդիկ Պողոսին և Բարնաբային կոչեցին աստվածներ, երբ նրանք հրաշքներ գործեցին: «Եվ երբ ամբոխները տեսան, թե ինչ արեց Պողոսը, նրանք բարձրացրեցին իրենց ձայները, ասելով Լիկայոներեն. «Աստվածները իջել են մեզ մարդկանց կերպարանքով»»: (Գործք 14:11)

Հռոմեացիները սովորություն ունեին աստված անվանել այն մարդկանց, ովքեր որևէ բարիք են գործում իրենց ժողովրդին: Սա չի փոխում փաստը, չի փոխում արարածին արարչի և չի փոխում մահկանացու ծառաներին անմահ աստվածների:

Իսմայել նշանակում է «Աստված լսում է», Հովակիմ նշանակում է «Աստված բարձրացրել է» և Օսեե «Աստված փրկեց»: Չնայած իրենց տվյալ անունների, այս մարդիկ աստվածներ չեն:

Մենք ընթերցում ենք Հայտնության Գիրքը. «Նա, ով նվաճում է, ես կդարձնեմ նրան իմ Աստծո տաճարի սյունը: Նա երբեք դուրս չի գա այնտեղից և ես կգրառեմ նրան իմ Աստծո անունը և իմ Աստծո քաղաքի անունը, Նոր Երուսաղեմ, որը ելնում է իմ Աստծուց երկնքից և իմ իսկ Նոր անունից»: (Հայտնություն 3:12) Եվ Թվերի գիրքը ասում է. «Եվ նրանք

հարայելի զավակներից վեր կդասեն իմ անունը»: (Թվեր 6:27), սակայն նրանք աստվածներ չեն:

ԱՐԴՅՈ՞Ք ԶԻՍՈՒՄԻ (Խ.Ա.ՈՆ) ԱՆՈՒՆԸ «ԱՍՏՎԱԾ» ԷՐ

Մահմեդականները չեն ընդունում այս հատվածներից շատերը, որոնք ըստ Նոր Կտակարանի, ճշմարիտ կերպով եկել են Զիսուսի (Խ.Ա.ՈՆ) աշակերտներից: Նրանք նույնպես հավատք են ընծայում, որ Քրիստոսյանները դիտավորյալ կեղծել են այս հատվածները, ինչպես մենք տեսնում ենք Զովհաննես 5:7 առաջին նամակի մեջ: Կեղծիքի և աղավաղման հետևանք կարող է լինել նաև ոչ ճշգրիտ թարգմանությունը:

Մեծատառ «Տեր» բառը, որը մենք կարող ենք գտնել Սուրբ Աստվածաշնչի թարգմանությունների մեջ, սովորաբար խառնում են 'Աստված' բառի հետ, սակայն մենք գտնում ենք, որ որոշ անգլերեն թարգմանություններ կիրառում են փոքրատառ 'տեր' բառը, որն էլ նշանակում է 'Վարպետ' կամ «Պարոն»: Ֆրանսիական թարգմանություն մեջ նրանք կիրառում են «Լե մեյթ» բառը, որը նշանակում է «ուսուցիչ» և նույնը կարելի է ասել գերմաներեն, իտալերեն և իսպաներեն թարգմանությունների մասին:

Արաբերեն «Ռաբ» բառը, նոր չէ, այն հանդիսանում է Արամերեն «Ռաբբի» բառը, որն էլ իր հերթին հանդիսանում է Զիսուսի (Խ.Ա.ՈՆ) և նրա ժամանակակիցների արամերեն լեզուն: «Ռաբբի» բառը կիրառում են ուսուցչի կամ վարպետի հարգալից դիմում:

Զովհաննեսի Ավետարանը նշում է, որ աշակերտները սովորություն ունեին Զիսուսին կոչել «Ռաբբի» կամ «Ռաբբունի» որտեղ նրանք նկատի ունեին ուսուցիչ: Մարիամ Մագդաղենացին շրջվեց դեպի Զիսուսը (Խ.Ա.ՈՆ) և ասաց. «Ռաբբունի, այսինքն Տեր... Մարիամ Մագդաղենացին եկավ և ասաց աշակերտներին, որ նա տեսել է Տիրոջը» (Զովհաննես 20:16-17) մեկ այլ հատվածի մեջ երկու

աշակերտները նրան կոչեցին «Ռաբբի» որը նշանակում է ուսուցիչ»։ (Յովհաննես 1:38)

Դիմելով Յիսուսին (Խ.Ա.Ո.Ն), աշակերտներից ոչ մեկը երբեք ի նկատի չի ունեցել «Աստված»։ Նրանք նկատի ունեին ուսուցիչ կամ վարպետ։ Ուստի, նրանք Յիսուսին (Խ.Ա.Ո.Ն) համարեցին Յովհաննես Մկրտիչը, երբ նրանք ասացին. "Տեր, ուսուցանիր մեզ աղոթք, ինչպես Յովհաննեսը ուսուցանեց իր աշակերտներին»։ (Ղուկաս 11:1)

Նույնպես Յունարենում կիրառելի էր «տեր» բառը, որը նշանակում էր վարպետ։ Ստեֆան Նեյլը ասում է. «Բնօրինակ հունարեն բառը, որը նշանակում է «Վարպետ» կարելի է կիրառել որպես հարգանքի նշան։ Բանտի հսկիչը խոսեց Պողոսի և Սիլասի հետ կոչելով նրանց ռաբբի կամ վարպետ։ «Եվ դուրս բերելով նրանց, նա ասաց. Վարպետներ, ի՞նչ պետք է ես անեմ, որպեսզի արժանի լինեմ փրկության։ Եվ նրանք ասացին. Հավատք ընծայիր Տեր Յիսուս Քրիստոսին և դուք կարժանանաք փրկության և ձեր տան»։ (Գործք 16:30) և այս խոսքը հանդիսանում է պատվի խոսք»։

Պողոսի խոսքերը հանդիսանում են այս բացատրության ապացույցը, երբ նա նկարագրում է Յիսուսին (Խ.Ա.Ո.Ն) որպես «Ռաբբի» տեր, սակայն նա իրեն համարում է Ամենաբարձրյալ Ալլահի ծառա։ «Որպեսզի մեր Տեր Յիսուս Քրիստոսի Աստվածը, փառքի Հայրը, տա ձեզ իմաստության ոգի և հայտնություն իր գիտության»։ (Եփես.1:17)

Թմասի պատասխանը չի հանդիսանում է Յիսուսին (Խ.Ա.Ո.Ն) ուղղված խոսքը։ Երբ նա կենդանի տեսավ Յիսուսին (Խ.Ա.Ո.Ն) այն բանից հետո, երբ կարծում էր որ նա կնքել է մահկանացուն, նրա համար մեծ զարմանք էր, այսպիսով նա բացականչեց «Իմ Տեր և իմ Աստված»։ (Յովհաննես 20:28)

Որոշ թարգմանությունների մեջ այս իմաստը անհասկանալի է, սակայն այն ակնհայտ է, Յունական բնօրինակի մեջ։ Յունական ձեռագրերի մեջ մենք գտնում

ենք, այսպիսի խոսքեր. «ափոք-ռեե-նում-ահիի» որը նշում է նրա արձագանքը:

Այս բացատրությանը ապացույց է հանդիսանում, երբ մինևույն հատվածի մեջ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասաց, որ նա կհամբարձվի իր Աստծո մոտ: (Հովհաննես 20:17) Եթե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ի վիճակի լիներ ընկալել Թոմասի խոսքերը, որպես իր աստվածայնության իմաստ, նա չէր ընդունի դա: Նա մերժեց իրեն կոչել բարի, երբ նրա աշակերտը կոչեց նրան այդպես, նա պատասխանեց. «Ինչու՞ ես դու ինձ բարի կոչում: Ոչ ոք բարի չէ բացառությամբ մեկի, Աստծո»։ (Մատթեոս 19:17): Եթե այդպես է, ապա ինչպե՞ս էր նա կարող ընդունել, որ ինչ որ մեկը իրականում նրան կոչի Աստված:

Ըստ Սաղմոսների (110:1), այն նկատի չունի Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն), այլ գալիք մեսսիային, ում սպասում էին Հրեաները, որն էլ հանդիսանում էր Մարգարե Մուհամմեդը:

Պետրոսը սխալվեց, երբ համարեց, որ հատվածը վերաբերում է Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն), նա ասում է. «Քանի որ Դավիթը չի ելել երկինքներ, նա ինքը ասել է. ««Տերը ասել է իմ Տիրոջը, Նստիր իմ աջ ձեռքի մոտ, մինչ ես քո թշնամիներին դարձնեմ քո ոտքերի տակ»։ Թող Իսրայելի ամբողջ տունը, ուստի, անշուշտ տեղյակ լինի, որ Աստված նրան դարձրել է և Տեր և Քրիստոս, այն Քրիստոսը, ում դուք խաչեցիք»։ Այժմ, երբ նրանք լսեցին սա, նրանց սրտերը կոտրվեց»։ (Գործք 2:34-37)

Պետրոսի և հետագայում Քրիստոնյաների սխալը այն է, որ Հիսուսը ժխտեց, որ նա է գալիք մեսսիան, ում նշել էր Դավիթը: «Մինչ Փարիսեցիները հավաքվել էին միասին, Հիսուսը նրանց հարց տվեց ասելով. Ի՞նչ եք դուք կարծում Հիսուսի մասին, ում սպասում էին Հրեաները: Ու՞մ որդին է Նա: Նրանք ասացին նրան, Դավթի որդին: Նա ասաց նրանց, ինչպես է այդ դեպքում Դավիթը, ոգով, կոչում նրան Տեր, ասելով Տերը ասաց իմ Տիրոջը, Նստիր իմ աջ ձեռքի մոտ, մինչ ես դարձնեմ քո թշնամիներին քո ոտքերի մոտ: Եթե Դավիթը իրեն կոչում է Տեր, ինչպե՞ս կարող է նա լինել նրա

որդին: Եվ ոչ ոք չի կարող նրան որևէ բառ պատասխանել, ոչ էլ այդ օրը որևէ մեկը համարձակություն կունենա ավելի շատ հարցեր տալ նրան»: (Մատթեոս 22:41-46)

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հրեաներին հարցրեց գալիք մեսսիայի մասին, ում մարգարեացրել էին Դավիթը և այլ մարգարեները: «Ի՞նչ եք դուք կարծում Քրիստոսի մասին: Ու՞մ որդին է նա: Նրանք պատասխանեցին նրան, Դավթի որդին»: Նա ցույց տվեց նրանց, որ սխալվում են և ասաց. «Եթե Դավիթը, կոչում է նրան Տեր, ինչպե՞ս է նա նրա որդին»:

Մարկոսը նույնպես նշեց այդ. «Ինչպե՞ս են կարող դպիրները ասել, որ Քրիստոսը Դավթի որդին է: Դավիթը ինքնին Սուրբ Հոգու մեջ հայտնեց. «Տերը ասաց իմ Տիրոջը, Նստիր իմ աջ ձեռքի մոտ, մինչ ես դնեմ քո թշնամիներին քո ոտքերի տակ: Դավիթը ինքը իրեն կոչեց Տեր: Այսպիսով, ինչպե՞ս է նա նրա որդին»»: (Մարկոս 12:35-37)

Նույնը մենք կարող ենք գտնել Ղուկասի մեջ: «Ինչպե՞ս են նրանք կարող ասել, որ Քրիստոսը Դավթի որդին է: Քանի որ Դավիթը ինքը ասաց Սաղմոսների Գրքի մեջ. «Տերը ասաց իմ Տիրոջը, Նստիր իմ աջ ձեռքի մոտ, մինչ ես քո թշնամիներին դնեմ քո ոտքերի մոտ»: Դավիթը, ուստի, կոչում է իրեն Տեր, այսպիսով ինչպե՞ս է նա իր որդին»»: (Ղուկաս 20:40-44)

Այս սպասելիք մեսսիան Դավթի ժառանգներից չէ, սակայն ըստ Մատթեոսի և Ղուկասի ծագումնաբանության, Քրիստոնյաները հավատք են ընծայում, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) Դավթի ժառանգներից է: Արդյո՞ք Քահանա Իբրահիմ Սաղը դեռ պնդում է, որ մենք այդչափ անգրաճանաչ և անպատասխանատու թեկնածուներ ենք, որովհետև մենք ասում ենք, որ այդ հատվածը Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) համար չէ:

Ինչ ասում է Եսային Էմմանուելի մասին, այն Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) համար չէ, քանի որ դա երբեք նրա անունը չէր և ոչ ոք նրան երբեք այդպես չեն կոչել: Եսայու գրքի պատմությունը խոսում է մի իրադարձության մասին, որը

տեղի է ունեցել Հիսուսից (Խ.Ա.Ռ.Ն) դարեր առաջ, երբ Ռոսին, Եղովի արքան, ով դավադրել էր Հյուսիսային Իսրայելի Թագավորության արքա Ֆաբահի իբն Ռամիլիայի հետ, ընկնում Հյուսիսային Արքայության և Արքա Ահազի:

Էմմանուելի ծնունդը հանդիսանում էր Ամենաբարձրյալ Ալլահի Հուդայի Արքայության պատժի ավարտի նշանը, Ռոսինսի և Ֆաբահի Արքայությունների կործանումը և երկու արքաների մահը Ասորացիներից:

Եսային ասում է. «Կրկին, Տերը խոսեց Ահազի հետ... Ուստի, Տերը ինքը կտա քեզ նշան: Ահա, կույսը կբեղմնավորվի և կծնի որդի և կկոչի նրան Էմմանուել: Նա կսնվի կաթնաշոռով և մեղրով, երբ նա կգիտակցի, թե ինչպես ժխտել չարիքը և ընտրել բարիքը: Սակայն, մինչ տղան կգիտակցի թե ինչպես ժխտել չարիքը և ընտրել բարիքը, երկիրը, որի երկու արքաներին դու սարսափեցրել ես, կամայանա: Տերը կբերի քեզ և քո ժողովրդին և քո հոր տանը նմանատիպ օրեր, որը չի եկել մինչ այն օրը, երբ Եփրահիմը հեռացավ Հուդայից, Ասորեստանի արքայից»: Այդ օրը Տերը կսուլի ճանճին, որը գտնվում է Եգիպտոսի հոսանքներում և մեղվին, որը Ասորեստանի հողերում է»: (Եսայի 7:10-18)

«Այնուհետ, Տերը ասաց ինձ. «Վերցրու մեծ հուշատախտակ և գրառի մարդու գրչով, Մահեր- շալալ- հաշբազ... և նա բեղմնավորվեց և ծնեց որդի»: Այնուհետ Տերը ասաց ինձ. 'Անվանիր նրան Մահեր-շալալ-հաշբազ; քանի որ մինչ տղան տեղյակ էր ինչպես կոչել «Իմ հայր» կամ «Իմ մայր» Դամասկոսի հարստությունը և Սամարիայի ավարը կկրեն Ասորեստանի արքայից»: (Եսայի 8:1-4)

Ակնհայտ է, որ այս հատվածը վերաբերում է Պաղեստինի Ասորական նվաճմանը, որը տեղի ունեցավ Հիսուսից (Խ.Ա.Ռ.Ն) դարեր առաջ: Այդ ժամանակաընթացքում ծնվեց տղան, նրա հայրը կոչեց նրան ի պատիվ Արքա Ահազի հաղթանակի, որն է «Մահերշալալհաշբազ», որը նշանակում է «Սլանալ թալանի և կողոպուտի» «Որովհետև Աստված նրա հետ է»:

Այս մարգարեությունը իրականացավ և Արքա Ահազը հաղթանակ տարավ, երբ եկավ Ասորեստանի արքան և գերեվարեց երկու դավող արքաներին: «Տերը, կրկին խոսեց ինձ հետ. ... ուստի, ահա, Տերը նրանց դեմ է բերում Գետի ջրերը, հզոր և շատ, Ասորեստանի արքայի և նրա ամբողջ փառքի դեմ: Եվ այն դուրս կգա իր բոլոր նեղուցներից և իր բոլոր ափերից և կանցնի Զուդա, այն դուրս կգա և կանցնի, հասնելով Նույնիսկ պարանոցը և տարածվող թևերը կլրացնեն քո երկիրը, օվ Էմմանուիլ»: Կոտրվեք դուք ժողովուրդներ և փշրվեք, ականջ դրեք, բոլորդ հեռու եք երկրներից, ժապավենեք ձեր գենքն ու զրահը և փշրվեք: Պահեք ժողովը միասին, սակայն այն կվերադառնա ոչնչի, խոսք ասեք, սակայն այն չի կանգնի, քանի որ Աստվածը մեզ հետ է»: (Եսայի 8:5-10)

Այստեղ ես պետք է նշեմ, որ Ղուկասի հեղինակը Եսայու գրքից կեղծ հատված կիրառեց: Ոչ հին Եբրայերեն բնօրինակների, ոչ էլ Թորայի հին թարգմանության մեջ, մենք չենք գտնում «բիթուլաի» բառի, որը թարգմանաբար նշանակում է «կույս» որևէ հետք, որը հայտնագործել և կեղծել են Տասնյոթ Թարգմանության հեղինակները և որը հետագայում կրկնօրինակել են ավետարանականները, քանի որ այն հարմար էր նրանց:

Երկրորդ դարին պատկանող 'Եթօելա, Թեհօթօշեն և սեմական «թարգմանությունները հանդիսանում են «Ալմա», որը նշանակում է «Երիտասարդ կին»:⁸ 1952 թվականի Վերանայված Տիպական Տարբերակի մեջ խմբագիրները փոփոխել են «Կույս» բառը «Երիտասարդ Կնոջ», սակայն միայն անգլերեն թարգմանության մեջ:⁹

⁸ Հին Կտակարանի Ներածություն, Դոկ. Սամուել Յուսուֆ Էջ.260

⁹ Քրիստոնյա Գաղափարախոսության Պատմությունը, Հաննա Յերջեսս Ելխոդարի, հատոր. 1 Էջ. 175 Արդյո՞ք Աստվածաշունչը Աստծո խոսքն է: Ահմեդ Դիդաթ Էջ.24-25

Եսայու հատվածի մեջ գտնվող անուններից ոչ մեկը չեն պատկանում Զիսուսին (Խ.Ա.Ո.Ն): (Եսայի 9:6) «Քանի որ մեզ համար մանուկ ծնվեց, մեզ որդի տվեցին և կառավարումը կլինի նրա ուսերին և նրա անունը կլինի Զոյակապ, Խորհրդատու, Իզոր Աստված, հավերժ Զայր, Խաղաղության Արքայազն»: (Եսայի 9:6)

Որտե՞ղ և ե՞րբ են նրան կոչել հոյակապ, խորհրդատու, Իզոր, հավերժ Զայր, կամ Խաղաղության Արքայազն: Ամբողջ Աստվածաշնչի մեջ գոյություն չունի ոչ մի հատված, որը կարող է ապացուցել դա:

Եթե Քրիստոնյաները ասեն, որ այս ամենը հանդիսանում է Զիսուսի (Խ.Ա.Ո.Ն) բնութագիրը, ոչ թե անունները, մենք նույնպես կարող ենք ասել, որ ամեն դեպքում, այս տիտղոսները նրա համար չեն: Այս բնութագրերը խոսում են հաղթական արքայի մասին, ով կկառավարի իր ժողովրդին և կժառանգի Դավիթի արքայությունը, որը, ըստ փաստերի և Ավետարանների հատվածների, բավական հեռու է Զիսուսից (Խ.Ա.Ո.Ն): Զիսուսը (Խ.Ա.Ո.Ն) մեկ օր անգամ չի հանդիսացել իր ժողովրդի Արքան: Զակառակը, Նա փախչում, վախենում և մտահոգվում էր հրեաներից: Նա նույնիսկ լքեց երկիրը, երբ նրա ժողովուրդը ցանկություն հայտնեցին նրան արքա օծել: «Այնուհետ տեղեկանալով, որ նրանք գալիս են և ուժի օգնությամբ ցանկանում են նրան արքա դարձնել, Զիսուսը ինքը կրկին հեռացավ լեռները»: (Յովհաննես 6:15)

Նա հեռացավ, որովհետև նրա արքայությունը այս աշխարհում չէ և ոչ էլ Դավթի գահին, այլ հոգևոր արքայությունը հանդերձյալ կյանքում: «Զիսուսը պատասխանեց. «Իմ արքայությունը չի պատկանում այս աշխարհին: Եթե այդպես լիներ, իմ հետևորդները կպայքարեին, որպեսզի չհանձնեին ինձ Զրեա առաջնորդներին:Ոչ, իմ արքայությունը չի պատկանում այս աշխարհին»»: (Յովհաննես 18:36)

Ի լրացում, Եսային խոսեց Խաղաղության Արքայազնի մասին, որը չի կարող վերաբերվել Զիսուսին, որովհետև Ավետարանները նրա մասին նշում են հակառակը: «Մի

կարծեք, որ ես եկել եմ խաղաղություն բերել երկրի վրա: Ես չեմ եկել խաղաղություն բերելու, այլ սուր: Քանի որ ես եկել եմ, որպեսզի տղամարդուն դեմ հանեմ իր հոր դեմ, դստերը իր մոր, և հարսին ըննդեմ սկսուրի: Եվ անհատի թշնամիները կլինեն նրա իսկ ընտանիքից» (Մատթեոս 10:34 -36) Արդյո՞ք այս Ավետարանի Յիսուսը կարող է լինել խաղաղության արքայազնը:

Բացի այդ, Եսային խոսում է գործունակ անձի, այլ ոչ թե անգործույթյա մեկի մասին, ով ինքը չի կարող որևէ բան անել: «Ես ինքս ոչինչ չեմ կարող անել, ինչպես ես լսում եմ, ես դատում եմ»: (Հովհաննես 5:30)

«Իրոք, իրոք, ես ասում եմ ձեզ, Որդին չի կարող իր իսկ հայեցողությամբ որևէ բան անել, այլ միայն այն, ինչ նա տեսնում է իր Հորից: Քանի որ, ինչ որ անում է Հայրը, նույնը կրկնում է Որդին»: (Հովհաննես 5:19)

ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ և ՏԵՐՈՒՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԱՍՏՎԱԾԱՆԶԻ ՄԵՋ

Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) «տեր» կամ «աստված» կոչելը չի հանդիսանում նրա աստվածայնության վկայությունը, քանի որ Սուրբ Աստվածաշունչը հաճախ է կիրառում այն: Սուրբ Աստվածաշունչը կիրառում է այս երկու բառերը որպեսզի անվանի արարածներին, որոնց մեջ են նաև հրեշտակները:

Դատավորաց Գրքի մեջ մենք ընթերցում ենք. «Տիրոջ հրեշտակը այլևս չերևաց Մանուահին և նրա կնոջը: Այնուհետ Մանուահը տեղեկացավ, որ նա հանդիսանում է Տիրոջ հրեշտակը: Եվ Մանուահը ասաց իր կնոջը. «Մենք անշուշտ մահկանացուն կկնքենք, քանի որ մենք տեսել ենք Աստծուն»»: (Դատավորաց 13:21-22), սակայն նա նկատի ուներ «Ամենաբարձրյալ Ալլահի հրեշտակին»:

Ամենաբարձրյալ Ալլահի հրեշտակը երևաց Սառային և ավետեց Իսահակին: «Եվ Տիրոջ հրեշտակը ասաց նրան...նա

կոչեց Տիրոջ անունը, ով խոսեց նրա հետ, «դու տեսանելի Աստվածն ես»: (Ճննդոց 16:11-13)

Մեկ այլ օրինակ առկա է Ելք Գրքի մեջ, որը խոսում է հրեշտակի մասին, ով ուղեկցեց Իսրայելցիներին, երբ նրանք հեռացան Եգիպտոսից: Եվ հատվածը նրան աստված կոչեց: «Եվ Տերը գնաց նրանց առջևից մեկ օր ամպի վրա, որպեսզի ուղղորդի նրանց և գիշերը կրակի սյունով, որպեսզի լույս տա նրանց, որպեսզի նրանք ի վիճակի լինեն ճանապարհորդել գիշեր և ցերեկ... Եվ Աստծո հրեշտակը, որը գնում էր Իսրայելի ճամբարի առջևից, հեռացավ և գնաց նրանց ետևից և ամպի սյունը անցավ նրանց առջևից և կանգնեց նրանց ետևում»: (Ելք 13:21,14:19)

Նույնպես, Թորան այս անունները տալիս է մի քանի մարգարեներին, սակայն այն նկատի չունի խոսքի իրական իմաստը: Ամենաբարձրյալ Ալլահը խոսեց Մովսեսի հետ Ահարոնի մասին. «Նա քեզ համար կլինի շուրթեր և դու նրա համար կլինես Աստծո պես»: (Ելք 4:16) (Անգլիական Տիպական Տարբերակ) «Եվ Տերը ասաց Մովսեսին, տես ես քեզ դարձրել եմ աստված Փարավոնի համար և Ահարոնը, եղբայրդ, կլինի քո մարգարեն»: (Ելք 7:1)

Փոխաբերական իմաստով Թորան Մարգարեներին կոչում էր Աստվածներ, որը նշանակում է «Աստծո մարգարեներ», ինչպես նշել է Դատավորաց Գ գիրքը.»

Նախկինում, Իսրայելում, երբ որևէ մեկը գնում էր հայցելու Աստծո իրավունքը, նա ասում էր. «Եկեք գնանք տեսնողի, (գուշակի) մոտ» քանի որ մերօրյա «մարգարեին» կոչում են տեսնող»: (Թագավորաց 19:9)

Թորան նույնպես նշում է «Աստված» բառը և այն վերաբերվում է Դատավորներին, որովհետև նրանք դատում են ըստ Ամենաբարձրյալ Ալլահի Օրենքի: «Սակայն, եթե ծառան առարկելով ասի... ապա, նրա տերը պետք է բերի նրան դեպի Աստվածը և պետք է բերի նրան դեպի դուռը»: (Ելք 21:5-6)

Նույն գրքի հաջորդ հատվածի մեջ, մենք ընթերցում ենք. «Եթե Գողին չգտնենք, տան տերը պետք է գա Աստծո մոտ ցույց տալու, թե արդյոք նա իր ձեռքը դրել է իր հարևանի ունեցվածքի վրա... Նրան, ում դատապարտում են, պետք է վճարի կրկնակին իր հարևանին»: (Ելք 22:8-9)

Օրինաց Գրքի մեջ մենք ընթերցում ենք. «այնուհետ, վեճերի երկու կողմերն էլ պետք է հայտնվեն Տիրոջ առջև, քահանաների առջև»: (Օրինաց 19:17)

Սաղմոսների Գրքի մեջ. "Աստված կանգնում է Աստծո ժողովին, Նա դատում է աստվածներին: Որքա՞ն ժամանակ դուք պետք է դատեք անարդար և հարգեք թույլ մարդկանց:" (Սաղմոսներ 82:1) Ակնհայտ է, որ այս հատվածը խոսում է Դատավորների և առաքինի Իսրայելցիների մասին:

Ըստ Սաղմոսների, այս բառի կիրառությունը ավելի է տարածվել, որպեսզի կոչ անի Իսրայելցիներին: «Ես ասում եմ և դուք բոլորդ հանդիսանում եք Ամենաբարձրյալի որդիները: Այնուամենայնիվ, դուք կկնքեք մահկանացուն ինչպես մարդիկ»: (Սաղմոսներ 82:6) Այս հատվածը այն է, ինչ մեջ է բերել Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) երբ խոսել է Հրեաների հետ: «Հիսուսը պատասխանեց նրանց, արդյո՞ք սա չի գրառվել ձեր օրենքի մեջ, Ես ասում եմ, դուք աստվածներ եք: Եթե նա նրանց համարում է աստվածներ, ում համար է հերքել Աստված բառը և գիրը, Ասում եմ նրան, ում Հայրը սրբացրել է և ուղարկել է աշխարհ, դուք անարգողներ, որովհետև ես ասում եմ, Ես Աստծո որդին եմ»: (Հովհաննես 10:34)

Սուրբ Գրքերը շարունակում է այսպես անվանել նույնիսկ սատանաներին և ժողովրդի կեղծ աստվածներին: Պողոսը սատանային կոչում է ոչ միայն աստված, այլև ստամոքս: Սատանային նա ասում է. «Ում այս աշխարհի աստվածը կուրացրել է նրանց մտքերը, ովքեր չեն հավատացել, ոչ թե Քրիստոսի փառահեղ ավետարանի լույսը»: (Կորնթացիներ 2:4)

Նա դիմում է այն մարդկանց, ովքեր հետևում են իրենց ցանկություններին. «ում Աստվածը նրանց ստամոքսն են և ում փառքը իրենց ամոթի մեջ է»: (Փիլիպացիներ 3:19)

Նույնը մենք գտնում ենք Սամոսների մեջ: «Քանի որ, ես տեղյակ եմ, որ Տերը մեծ է և որ մեր Տերը վեր է բոլոր աստվածներից»: (Սաղմոսներ 135:5)

Ստամոքսի աստվածայնությունը և ամենը ուղղակի փոխաբերական են և ոչ թե իրական:

«Հավատքի սկզբունքների Բացատրություն» գրքի մեջ հեղինակը գրառում է. «Աստված ինքը Մովսեսին աստված կոչեց, քանի որ նա գործում էր Աստծո կողմից և ոչ թե այն պատճառով, որ նա աստվածային էր: Նույնը վերաբերում է Դատավորներին, որովհետև նրանք դատում են ըստ Աստծո օրենքի: Ստամոքսը, արձանները և գումարը, կոչել են որպես այդպիսին, որովհետև ոմանք այն համարել են աստվածներ և սատանային կոչել են աստված, որովհետև նա կառավարում է աշխարհը»:¹⁰

Սա հանդիսանում է Սուրբ Աստվածաշնչի լեզուն և արտահայտման ձևը, նա, ով պնդում է գրականորեն ընդունել խոսքերը, սխալվում է: Վերոհիշյալ տեղությունը ուղղակի փոխաբերական է, որն էլ վերաբերում է նաև Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն):

Իր «Պատվական Սուրբ Աստվածաշնչի հայցողների ուղեցույց» գրքի մեջ Դոկ. Սամաան Կահլուն գրառում է. «Սուրբ Աստվածաշնչի արտահայտությունները բավականին փոխաբերական են և առեղծվածային, մասնավորապես Հին Կտակարանի մեջ»:

Նա նույնպես գրառում է. «Նոր Կտակարանի արտահայտությունները բավական փոխաբերական են, առանձնապես «մեր Փրկիչ խոսքերը» և շնորհիվ որոշ

¹⁰ Հավատքի Բացատրության Իմաստը. Դոկ. Քահանա Անդրյու Ուաթսոն և Դոկ. Քահանա Իբրահիմ Սաիիդ էջ.44

քրիստոնյա ուսուցիչների կիրառած գրական մեկնաբանական մեթոդների, տարածվել են այս կեղծ և կոռումպացված կարծիքների մեծամասնությունը...»:¹¹

Ի լրացում, երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) լսեց այս փոխաբերական աստվածների մասին, նա հայտնեց, որ գոյություն ունի միայն Մեկ ճշմարիտ Աստված, ով Ամենաբարձրյալ Ալլահն է, նա ասում է. «Եվ, հավերժ կյանքը այն է, որ նրանք ճանաչում են քեզ միակ ճշմարիտ Աստծու և Հիսուս Քրիստոսին, ում դու ուղարկել ես»: (Հովհաննես 17:3), որը ակնհայտ նշանակում է, որ կարելի է վաստակել երկինք և հավերժ կյանք վկայելով, որ Ամենաբարձրյալ Ալլահը Մեկն է և որ Հիսուսը նրա մարգարեն է և բոլոր մահմեդականները հավատք են ընծայում դրան:

¹¹ Հայտնված ճշմարտությունը, Ռահմաթուլլահ Ալ Հինդի հատոր 3 էջ.702

2 – ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ՈՐՈՒՔ ՀԻՍՈՒՄԻՆ (Խ.Ա.Ո.Ն.) ԿԵՐԱԳՐՈՒՄ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՈՐԴԻՈՒԹՅՈՒՆ

Ավետարանները Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն.) մասին խոսում են որպես Աստծո Որդու և Քրիստոնեյաները համարում են, որ սա հանդիսանում է նրա աստվածայնության վկայությունը: Արդյո՞ք այս եզրակացությունը ճիշտ է և ո՞րն է «Աստծո Որդու» իմաստը:

ԱՐԴՅՈ՞Ք ՀԻՍՈՒՄԱՆ (Խ.Ա.Ո.Ն.) ԻՐԵՆ ԿՈՉԵԼ Ե «ԱՍՏԾՈ ՈՐԴԻ»

Առաջին խնդիրը, որը մենք պետք է հաշվի առնենք այն է, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն.) իրեն չի կոչել «Աստծո Որդի», բացառությամբ մեկ անգամ (Հովհաննես 10:36) Այլ Ավետարանների հատվածները նույնպես ասում են, որ նրա աշակերտները և ժամանակակիցները ասել են դա: Սա է հանդիսանում որոշ գիտնականների կասկածը, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն.) կամ նրա աշակերտները իրոք կրկնել են այս խոսքերը:¹²

¹² Այս առումով, հայտնի Գերմանացի գիտնական Փֆայդերը խոսում է իր գրքի մեջ վաղ Քրիստոնեության մասին, «առաքյալների պատմությունների մեջ, ինչպես բոլոր հին աշխարհիկ պատմաբանների այս ճամբերը հանդիսանում են ազատ ստեղծագործություններ, որտեղ հեղինակը խոսում է իր հերոսի մասին այնպես, ինչպես նա է կարծում, ելնելով տվյալ իրադրությունից»: Կաուլթսկի, Կարլ, Քրիստոնեության Հիմնադրամ 1908 էջ.22

Իր «Սուրբ Մարկոս» գրքի մեջ, Նայնհամը ասում է. «Յուդաբանչյուրը, ով քննադատորեն է մոտենում Հիսուսի տարբեր ժամանակակից «կյանքերին», իրենց բազմազան պատկերացումներով, կարող են գիտակցել, թե որքան մեծ է

Աստվածաշնչի ընթերցումից հետո գիտնականները նկատել են, որ մարգարեները և այլոք կիսում են հրաշքների ներկայացման Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) հզորությունը, սակայն Քրիստոնյաները նրանց աստվածային չեն համարում: Սա նշում է, որ այս հրաշքները հանդիսանում են ապացույց և վկայություն, որ նրանք մարգարեներ են, այլապես Քրիստոնյաները չունեն աստվածայնություն վերագրություն բոլոր նրանց, ովքեր ներկայացնում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն)

Նմանատիպ հրաշքները, որոնք Ամենաբարձրյալ Ալլահը հնարավոր է դարձրել միայն Յիսուսի (Խ.Ա.Ո.Ն) համար:

Ա. ԿՈՒՍԱԿԱՆ ԾՆՈՒՆԴԸ

Յիսուսի (Խ.Ա.Ո.Ն) առանց հոր ծնունդը, հանդիսացավ նրա մեծ հրաշքներից մեկը: Նրանք, ովքեր հավատք են ընծայում նրա աստվածայնությանը, օգտագործում են այն որպես վկայություն: Յասին Մանսուրը ասում է. «Եթե Յիսուսը ծնված չլիներ կույսից, նա կարող էր միայն մարդ լինել»:²⁷

Փաստացի, Յիսուսը հանդիսանում էր (Խ.Ա.Ո.Ն) ուղղակի մարդ, ինչի ապացույցը որոշ արարածների հրաշքների կիրառությունն էր: Բոլոր արարածների, ներառյալ մարդկանց նախնին, առանց հոր և մոր էր: Ադամի (Խ.Ա.Ո.Ն) արարումը, ով հանդիսանում էր կատարյալ արարած, ավելի հզոր էր, քան Յիսուսի (Խ.Ա.Ո.Ն) արարումը, ով սաղմ էր իր մոր արգանդի մեջ, ծնվել էր և մեծացել:

Անկասկած, առանց հոր ծնունդը հրաշք է, սակայն այն չի նշում աստվածայնությունը: Այդ դեպքում, ըստ այդմ, շատ կենդանիների, Ադամին և Եվային կարող են համարել աստվածային, քանի որ Ադամը ծնվել է առանց հոր և մոր և Եվան եկել է Ադամից առանց մոր:

Ըստ այդմ, Սուրբ Դուրանի մեջ Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Յիսուսի նմանությունը Աստծո առջև նման է Ադամին; Նա արարեց նրան փոշուց, այնուհետ ասաց նրան. «Եղիր» Եվ այն եղավ»: (Սուրբ Դուրան 3:59)

Անկախ Յիսուսի և Ադամի ծննդյան նմանության, Ադամի դիրքը ավելի բարձր է: Ադամը (Խ.Ա.Ո.Ն) չի ծնվել կնոջ արգանդից արյունով, Աստված պատվիրեց հրեշտակներին ծնկի գալ նրա առջև, Աստված ուսուցանեց նրան բոլոր

²⁷ Քրիստոնեությունը առանց Քրիստոսի, Քեմել Սաֆսան Էջ.62. Ճշմարիտ Քրիստոնեությունը, որը ուսուցանել է Յիսուսը, Ալաա Աբու Բաքար Էջ.186

անունները և նրա տունը երկինքն էր: Ի լրացում, Ամենաբարձրյալ Ալլահը ինքը, խոսեց նրա հետ առանց մարգարեի և այլ բաների, որոնք չունեն ոչ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ոչ էլ մյուսները: Ուստի, եթե Ադամը ունի այս բոլոր բնորոշումները, ինչու՞ Քրիստոնյաները նրան աստվածային չեն համարում:

Նույնը վերաբերվում է հրեշտակներին, քանի որ Ամենաբարձրյալ Ալլահը արարեց նրանց առանց հոր և մոր: Նրանք կավից չեն, սակայն Քրիստոնյաները նրանց աստվածներ չեն համարում: Ուստի, կուսական ծնունդը չի կարող հանդիսանալ աստվածայնության վկայություն, նույնիսկ անկախ փաստի, որ այն հանդիսանում է մարդու պատմության եզակի իրադարձություն:

Բ. ՀԱՆԳՈՒՑՅԱԼԻ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՈՒՄԸ

Անկասկած, Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մեծ հրաշքներից մեկը հանդիսանում է հանգուցյալի վերակենդանացումը, որը հաստատում է Ղուրանը և ասում է, որ այն Ամենաբարձրյալ Ալլահից է. «և ես վերակենդանացում եմ հանգուցյալին Աստծո կամոք»: (Սուրբ Ղուրան 3:49)

Ամեն դեպքում, Քրիստոնյաները ժխտում են կապել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) և Ամենաբարձրյալ Ալլահի կամքի հզորությունը և հավատք ընծայել, որ ինքը իր կամոք է գործել: Պատճառներից մեկը նրա (Խ.Ա.Ո.Ն) խոսքերն են. «Քանի որ, ինչպես Հայրը բարձրացնում է հանգուցյալին և կյանք է տալիս նրանց, այսպիսով նաև Որդին է կյանք տալիս նրան, ում ցանկանում է, քանի որ ինչպես Հայրը իր մեջ կյանք ունի, այնպես էլ նա պարգևել է Որդուն կյանք ունենալ իր մեջ»: (Հովհաննես 5/21-26)

Եթե մենք ուշադիր ընթերցենք հատվածը, մենք կարող ենք տեսնել, որ այն խոսում է Ամենաբարձրյալ Ալլահի պարգևների մասին, որը նա տվել է Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն). «Նա պարգևել է Որդուն» որի համար նա չունի որևէ իշխանություն առանց Ամենաբարձրյալ Ալլահի:

Եթե Քրիստոնյաները շարունակեն ընթերցել հատվածը, նրանք կարող են գտնել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ակնհայտ պատասխանը: Նա ասում է. «Ես ինքս ոչինչ չեմ կարող անել»: (Հովհաննես 5/30)

Նա (Խ.Ա.Ո.Ն) շարունակեց և բացատրեց, որ հանգուցյալին վերակենդանացնելու իմ կամքը, կախված է Ամենաբարձրյալ Ալլահի կամքից: «Որովհետև, ես չեմ փնտրում իմ իսկ կամքը, այլ Նրա կամքը, ով ուղարկել է ինձ»: (Հովհաննես 5/30)

Քրիստոնյաները պնդում են, որ հանգուցյալին կյանք տալը հանդիսանում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության վկայությունը և ժխտում են բազմաթիվ հատվածներ, որտեղ արարքները վերագրում են մյուսներին: Այդ դեպքում, ինչու՞ Քրիստոնյաները նրանց աստվածներ չեն համարում:

Իրոք, Քրիստոնյաների խուսափումը աստվածայնությունից կեղծ է համարվում: Եթե Հիսուսը կյանք տար Լազարուսին, (Հովհաննես 11/41-44) ապա, մարգարե Եղիան վերակենդանացրեց այրու որդուն: Թագավորաց Առաջին Գրքի մեջ մենք ընթերցում ենք. «Եվ, նա գոչեց Տիրոջը. «Օվ Տեր իմ Աստված, արդյո՞ք դու աղետ ես բերել նույնիսկ այն այրուն, ում ես այցելել եմ, սպանելով նրա որդուն: Այնուհետ, նա իրեն տարածեց երեք անգամ մանկան վրա և գոչեց Տիրոջը. «Օվ Տեր իմ Աստված, թող նրա զավակի կյանքը կրկին վերադառնա նրան: Եվ Տերը լսեց Եղայի ձայնը: Եվ մանկան կյանքը կրկին վերադարձավ նրան և նա արթնացավ»»» (Թագավորաց Ա 17/20-22) Ուստի, Օսեեն, Սիրաք որդին ասաց նրան. «Ով է բարձրացնում հանգուցյալին»: (Սիրաք 48/5)

Եղիան (Խ.Ա.Ո.Ն) Ամենաբարձրյալ Ալլահի կամքը, նույնպես վերակենդանացրեց երկու հանգուցյալի: Նա նրանցից մեկին վերակենդանացրեց կյանքի ընթացքում, իսկ մյուսին մահից հետո: Նա կյանք տվեց Իսրայելցի կնոջ որդուն, ով եկավ նրա մոտ: (Թագավորաց Բ 4/32-36)

Եղիան (Խ.Ա.Ո.Ն) ոչ միայն վերակենդանացրեց մարդուն, իր կենդանության օրոք, այլև մահից հետո նրա ոսկորները կյանք տվեցին մեկ այլ հանգուցյալի: Այդ հանգուցյալի ազգականները մարդուն դրեցին Եղայի գերեզմանի մեջ: Նա վերակենդանացավ Եղայի ոսկորներին դիպչելուց հետո և նա ոտքի կանգնեց. «Եվ ինչպես մարդուն հուղարկավորեցին, ահա, երևաց մի հրոսակախումբ և տղամարդուն գցեց Եղայի գերեզմանին և երբ տղամարդը դիպչեց Եղայի ոսկորներին, նա վերակենդանացավ և ոտքի կանգնեց»: (Թագավորաց Բ 13/21)

Ես զարմանք եմ ապրում, թե ինչպես են կարող Զրիստոնյաները կիրառել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) հրաշքները, առանձնապես հանգուցյալի հարությունը – որպես աստվածայնության ապացույց, նույնիսկ չնայած նրանք հավատք են ընծայում, որ աշակերտները գործել են նմանատիպ:

Գործք Գրքի մեջ մենք ընթերցում ենք, որ Պետրոսը կյանք է տվել Թաբիթահին նրա մահից հետո, երբ նրա ընտանիքը լվացել էր նրան: «Այժմ, Ջոփիայում գոյություն ունեւ Թաբիթահ անունով մի աշակերտ, որը թարգմանաբար նշանակում է Դորքաս: Այդ օրերին, նա հիվանդացավ և կնքեց մահկանացուն և երբ նրանք լվացին նրանք, դրեցին նրան վերի սենյակում: Սակայն Պետրոսը նրանց բոլորին դուրս տարավ և ծնկի իջավ և աղոթեց և շրջվելով դեպի մարմինը ասաց. «Թաբիթահ, կենդանացի»: Եվ նա բացեց իր աչքերը և երբ նա տեսավ Պետրոսին, նա ոտքի կանգնեց»: (Գործք 9/36-41)

Ես զարմանք եմ ապրում, թե ո՞րն է Պետրոսի և Հիսուսի հրաշքների տարբերությունը: Երկուսն էլ տեղի են ունեցել Ամենաբարձրյալ Ալլահի կամքով և օգնությամբ:

Ըստ Սուրբ Աստվածաշնչի, բոլոր աշակերտները ի վիճակի էին հանգուցյալին կյանք տալ: Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասում է. «Եվ հայտարարեք, երբ դուք գնում եք, ասելով. «Երկնային արքայությունը ձեռքում է: Բժշկիր տկարին, հարություն տուր հանգուցյալին և մաքրիր բորոտներին, դուրս մղիր

սատանաներին»»»։ (Մատթեոս 10/7-8) այսպիսով, արդյո՞ք նրանք բոլորը աստվածներ են։

Քրիստոնյաները, ովքեր խոսում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության մասին, արհամարհում են այն հատվածները, որոնք խոսում են նրա մահվան և փախուստի անհնարության մասին։ Նա ի վիճակի չէր վերադարձնել իր կյանքը, մինչ Ամենաբարձրյալ Ալլահը հարություն տվեց նրան։

Ուստի, վերակենդանացման այս հոյակապ հրաշքը չի կարելի կիրառել որպես Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության վկայություն, այն մեծ հրաշք է, որը Ամենաբարձրյալ Ալլահը տվել է Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն), հնարավորություն ամենը ներկայացնելու, որպես իրենց մեծ մարգարեի մարգարեության ապացույց։

Գ. ՏԿԱՐԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Քրիստոնյաները եզրակացնում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության իրենց հավատքը, ի շնորհիվ տկարների բժշկության։ Եթե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) բժշկեց բորոտին (Մատթեոս 8/3) Եղիան նույնպես բժշկեց բորոտին։ Ի լրացում, նա պատճառ հանդիսացավ, որպեսզի նրա աշակերտները և այլոք հիվանդանան։ «Եվ Եղիան մարգարե ուղարկեց նրան ասելով. «Գնա և լվացվիր Հորդանանի մեջ յոթ անգամ և քո մարմինը կվերականգնվի և դու կմաքրվես։ Նեեմանի բորոտությունը կկառչի ձեզ և ձեր աշակերտներին հավերժ։ Այսպիսով, նա դուրս եկավ բորոտությունից, ինչպես ձյուն»։ (Թագավորաց Բ 5/10-27)

Դ. ԱՆՋԱՅՏԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼԸ

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) կանխագուշակել է շատ անտեսանելի խնդիրներ և ամենը տեղի է ունեցել ինչպես նա է ասել։ Նա

ասաց երկու աշակերտներին, ում նա ուղարկեց Ձատիկի գոհաբերությանը, թե ինչ տեղի կունենա: (Մարկոս 14/12-16)

Ի լրացում, Պետրոսը ասաց Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) «Տեր, դու տեղյակ ես ամենից»: (Հովհաննես 21/17) Հիսուսը նույնպես տեղյակ էր, որ ոչ ոք չէր հեծնել քուռակը, որը կապված էր «Բեթ Ֆաջի» գյուղում: Ըստ քահանա Իբրահիմ Սաեդի սա ամուր ապացույց է: Նա ասում է. «Նոր վկայություն է, երբ Հիսուսը մանրամասն տեղյակ է անտեսանելիից, առանց կասկածանքի կամ մեկնաբանության և ինչպես նաև Հիսուսի համեստ փառքի վկայություն»: ²⁸

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) միակը չէր, ով կանխագուշակել է անհայտը: Մինչ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) Հակոբը (Խ.Ա.Ո.Ն) նույնպես կանխագուշակեց անհայտը, երբ ասաց երեխաներին. «Հավաքվեք միասին, որպեսզի ես ասեմ ձեզ, թե ինչ տեղի կունենա գալիք օրերին»: (Ճննդոց 49/1-27)

Նույնը տեղի ունեցավ Սավուդի և Եղայի հետ (Թագավորաց Գ 10/2-9 Թագավորաց Ա 21/21-24) և նրանց կանխագուշակությունը իրականացավ, ինչպես մենք ընթերցում ենք Թագավորաց Երկրորդ Գրքի մեջ: (Թագավորաց Բ 10/1-17, 9/30-37) Բազմաթիվ նմանատիպ հատվածներ առկա են սուրբ գրքերի մեջ: (Թագավորաց Բ 19/23-24, Թագավորաց Դ 4/8-18, 8/12-13, Հովհաննես 11/49-52)

Ե. ՍԱՏԱՆԱՆԵՐԻ ԿԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) վերահսկում էր սատանաներին (Մատթեոս 12/27-28) և սա նույնպես իրաջք էր, որը ներկայացրել են նաև մյուսները:

Երբ Հրեաները մեղադրանք ներկայացրեցին նրան, որ նա դուրս է մղում սատանաներին նրանց ղեկավարի օգնությամբ, նա ասում է. «Եվ, եթե ես դուրս եմ մղում սատանաներին Բիլզիբուլի միջոցով, ապա ու՞մ միջոցով են

²⁸ Ղուկասի Ավետարանի Մեկնաբանությունը էջ.475

ձեր որդիները դուրս մղում նրանց»: (Մատթեոս 12:27) Որպես այսպիսին, նա ապացուցում է, որ Յրեաները ունեն սատանաներին վերահսկելու միևնույն հնարավորությունը:

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) զգուշացրեց մյուս ստախոսների մասին, ում կհաջողվի դուրս մղել սատանաներին: Նա ասում է. «Այդ օրը, շատերը կասեն ինձ. «Տեր, Տեր, արդյո՞ք մենք չենք մարգարեացրել քո անունից և դուրս մղել սատանաներին քո անունից և գործել բազմաթիվ գործեր քո անունից»»: (Մատթեոս 7/22-23) Կեղծ մարգարեները ի վիճակի են դուրս մղել սատանաներին, սակայն դա չի ապացուցում նրանց մարգարեությունը, նրանց առաքիլությունը կամ նրանց աստվածայնությունը:

2. ԱՅԼ ՅՐԱՇՔՆԵՐ

Ավետարանները նշում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) այլ հրաշքները, երբ նա ջուրը փոխեց գինու (Հովհաննես 2/7-9) մեծ ամբոխին կերակրեց հինգ կտոր հացով և երկու կտոր ձկով (Մատթեոս 14/19-21) և թգնու չորացումը խոսքերի միջոցով: (Մատթեոս 21/18-19) Քրիստոնյաները նույնպես նշում են մեծ խավարը, որը տեղի կունենա նրա մտացածին մահվան օրը: (Մատթեոս 27/45) Ըստ Քրիստոնյաների այս բոլոր հրաշքները ապացուցում են նրա աստվածայնությունը և այն, որ նա հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի որդին:

Խավարի մասին Քրիստոնյաները խոսում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) խաչելության օրը, ամեն դեպքում այն ավելի հզոր չէ, քան խավարը, որը տևեց երեք օր եգիպտոսում, երբ եգիպտացիները հավատք չընծայեցին Մովսեսին (Խ.Ա.Ո.Ն): «Այսպիսով Մովսեսը ուղղեց իր ձեռքը երկինք և խավար իջավ ամբողջ եգիպտոսի երկրի վրա երեք օր: Նրանք չէին տեսնում միմյանց, ոչ էլ որևէ մեկը ոտքի կանգնեց իր վայրից երեք օր»: (Ելք 10:22-23)

Նման դեպք տեղի ունեցավ Օսեե հետ, երբ նա մարտնչեց Ամորիթցիների հետ Շաբաթ գիշերը, նա աղոթեց Ամենաբարձրյալ Ալլահին և ասաց. «Իսրայելի տեսողության

մեջ, «Արև կանգնիր Գիբեոնում և լուսին, Այջալոնի Դաշտավայրում: Եվ արև կանգ առավ և լուսինը կանգ առավ, մինչ ժողովուրդը վրեժ լուծեց իր թշնամիներից: Արևը կանգ առավ երկնքի կենտրոնում և չշտապեց մայր մտնել մոտ մեկ օր»» (Օսեե 10:12-13) Այդ օրվա իրադարձությունը չի նշում Օսեեի աստվածայնությունը, նույնիսկ այն փաստի, որ ավելի հզոր էր, քան խաչելության ընթացքում տեղի ունեցածը: Եթե արևը մթնի երեք ժամ, կարող ենք կարծել, որ թաքնվել է ամպերի ետևը, որն էլ սովորական երևույթ է, սակայն երբ երկիրը կանգ է առնում իր պտույտից, սա արդեն ավելի նշանակալից է:

Մարգարե Եսային ներկայացրեց ավելի հզոր հրաշք, քան երկուսը, Ամենաբարձրյալ Ալլահը ի պատասխան նրա աղոթքի հակառակ արևը շարժեց հակառակ ուղղությամբ, ապացուցելու Արքա Յեզեքիային ճշմարտությունը և Ամենաբարձրյալ Ալլահի որոշումների ճշգրտությունը: (Տես Թագավորաց Գ 20/10-11) Սիաքը հաստատել է սա. «Իր ժամանակ, արևը շարժվեց հակառակը»: (Սիրաք 48/23) Անկախ այս ամենի, ոչ ոք չհայտնեց Եսայու աստվածայնությունը:

Եթե բնությունը հնազանդվեց Յիսուսին (Խ.Ա.Ռ.Ն.), ապա բազմաթիվ այլ մարգարեներ ի վիճակի էին վերահսկել այն նույնպես, ինչպես կրակը և ծովը հնազանդվեց Եղիային: Աստվածաշունչը ասում է, «Եթե ես Աստծո մարդն եմ, թող կրակը գա երկնքից և կլանի ձեզ և ձեր հիսունը»: «Այնուհետ, կրակը իջավ երկնքից և կլանեց նրան և նրա հիսունը»: (Թագավորաց Գ 1:10) «Այնուհետ Եղիան վերցրեց իր վերարկուն, փաթաթեց այն և հարվածեց ջրին և ջուրը բաժանվեց երկու մասերի, մինչ երկուսը կարող էին հասնել չոր գետնին»: (Թագավորաց Գ 2:8)

Յիսուսի (Խ.Ա.Ռ.Ն.) քառասունօրյա պահը չի ապացուցում իր աստվածայնությունը, քանի որ անշուշտ նա քաղց էր զգում: «Նա քաղցած էր»: (Մատթեոս 4:2) Եթե նրա պահը և համբերությունը նշում է նրա աստվածայնությունը,

այնուհետ նրա քաղցը հերքում է դա և ապացուցում է նրա մարդկությունը:

Հարկ է ընթերցողին նշել, որ Մովսեսը և Եղիան նույնպես պահք են պահել քառասուն օր և քառասուն գիշեր: Մովսեսը (Խ.Ա.Ռ.Ն) ասում է. «Ես մնացի լեռան վրա քառասուն օր և քառասուն գիշեր: Ես ոչ հաց եմ կերել, ոչ էլ ջուր ըմպել»: (Երկրորդ Օրենք 9:9) «քառասուն օր և քառասուն գիշեր Հորիքում, Աստծո լեռան վրա տարել եմ սննդի հզորությունը»: (Թագավորաց Բ 19:7-8)

ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ, ՈՐՈՒՔ ԺԽՏՈՒՄ ԵՆ ՀԻՍՈՒՄԻ (Խ.Ա.Ո.Ն.) ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Գիտնականները համամիտ են, որ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն.) կյանքի ընթացքում ներկայացրած մարդկային արարքները, կանխում և հերքում են Նրա Ամենաբարձրյալ Ալլահ կամ Ամենաբարձրյալ Ալլահի Որդու կոչումը: Անհնար և սխալ է հավատք ընծայել, որ Ամենաբարձրյալ Ալլահը ծնվել, սնվել, թլպատվել, ենթարկվել է ծեծի և կնքել է մահկանացուն:

Անընդունելի է ընկալել, երբ Քրիստոնյաները ասում են, որ այդ արարքները իրագործել է Նրա մարդկային կողմը, ոչ թե աստվածայինը, քանի որ Նրանք հավատք չեն ընծայում, որ Ամենաբարձրյալ Ալլահը մարմնավորվել է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն.) զգեստի պես, որը Նա կարող է կրել, երբ ցանկանում է և հանել երբ ցանկանում է:

Ըստ Նրանց, այն ինչ Նա (Խ.Ա.Ո.Ն.) գործել է պետք է որ լինի մարմնավորված Աստվածը: Այլապես, Նրանք պետք է համամիտ լինեն, որ Նա մարդ է, որն էլ հանդիսանում է փաստ:

Իր, Կայսր Թեոդոսիոս ուղղված Նամակի մեջ, Սուրբ Քերլիսը, Ալեքսանդրիայի Արքեպիսկոպոսը ասում է. «Մենք չենք բաժանում Հիսուսի մարդկային հատվածը աստվածայինից, ոչ էլ մենք առանձնացնում ենք խոսքը մարդկային հատվածից այդ իսկ անհայտ միությունից, որը մենք չենք կարող բացատրել: Մենք խոստովանում ենք, որ Հիսուսը կազմված է երկու կամքից, որոնք համակցված են և դառնում են մեկը, ոչ թե կործանում ենք երկու բնույթները կամ Նրանց համակցությունը, այդ հոյակապ և առաքինի միությունը»:

Եթևասիոս Պապը ասում է. «Այս մեկ Աստվածը հանդիսանում է Աստծո հոգևոր Որդին և մարմնական մարդու Որդին, սակայն դա չի նշանակում, որ միակ Որդին

ունի երկու բնույթ, մեկը աստվածային և մեկը մարդկային, և մարմնավորված Աստծո խոսքի մեկ բնույթը, ում մենք խոնարհվում ենք, նույնն է, եթե մենք խոնարհվենք Հիսուսին»:

Թարգմանելով «սա իմ սիրելի որդին է» նախադասությունը Սուրբ Գրեգորիոսը ասում է. «Եթե ես տեսնեմ, որ իմ որդին քաղցած, ծարավ, քնկոտ կամ հոգնած է... մի կարծեք, որ դա նրա մրամինն է առանց աստվածայնության: Երբ դուք տեսնեք նրան տկարներին բժշկելիս, բորոտին մարքելիս և կավից աչքեր պատրաստելի, մի կարծեք, որ նա այդպես է վարվում իր աստվածային հատվածով առանց մարդկայինի, քանի որ ճիշտ չէ, որ հզոր արարքները մեկի և համեստ արարքները մյուսի համար են»:²⁹

Մենք ի վիճակի կլինենք ընկալել այս, հայտարարված հարաբերությունների միությունը, որը հանդիսանում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մարդկային և աստվածային կողմերի միություն, երբ մենք գիտակցում ենք երկու տարբեր արարքները, որը ներկայացրել է Հիսուսը: Արյունաքամ կնոջ պատմության մեջ մենք ընթերցում ենք. «Նա մոտեցավ ետևի հատվածից, դիպչեց նրա հանդերձի եզրին և անմիջապես արյունը դադարեց: Եվ Հիսուսը ասաց. «Ո՞վ դիպչեց ինձ»: Երբ բոլորը ժխտեցին, Պետրոսը ասաց. «Տեր, քեզ շրջապատող ամբոխը ճշում են քեզ: Սակայն Հիսուսը ասաց. «Ինչ որ մեկը դիպչեց ինձ, քանի որ ես զգացի, որ հզորությունը դուրս եկավ ինձանից»» (Դուկաս 8:44-46) Մի ակնթարթում Քրիստոնյաները կազմում են կատարյալ աստվածայնություն, կատարյալ մարդկայնությամբ: Հիսուսը տեղյակ չէր, թե ով դիպչեց իրեն իր մարդկային կողմով և նա բժշկեց նրան իր աստվածային կողմով և ամենը մեկ վայրկյանում:

Այս տարօրինակ միությունը հերքելու համար, բոլորը պետք է պատկերացնեն երկու կատարյալ տարրերի լիարժեք

²⁹ Ֆրանսեկի կարծիքը Քրիստոսի կամքի և բնույթի մասին, Թահանա Գաբրիել Աբդել Մասիհի էջ.59-60

խառնուրդը, որի յուրաքանչյուր տարրը մտնում է նույնը: Եթե մենք խառնենք քաղցրը թթվի հետ, ենթադրելով Քրիստոնեական ընկալումը, խառնուրդը միաժամանակ կարող է լինել քաղցրաթթվային:

Ավետարանների տասնյակ հատվածներ խոսում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մարդկային թուլության մասին, դուրս բերելով նրան աստվածային աստիճանից, պատասխանելով և հերքելով նրանց, ովքեր հայտնել են նրա աստվածայնությունը: Այս հատվածները կարելի է բաժանել չորս դասակարգի:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱԿԱՐԳ

Այս տարբերակները և հատվածները հայտնում են նրա հնարավորությունները և թուլությունը: Ուստի, ըստ Քրիստոնյաների հայտարարության, նա չի կարող միաժամանակ լինել կատարյալ մարդկային և աստվածային, նա կարող է լինել միայն մարդկային:

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) տեղյակ չէր բազմաթիվ խնդիրներից: Որոնցից մեկը, որը շատ կարևոր է, այն էր որ նա տեղեկություն չունեի Դատաստանի Օրվա և ժամանակի մասին: Նա ասում է. «Սակայն կապված այդ օրվա կամ ժամի հետ, ոչ ոք տեղյակ չէ, ոչ նույնիսկ երկնքի հրեշտակները, ոչ էլ Որդին, սակայն միայն Հայրը»: (Մարկոս 13:32) Ինչպե՞ս են կարող Քրիստոնյաները հայտնել, որ նա հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահը, մինչ անհայտության կնիքը չփոթեցնում է նրան:

Նա ոչ միայն տեղեկություն չունեի Դատաստանի Օրվա մասին, այլև որևէ խնդրից, բացառությամբ նրա, ինչ Ամենաբարձրյալ Ալլահն էր ցույց տալիս: Այդ իսկ պատճառով, երբ նա ցանկություն հայտնեց վերակենդանացնել Լազարուսին, «նա հոգու խորքում զգացված էր և անհանգստացած: Եվ նա ասաց. «Որտե՞ղ եք դուք պառկեցրել նրան»»: (Հովհաննես 11:33-34)

Երբ տղամարդը մոտեցավ Զիսուսին (Խ.Ա.Ռ.Ն) և խնդրեց նրան բժշկել իր խելագար որդուն, Զիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) տեղյակ չէր, թե որքան ժամանակ էր նա տկար: «Եվ Զիսուսը հարցրեց իր հորը. «Որքա՞ն ժամանակ է նա տկար»: Եվ նա ասաց. «Մանկությունից»»։ (Մարկոս 9:21)

Իր հրաշքների իրագործման ընթացքում Զիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) նույնպես ցույց տվեց, որ նա ի վիճակի չէ գործել առանց Ամենաբարձրյալ Ալլահի կամքի և օժանդակության: Նա ասում է. «Ես ոչինչ չեմ կարող գործել ինքս: Ինչպես ես լսում եմ, ես դատում եմ և իմ դատաստանը արդար է, որովհետև ես չեմ փնտրում իմ իսկ կամքը, այլ նրա կամքը, ով ուղարկել է ինձ»։ (Յովհաննես 5:30)

Նա (Խ.Ա.Ռ.Ն) հաստատեց այս իմաստը, երբ ասաց. «Ես ինքս ոչինչ չեմ կարող գործել: Ինչպես ես լսում եմ, ես դատում եմ և իմ դատաստանը արդար է, որովհետև, ես չեմ փնտրում իմ իսկ կամքը, այլ նրա կամքը, ով ուղարկել է ինձ: Եվ նա, ով ուղարկել է ինձ, ինձ հետ է: Նա ինձ միայնակ չի թողել, քանի որ ես միշտ գործում եմ այնպես, ինչը գոհություն է տալիս նրան»։ (Յովհաննես 8:28-29) Մեկ այլ հատվածի մեջ նա ասում է Զրեաներին. «Իրոք, իրոք, ես ասում եմ ձեզ, Որդին ոչինչ չի կարող գործել իր կողմից, սակայն միայն երբ տեսնում է Զորից: Քանի որ ինչ որ գործում է Զայրը, նմանապես գործում է Որդին»։ (Յովհաննես 5:19)

Ի լրացում, Զիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) ոչ մի իշխանություն չունեւ բարու և չարի վրա, նույնիսկ իր համար, բացառությամբ Ամենաբարձրյալ Ալլահի գթասրտության և կամքի: Երբ Չաբադիի զավակների մայրը, ով նրա աշակերտն էր, եկավ նրա մոտ «նա ասաց նրան. «Ի՞նչ ես ցանկանում»։ Կինը պատասխանեց նրան. «Ասա, որ իմ այս երկու որդիները պետք է բազմեն քո աջ և ձախ կողմը, քո արքայության մեջ»։ Զիսուսը պատասխանեց, սակայն բազմել իմ աջ և ձախ կողմը իմ պարզևը չէ, այլ նրանց, ում համար պատրաստել է իմ Զայրը»»։ (Մատթեոս 20:20-22)

Սուրբ Աստվածաշնչի բազմաթիվ հատվածները Զիսուսին (Խ.Ա.Ռ.Ն) նկարագրում են որպես Ամենաբարձրյալ Ալլահի

ծառա: Մատթեոսի մեջ մենք ընթերցում ենք. «Իմ ծառան, ում ես ընտրել եմ»: (Մատթեոս 12:18) և Գործքի մեջ «փառաբանեք նրա ծառա Հիսուսին, Սուրբ և Առաքինի մեկին»: (Գործք 3:13-14) Աստված բարձրացրել է իր ծառային, առաջինը ուղարկել է ձեզ»: (Գործք 3:26) «ձեր սուրբ ծառա Հիսուսը»: (Գործք 4:30)

Որոշ թարգմանություններ, ինչպիսիք են հայտնի Վանդիքի թարգմանությունը, «ծառա» բառը փոխարինել են «զավակ» բառով, որն էլ նշում է որդիությունը: Հայր Ձեսյուսի թարգմանությունը և թարգմանությունների մեծամասնությունը մինչ այժմ կիրառում են «ծառա» բառը:

Ակնհայտ բացատրելով այս թյուրիմացությունը, մենք ընթերցում ենք Մատթեոսի խոսքերը: Նա ասում է. «այս լրացնում է մարգարե Եսայու խոսքերը. «Ահա, Իմ Չավակը, ում ես ընտրել եմ: Իմ սիրելին, ով գոհություն է տալիս Իմ հոգուն: Ես կոչեմ իմ ոգին Նրան և Նա կհայտնի դատաստանը իր ժողովուրդներին»»: (Մատթեոս 12:17-18) Մատթեոսը կիրառեց «Չավակ» բառը, սակայն Եսայու տարբերակի մեջ, որից մեջ էր բերում Մատթեոսը, առկա էր «ծառա» բառը: «Ահա իմ ծառան, ում ես պահպանում եմ, իմ ընտրյալը, ով գոհություն է պարգևում ես դրել եմ իմ Ոգին, Նա կբերի արդարություն իր ժողովուրդներին»: (Եսայի 42:1)

ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱԿԱՐԳ

Սրանք այն տարբերակները և հատվածներն են, որոնք հայտնում են Նրա (Խ.Ա.Ո.Ն) մարդկային արարքները, որոնք նույնն են ինչ ցանկացած մարդ արարածի:

Հիմնվելով Ավետարաններին, գիտնականները ուսումնասիրել են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) կյանքը և գտել են, որ Նա ոչնչով չէր տարբերվում այլ մարդկային արարածներից: Նրանք ուսումնասիրել են սկսած Նրա մորը տված հրեշտակի ավետիսից, Նրա ծնունդից, կրծքով սնվելուց, թլպատումից, մեծանալուց և երեխաների հետ կրթվելուց, Հովհաննես Մկրտիչի մկրտումից հետո, մինչ իր ենթադրյալ մահը, այն

բանից հետո, երբ նա աղոթքով խնդրեց Ամենաբարձրյալ Ալլահին փրկել իրեն: Ինչպես բոլորս, նա ծնվել է, մեծացել, սնվել, քնել և կնքել է մահկանացուն, այսպիսով, ո՞րն է այն տարբերությունը, որը նրան դարձնում է աստվածային:

Արյունով պատված նա ելավ կնոջ արգանդից: «Եվ մինչ նրանք այնտեղ էին, եկավ ծնելու ժամանակը»: (Ղուկաս 2:6)

Նա սնվել է կրծքով. «Երբ նա ասաց ամենը, մի կին բարձրաձայնեց ամբոխից և ասաց նրան «Օրինյալ է արգանդը, որը կրել է քեզ և կուրծքը, որը կերակրել է»»: (Ղուկաս 11:27) Այստեղից հարց է ծագում, արդյո՞ք Մարիամը տեղյակ էր, որ զավակը, ով նրա արգանդում էր և ում նա հոգ է տարել մանկությունից, ըստ, Քրիստոնյաների հայտարարության, հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահը:

Ուր օրական հասակում նրանք թլպատեցին նրան (Խ.Ա.Ո.Ն.): «Եվ ութերորդ օրվա ավարտին, երբ նրան թլպատեցին, նրան կոչեցին Հիսուս»: (Ղուկաս 2:21) Արդյո՞ք այն մարդը, ով թլպատում էր նրան, տեղյակ էր, որ թլպատում է Աստծուն և ի՞նչ պատահեց մարմնի այն հատվածի հետ, երբ դուրս բերեցին մարմնավորված Աստծոց: Արդյո՞ք այն դարձավ ոչ աստվածային, կամ մնաց այդպիսին, կամ կորավ, կամ թաղվեց:

Հովհաննես Մկրտիչը մկրտեց Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն.) Հորդանան գետի մեջ: «Այնուհետ, Հիսուսը եկավ Գալիլեայից Հորդանան Հովհաննեսի մոտ, որպեսզի նա մկրտի նրան»: (Մատթեոս 3:13) Արդյո՞ք Մկրտիչը տեղյակ չէր, որ նա մկրտում էր Ամենաբարձրյալ Ալլահին: Ըստ Մատթեոսի, մկրտությունը ապաշխարիության և մեղքերի մաքրման համար է: «Եվ նրանք մկրտվեցին Հորդանան գետի մեջ, խոտովանելով իրենց մեղքերը: Ես մկրտում եմ ձեզ ջրով, որպես ապաշխարիություն: Այնուհետ Հիսուսը եկավ Գալիլեայից Հորդանան Հովհաննեսի մոտ, որպեսզի մկրտվի»: (Մատթեոս 3:6-13) Արդյո՞ք Ամենաբարձրյալ Ալլահը, մեղսագործը փնտրում էր որևէ մեկին որպեսզի ների:

Ավելին, Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) գործում էր, ինչ պահանջում էր մարդկային կարիքը: Նա քնեց. «Նա քնած էր» (Մատթեոս 8:24) Նա հոգնեց ինչպես յուրաքանչյուր անհատ. «այսպիսով Հիսուսը, հոգնեց, քանի որ Նա ճանապարհորդում էր» (Հովհաննես 4:6) Նա հեծնում է ավանակ, ուստի, Նա ուղարկեց իր աշակերտներին բերելու այն: «Տերը ունի դրա կարիքը»: (Մարկոս 11:3)

Նա (Խ.Ա.Ո.Ն) նույնպես տխրել և անհանգստացել է. «Եվ սկսեց մեծ տխրությունը և դժբախտությունը»: (Մարկոս 14:33) և երբեմն Նա տխրեց և վշտացավ: «Նա սկսեց տխրել և անհանգստանալ»: (Մատթեոս 26:37)

Դժվարության և տխրության պարագայում, լացը հանդիսանում է մարդ արարածի սովորությունը և այսպես էր վարվում Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն): «Հիսուսը ողբաց»: (Հովհաննես 11:35)

Սատանան փորձեց գայթակղել Նրան, սակայն հնարավոր չեղավ: Նա տարավ Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) բարձր լեռ և ցույց տվեց Նրան ամբողջ աշխարհը և ասաց. «Քեզ կտամ ես ամբողջ այս իշխանությունը և Նրանց փառքը, քանի որ այն տրվել է ինձ և ես տալիս եմ Նրան, ում ես եմ ցանկանում: Այդ դեպքում, եթե երկրպագես ինձ, այդ ամենը կլինի քոնը: Եվ Հիսուսը պատասխանեց Նրան. «Գրառվել է. «Դուք պետք է երկրպագեք Տիրոջը ձեր Աստծուն, և Նրան միայն դուք պետք է ծառայեք»»: (Ղուկաս 4:6-8)

Մարդիկ ծեծի ենթարկեցին և անարգեցին Նրան. «Երբ Նա ասաց Նրան այս ամենը, կանգնած զինվորականներից մեկը ձեռքով հարվածեց Հիսուսին ասելով. «Արդյո՞ք այսպես ես դու պատասխանում մեծ քահանային»»: (Հովհաննես 18:22) սակայն Նա ի վիճակի չէր պաշտպանել իրեն բացառությամբ խոսքերով, որովհետև Նրան կապել էին: «Այսպիսով, զինվորների մի խումբ և Նրանց ղեկավարը և Հրեաների զինվորականները ձերբակալեցին Հիսուսին և կապեցին Նրան»: (Հովհաննես 18:12)

Նա քաղցած էր և սնունդ էր փնտրում. «Առավոտյան, երբ նա վերադառնում էր քաղաք, նա քաղց զգաց»: (Մատթեոս 21:18) և նա ծարավ էր. «Ասաց. «Ես ծարավ եմ»»: (Հովհաննես 19:28) Այնուհետ նա կերավ և ըմպեց: «Նրանք նրան տվեցին խաշած ձկան կտոր և նա վերցրեց այն և կերավ նրանց առջև»: (Ղուկաս 24:42-43)

Նա ուներ սննդի և ըմպելիքի կարիք, ֆիզիկական և մտավոր աճի համար: «Եվ փոքրիկը մեծացավ»: (Ղուկաս 2:40) «Եվ Հիսուսը աճեց իմաստությամբ և հասակով և շնորհքով Աստծո և մարդու հետ»: (Ղուկաս 2:52) Սնունդը օգնեց նրան աճել ֆիզիկապես և ուսուցիչների ուսմունքը և մեծերը օգնեցին աճել մտավոր առումով: «Նրանք գտան նրան տաճարի մեջ, բազմած ուսուցիչների շարքում, լսելով նրանց և հարցադրելով»: (Ղուկաս 2:46)

Հարկ չէ նշել, որ սնվելուց և ըմպելուց հետո առկա են այլ մարդկային արարքներ, միզելը և կղզելը: (Աստված արգելում և ներում է մեզ դրա համար):

Մեր ուշադրությանը բերելով այս խնդիրը, Ամենաբարձրյալ Ալլահը նշում է Սուրբ Ղուրանի մեջ: (Քրիստոսը Մարիամի որդին, ոչ ավելին էր, քան առաքյալ, շատերը առաքյալներ էին, ովքեր նախորդել էին: Նրա մայրը հանդիսանում էր ճշմարտության կին: Նրանք երկուսն էլ սնվում էին հանապազորյա հացով): (Սուրբ Ղուրան 5:75)

Յուրաքանչյուրը, ով սնվում և ըմպում է, կարիք ունի դուրս մղել սննդի մնացորդները և անարգանք է այդպես կարծել Ամենաբարձրյալ Ալլահի մասին:

Նույնպես, Ավետարանները նշում են խաչելության նախօրեի Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) տխրությունը. «Իմ հոգին շատ տխուր է, նույնիսկ մահու չափ»: (Մարկոս 14:34) «և երբ նա հյուժված էր, երկնքի հրեշտակը իջավ աջակցելու նրան»: (Ղուկաս 22:43)

Ըստ Ավետարանների, երբ նա խաչի վրա էր, նա հյուժվեց և գոչեց. «Իմ Աստված, իմ Աստված, ինչու՞ ես դու ինձ լքել»: (Մարկոս 15:34)

Հիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) ոչ միայն իրագործեց վերոհիշյալը, այլև, ինչպես նշում են Ավետարանները, կնքեց իր մահկանացուն, ինչպե՞ս եք պատկերացնում հանգուցյալ Աստված: «Եվ, Հիսուսը բղավեց և ավանդեց հոգին»: (Մարկոս 15:37)

Եթե որևէ մեկը փորձում է պատասխանել այս հարցին ասելով, որ հանգուցյալը հանդիսանում է մարդկային բաժինը և ոչ թե աստվածայինը և Ամենաբարձրյալ Ալլահը անմահ է, ես հիշեցնում եմ ընթերցողին, որ անհատը, ով խաչի վրա կնքեց մահկանացուն հանդիսանում է Աստծո Որդին և ոչ թե Մարդու Որդին: «Որովհետև Աստված այնքան սիրեց աշխարհը, որ նա տվեց իր միակ Որդուն, որ ով հավատք ընծայի նրան, չանհայտանա»: (Հովհաննես 3:16)

Փորձելով պատասխանել այս ճակատագրական հարցին Թարթելիանը չէր կարող գտնել որևէ պատասխան, բացառությամբ հետևյալ խոսքերի. «Աստծո Որդին կնքեց մահկանացուն: Սա աներևակայելի է, որովհետև հանդիսանում է անհավատալի և անընդունելի մի երևույթ: Նրան հուղարկավորեցին հանգուցյալների հետ, որը հաստատուն է, որովհետև այն պետք է անհնար լինի»:³⁰ Անկախ այս խոսքերի Թարթելիանը և այլ Քրիստոնյաներ մինչ այժմ հավատք են ընծայում, որ նա Ամենաբարձրյալ Ալլահն է:

Նույնպես, Ավետարանները նշում են Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) աղոթքը և խնդրանքը Ամենաբարձրյալ Ալլահին. «Աղոթելով ասաց. «Իմ Հայր, եթե հնարավոր է, թող այս գավաթը անցնի ինձանից. Իհակե, ոչ իմ կամոք, այլ քո կամոք»»: (Մատթեոս 26:39) «Եվ այնտեղ նա աղոթեց»: (Մարկոս 1:35)

Նկարագրելով նրա աղոթքը Ղուկասը ասում է. «և նա ծնկի իջավ և աղոթեց»: (Ղուկաս 22:41) «նա դուրս եկավ լեռ աղոթելու և ամբողջ գիշեր նա շարունակեց աղոթել Աստծուն: Եվ, երբ օրը եկավ, նա կանչեց իր աշակերտներին»: (Ղուկաս 6:12-13)

³⁰ Քրիստոսը Ղուրանի, Թորայի և Ավետարանի մեջ: Աբդուլ Բարիմ Էլ Խաթիբի Էջ.343

Հարց է ծագում, թե ամբողջ գիշեր ու՞մ էր աղոթում Հիսուսը (Խ.Ա.Ռ.Ն), արդյո՞ք նա աղոթում էր Ամենաբարձրյալ Ալլահին, ով բնակվում էր նրա մեջ: Ինչու՞ մարդիկ չեն երկրպագում նրան, ում հարկ է երկրպագել և երկրպագում են նրան, ով ինքն է երկրպագում:

Նույնպես, Ղուկասը նշում է, որ Հիսուսի քրտինքը նման էր արյան կաթիլների: Նա ասում է. «Եվ լինելով հոգեվարքի մեջ, նա ավելի անկեղծ աղոթեց և նրա քրտինքը վերածվեց արյան կաթիլների, որոնք ընկնում էին գետնին: Եվ երբ նա կանգնեց աղոթքից, նա մոտեցավ աշակերտներին»: (Ղուկաս 22:44)

Բացատրելով այս ամենը, Յոհաննա Ֆամ Էթահաբը ասում է. «Ո՞վ էր կարող զարմանք ապրել, երբ տեսնում էր Աստծուն Խոնարհվելիս և աղոթելիս»:³¹

Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) իրավիճակի նկարագրությունը, երբ նա վերակենդանացրեց Լազարուսին, որը մենք գտնում ենք Հովհաննեսի Ավետարանի, ցույց տվեց Ամենաբարձրյալ Ալլահի օգնության իր թուլությունը և կարիքը: «Եվ Հիսուսը բարձրացրեց իր աչքերը և ասաց. «Հայր, ես երախտապարտ եմ քեզ, որ դու լսել ես ինձ: Ես տեղյակ եմ, որ դու միշտ ինձ լսում ես, սակայն ես ասացի սա ինձ շրջապատող մարդկանց համար, որպեսզի նրանք հավատք ընծայեն, որ դու ուղարկել ես ինձ»»: (Հովհաննես 11:41-42)

Աղթոքը և երկրպագությունը հանդիսանում են ծառայի արարքները և հնարավոր չէ այս արարքները վերագրել Ամենաբարձրյալ Ալլահին, կամ անհատին, որի մեջ մարմնավորվել է Ամենաբարձրյալ Ալլահը:

Պողոսը նշում է Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) հաղթանակը ամենի վրա, ներառելով մահը, սակայն նա նույնպես նշում է նրա թուլությունը և կատարյալ հնազադությունը Ամենաբարձրյալ Ալլահին: Նա ասում է. «Երբ ամենը

³¹ Անկեղծ կարծիք Քրիստոսի կամքի և բնույթի մասին, Գաբրիել Աբդել Մասիհի Էջ.58

ենթարկվում է նրան, ապա Որդին ինքը նույնպես ենթարկվում է նրան, ով ամենը դնում է իր ենթարկության ներքո, որ Աստված կարող է լինել ամենի մեջ»:
(Կորնթացիներ Ա 15:28)

Վերջապես, ինչը ապացուցում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մարդկայնությունը, կապված է երկնային արքայության հետ, որը Ամենաբարձրյալ Ալլահը պատրաստել է իր հավատարիմ հավատացյալների համար և նա կսնվի և կըմպի ինչպես իր աշակերտները, ովքեր էլ գտնվում են այդ հավատացյալների թվի մեջ: «Իմ Հոր տանը առկա են շատ սենյակներ: Ես գնում եմ ձեզ համար պատրաստելու: Որտեղ որ ես եմ, նույնպես դուք կարող եք լինել»:
(Հովհաննես 14:2-3) «Ես կրկին չեմ ըմպի գինու այս պտուղը, մինչ այն օրը, երբ ես նոր կըմպեմ այն ձեզ հետ իմ Հոր արքայությանը»:
(Մատթեոս 26:29)

Աստծո Արքայությունը երկինքն է, որտեղ նա (Խ.Ա.Ո.Ն) կհանդիպի իր աշակերտներին կրկին և նա կըմպի նրանց հետ: Արդյո՞ք Որդին պետք է մարմնավորվի Հանդերձյալ կյանքում կրկին և ո՞րն է խնդիրը, կամ արդյո՞ք նա կվերադառնա որպես մարդ, արարած և կրնակվի Ամենաբարձրյալ Ալլահի արքայության մեջ, ինչպես բոլոր հավատացյալները:

Որպես ամենի եզրահանգում, մենք հաշվի ենք առնում Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) խոսքերը, որը նա նշել է իր մասին: Նա ասում է. «Մարդ, ով ասել է ձեզ ճշմարտությունը, որը ես լսել եմ Աստծուց»:
(Հովհաննես 8:40) Արդյո՞ք մենք հաշվի չենք առնի նրա (Խ.Ա.Ո.Ն) վկայությունը: Եթե նա հանդիսանում էր Ամենաբարձրյալ Ալլահը, ապա ճիշտ չէ թաքցնել այս փաստը մեզանից, կրկնելով այս պարզ և ակնհայտ նախադասությունը, որը ապացուցում է նրա մարդ լինելը:

Երբ Քրիստոնյաները պնդում են նրա աստվածայնությունը, նրանք արհամարհում և գցում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) և նրա աշակերտների խոսքերը օվկիանոս և ժխտում են այս բոլոր հատվածները, որոնք չեն խոսում մարմնավորված Աստծո

մասին, ոչ էլ մարդու մասին, որի մեջ բնակություն է հաստատել Ամենաբարձրյալ Ալլահը:

ԵՐՐՈՐԴ ԴԱՍԱԿԱՐԳ

Տարբերակները և հատվածները, որոնք հայտարարում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աշակերտները, նրա ժամանակակիցները և նրա թշնամիները, հանդիսանում են աստվածային գաղափարի տգիտություն: Այս տարբերակները և հատվածները ապացույց են, որ ոչ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն), ոչ էլ նրա աշակերտները ոչ մի կապ չունեն աստվածայնության գաղափարի հետ, այն ուղղակի նորարարություն է, որը ծագել է նրանից բավական ուշ, որը և բավարար է, որպեսզի հերքի խնդիրը:

Նմանատիպ տարբերակները և հատվածները բազմաթիվ են, օրինակ.

1. Նրա կույս մոր անգիտությունը նրա աստվածայնության հանդիսանում է դրանցից մեկը: Երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) վերադառնում էր իր մոր և Հովսեփ ատաղձագործի հետ տեղի ունեցավ մի դրվագ, ինչը ապացուցում է նրա մոր անգոտությունը կապված աստվածայնության հետ: Եթե նրա մայրը տեղյակ չէ նրա աստվածայնության մասին, ապա, ո՞վ է տեղյակ:

Ղուկասի գրքի մեջ մենք ընթերցում ենք. «Եվ, երբ ավարտվեց տոնախմբությունը, երբ նրանք վերադառնում էին, փոքրիկ Հիսուսը մնաց Երուսաղեմում: Նրա ծնողները տեղյակ չէին, սակայն համարելով իրեն խմբի մեջ, նրանք գնացին մեկօրյա ճանապարհորդության, սակայն այնուհետ նրանք սկսեցին փնտրել նրան ազգականների և ծանոթների մեջ և երբ նրան չգտան նրան, նրանք վերադարձան Երուսաղեմ, փնտրելով նրան: Երեք օր անց, նրանք գտան Հիսուսին տաճարի մեջ, ով նստած էր ուսուցիչների հետ, լսում էր նրանց և հարց տալիս: «Չավակս, ինչու՞ դու այդպես վարվեցիր մեզ հետ: Ահա, քո հայրը և ես փնտրում ենք քեզ մեծ վշտով...» (Ղուկաս 2:43-48)

Նրանց անհանգստությունը անիմաստ կլիներ, եթե նա տեղյակ լիներ, որ Հիսուսը հանդիսանում էր Ամենաբարձրյալ Ալլահը:

Հիսուսը պատասխանեց մորը ասելով. «Ինչու՞ էիր դու փնտրում ինձ: Արդյո՞ք դու տեղյակ չես, որ ես պետք է գտնվեմ իմ Հոր տանը»: (Ղուկաս 2:49) Արդյո՞ք նա և Հովսեփը պետք է ընկալեն նրա խոսքերից, որ նա նկատի ուներ, որ նա հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահը կամ Ամենաբարձրյալ Ալլահի Որդին: Իհարկե ոչ, քանի որ նրանք տեղյակ չէին նրանց տարօրինակ հավատքից: Ղուկասը ասում է. «Եվ նրանք չընկալեցին խոսքերը, որը նա ասաց նրանց»: (Ղուկաս 2:50)

Երբ Սիմոնը գրկեց մանուկին, Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն), փառաբանեց Ամենաբարձրյալ Ալլահին, որովհետև տեսել էր Մեսսիային, նրա մայրը (Խ.Ա.Ո.Ն) լսեց և տեսավ նրա դեմքի երջանկությունը: Նա և ատաղձագործ Հովսեփը չհասկացան խոսքերը, շփոթվեցին և զարմացան: «Եվ նրա հայրը և մայրը զարմանք ապրեցին այն խոսքերից, ինչ նա ասել էր Հիսուսի մասին»: (Ղուկաս 2:33)

2. Սիմոն Պետրոսը, ով հանդիսանում էր Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) սիրելին, Սուրբ Հոգով լինելով ասաց. «Իսրայելի ժողովուրդ, լսեք այս խոսքերը. Նազովրեցի Հիսուսը, մարդը ում վկայեց ձեզ Աստված հզոր արարքներով և հրաշքներով և նշաններով, որոնք գործել է Աստվածը իր միջոցով, ինչպես դուք տեղյակ եք: Այս Հիսուսին մատնել են ըստ որոշակի ծրագրի և Աստծո կանխատեսության, քեզ կխաչեն և կսպանեն անօրենների ձեռքերով»: (Գործք 2:22-23) Այս կարևոր ճառի մեջ նա չի նշել մարդկային աստվածայնության կամ մարմնավորված Աստծո որևէ բան, որին աջակցում է Սուրբ Հոգին:

3. Երբ իր ենթադրյալ խաչելությունից հետո Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հայտնվեց իր երկու ընկերներին, ովքեր տխրել էին նրա խաչելության լուրից, նա հարցրեց նրանց տխրության պատճառը: Նրանք ասացին. «Կապված

Նագովրեցի Յիսուսի հետ տղամարդը հանդիսանում էր մարգարե, հզոր արարքներով և խոսք Աստծո և բոլոր մարդկանց առջև: Եվ ինչպես մեր քահանայապետերը և կառավարիչները մատնեցին Նրան մինչ մահապատիժ և խաչելություն: Սակայն մենք հույս ունենք, որ Նա մեկն էր, ով կփկի Իսրայելը»: (Ղուկաս 24:19-21) Այստեղ խոսք չի գնում սպանված աստվածային անհատի կամ մարմնավորված Աստծո մասին, ովքեր համակարծիք են եղել մինչ մահը: Այն ինչ Նրանք տեսան Նրա մեջ ոչ ավելին էր, քան մարդ, փրկիչ, ով գալիք Մեսսիան էր, ում մասին կանխագուշակել էին մարգարեները:

Այս երկու աշակերտների հետ կապված Եգիպտացի քահանա Իբրահիմ Սափիդը ասաց. «Մինչ այն պահը, Նրանք հավատք չեն ընծայել Նրա աստվածայնությանը... սակայն մենք չենք ժխտում, որ Նրանք հանդիսանում են Նրա մարգարեության հավատացյալները»:³²

4. Երբ Նրա աշակերտները ականատես եղան Նրա հրաշքներին, Նրանք զարմացած էին: Ըստ Նրանց, եթե Յիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանար Ամենաբարձրյալ Ալլահը, Նրանք զարմանք չէին ապրի հրաշքների ներկայացմամբ: Երբ Նրանք անցան թզենու կողքով և ոչ մի պտուղ չգտան, Յիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասաց. «Եվ Նա ասաց թզենուն. «Թող ոչ մի պտուղ այլևս չլինի»: Եվ թզենին անմիջապես չորացավ: Երբ աշակերտները տեսան, Նրանք ապշեցին ասելով. «Ի՞նչպես է կարող թզենին անմիջապես չորանալ»»: (Մատթեոս 21:18-22) Զարմանքը Նշում է, որ Նրանք տեղյակ չէին ժամանակակից Քրիստոնյաների հայտարարությանը, քանի որ ոչ մի զարմանք չէր լինի, եթե Ամենաբարձրյալ Ալլահը չորացներ կանաչ ծառը:

Աշակերտները և Յիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ժամանակակիցները Նրան համարում էին միայն Մեսսիա, սպասված ամենամեծ

³² Ղուկասի Ավետարանի Մեկնաբանություն, Իբրահիմ Սափիդ Էջ.634

մարգարե: Նրանք չեն ենթադրել Նրա աստվածայնությունը կամ Ամենաբարձրյալ Ալլահի որդիությունը:

Եպիսկոպոս Մաթթա Ալ Մեսկիինը ասում է. «Աշակերտները Նրան համարել են միայն մարգարե, սակայն Նա ներկայացրեց արարքներ, որոնք ոչ մի մարգարե չի ներկայացրել...սա էլ ստիպել է Նրան համարել ավելին քան մարգարե, սակայն ո՞վ էր Նա: Աշակերտները հավաքել են Էական վկայություն, որը ապացուցում է Նրա Մեսսիա լինելը»:³³

Տեսնելով Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) հրաշքները Սամարացի մի կին ասաց. «Պարոն, ես ընդունում եմ, որ դու մարգարե ես»:
(Հովհաննես 4:19) և Նա ոչ մի այլ խոսք չավելացրեց: Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) արձագանքը ուղղություն կամ հանդիմանություն չէր, Նա չուղղեց Նրան, որովհետև դա այն էր ինչին հավատք էին ընծայում Նրա աշակերտները:

Նույնը տեղի ունեցավ, երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) բժշկեց կույրին, ով վկայեց Ամենաբարձրյալ Ալլահի հզորությունը, այն բանից հետո, երբ Նա բացեց իր աչքերը: Մարդիկ հարցրեցին Նրան. «Ինչպե՞ս բացվեցին քո աչքերը: Նա պատասխանեց. «Մի մարդ, ում անունը Հիսուս է»»:
(Հովհաննես 9:10-11) Ամեն դեպքում, ելնելով այս դեպքից, Քրիստոնյաները հավատք ընծայեցին, որ Նա ավելին է քան մարդ, ով խոստովանեց, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ուղղակի մարդ է:

Ամբոխները, ովքեր սովորություն ունեին Երուսաղեմում տեսնել Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) և գնալ ողջունել Նրան, երբ Նա մուտք գործեց որպես հերոս, համարեցին Նրան մարդ և մարգարե: «Եվ ամբոխները ասացին. «Սա մարգարե Հիսուսն է»:
(Մատթեոս 21:11)

Նույնիսկ Նրա հրեա թշնամիները համամիտ էին: Նրանք խնդրում էին ցույց տալ որևէ նշան, սակայն Նա պատասխանեց, որը նշանը կհանդիսանա Հովնանի

³³ Ղուկասի Ավետարանի Մեկնաբանություն

(Խ.Ա.Ռ.Ն) նշանը: «Այնուհետ որոշ դպիրներ և Փարիսեցիներ պատասխանեցին ասելով. «Ուսուցիչ, մենք ցանկություն ունեք նշան տեսնել քեզանից: Սակայն նա պատասխանեց. «Չար և մեղսավոր սերունդը ցանկություն ունի նշան տեսնել, սակայն ոչ մի նշան չի լինի, բացառությամբ մարգարե Յովնանի նշանի»»» (Մատթեոս 12:38-39)

Անկասկած, այդ հրեաները խնդրում էին որևէ նշան, որպեսզի ապացուցեն մարգարեությունը, ոչ թե աստվածայնությունը: Եթե Յիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) հայտներ աստվածայնությունը, որը նա չէր հայտնել, Յրեաները չէին ընդունի այդ և կխնդրեին մեկ այլ հրաշք, որը կլիներ ավելի հզորը, քան Յովնանի և այլ մարգարեների հրաշքերը:

Կասկածի տակ առնելով Յիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) մարգարեությունը, Փարիսեցիները դիտում էին Յիսուսին (Խ.Ա.Ռ.Ն), երբ մեղսագործ կինը մոտեցավ և մաքրեց նրա ոտքերը իր վարսերով, համբուրեց և օծեց: Նա ասաց. «Երբ Փարիսեցիները, ովքեր հրավիրեցին նրան տեսնելու դա, նա ինքն իրեն ասաց. «Եթե այս մարդը մարգարե լիներ, նա պետք է որ տեղյակ լիներ, թե ով է այն կինը ով դիպչում է, քանի որ նա մեղսագործ է»» (Ղուկաս 7:39)

Սրտի խորքում փարիսեցիները ժխտեցին Յիսուսի մարգարեությունը, ոչ թե աստվածայնությունը, որովհետև Յիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) տեղյակ չէր կնոջ ինքնությանը, որն էլ ապացուցում է, որ նա (Խ.Ա.Ռ.Ն) հայտնեց իր ուղղակի մարգարե լինելը:

Խնդրի հետ կապված Մաթթա Ալ Մեսկիինը ասում է. «Փարիսեցիները, երբ տեսան, որ Յիսուսը ընդունեց կնոջ արարքը, այդ համարեցին Յիսուսի ոչ մարգարե լինելու խոստովանություն, ինչպես ասում են մարդիկ»:³⁴

Ի լրացում, Յրեաները ցանկություն ունեին սպանել նրան, որպես ոճրագործ և նրանք մեղադրեցին նրան մարգարեության, ոչ թե աստվածայնության մեջ: Նրանք

³⁴ Ղուկասի Ավետարան, Մաթթա Ել Մեսկիին Էջ.331

ասացին Նիկողեմուսին. «Արդյո՞ք դուք էլ Գալիլեայից եք: Որոնեք և տեսեք, որ Գալիլեայից չի բարձրացել ոչ մի մարգարե»: (Յովհաննես 7:52) Նրանք մեղադրեցին նրան ստի մեջ ասելով, որ նա հանդիսանում է մարգարե, քանի որ Գալիլեայից չի հայտնվել ոչ մի մարգարե:

Սատանան նույնպես Հիսուսին (Խ.Ա.Ո.Ն) մարդ էր համարում: Նա նույնիսկ փորձեց գայթակղել նրան, քառասուն օր առանց սնունդի և ըմպելիքի նա Հիսուսին տարավ լեռը, որպեսզի փորձի, գայթակղի և խոստանա նրան աշխարհը, եթե նա գոնե մեկ անգամ խոնարհվի: «Կրկին սատանան տարավ նրան ամենաբարձր լեռը և ցույց տվեց ամբողջ աշխարհի թագավորությունները և փառքը: Եվ նա ասաց նրան. «Այս ամենը ես կտամ քեզ, եթե դու խոնարհվես և երկրպագես ինձ»: Հիսուսը պատասխանեց նրան. «Հեռացիր Սատանա, քանի որ գրառվել է. «Դու պետք է երկրպագես Տիրոջը, քո Աստծուն և միայն նրան դու պետք է ծառայես»»» (Մատթեոս 4:8-10) Արդյո՞ք Սատանան խոսք տվեց ամենը տալ Ամենաբարձրյալ Աստծուն, այն դեպքում, երբ նա ամեն ինչ ունի:

Մեկնաբանելով Մատթեոսի Ավետարանը և մեջ բերելով Երեմիայի խոսքերը, քահանա Թադրեսս Յակուբ Մալաթիին գրում է. «Սատանան մտադրված էր պարզել, թե արդյո՞ք Հիսուսը հանդիսանում է Աստծո Որդին, սակայն փրկիչը հիասքանչ էր իր պատասխանների մեջ, կասկածի մեջ թողնելով սատանային»: Ակնհայտ է, որ սատանան տեղյակ չէր Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության հայտարարության մասին:

Բացի այդ, եթե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանար Ամենաբարձրյալ Ալլահը, ապա ինչպե՞ս եք դուք կարող բացատրել Հուդայի դավաճանությունը: Արդյո՞ք որևէ մեկը ի վիճակի է դավաճանել Ամենաբարձրյալ Ալլահին:

Ինչպե՞ս եք կարող բացատրել Պետրոսի մերժումը երեք անգամ և ձերբակալության գիշերը Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) դատապարտությունը: Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) աստվածայնության, կամ Աստված լինելու փաստը առաջ է

բերում բազմաթիվ հարցեր, որոնք էլ իրենց հերթին չունեն ոչ մի պատասխան:

Վերջապես, ոչ միայն Նրա ժամանակակիցները, այլև Նախորդ մարգարեները, ում հավատք են ընծայում Քրիստոնյաները, ասացին, որ Նա ուղղակի մարդ է: Նրանք ասում են, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) լրացրել է այս մարգարեությունները, սակայն, ինչպես մենք տեղյակ ենք, այս մարգարեությունները գուշակել են գալիք Աստծո մասին, այլ առաքինի մարգարեի մասին, ոչ թե գալիք Աստծո:

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱԿԱՐԳ

Սրանք այն հատվածներն ու տարբերակներն են, որոնք հայտնում են Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մարգարեությունը, որն էլ հանդիսանում է աստվածայնության ժխտման ապացույցը:

Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) ժամանակակիցները մարգարեացրել են Նրա մարգարեությունը և ուղերձը, որոնք էլ հանդիսանում են Ամենաբարձրյալ Ալլահի մարդկային բնութագիրը: Հովհաննեսի Գրքի մեջ մենք ընթերցում ենք. «Դուք ինձ կոչում եք Ուսուցիչ և Տեր և դուք ճիշտ եք, քանի որ ես եմ»: (Հովհաննես 13:13) Այստեղ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ընդունեց և հաստատեց Նրանց հավատքը, քանի որ Նրանք Նրան տեր կոչեցին: Այդ ժամանակ սովորական երևույթ էր Նրան այդպես կոչել. «Եվ Նա ասաց Նրան ուսուցիչ»: (Մարկոս 10:20) Արդյո՞ք ավելի բարոյական չէր լինի Նրան «Տեր» համեստ տերմին փոխարեն «Աստված» կոչել:

Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) իր մարգարեությունը սկսեց երեսուն տարեկան հասակում. «Հիսուսը, երբ սկսեց իր առաքելությունը, մոտավորապես երեսուն տարեկան էր»: (Ղուկաս 3:23) և այդ ժամանակ Սուրբ Հոգին չէր տրվել Նրան: «Քանի որ Հոգին չէր տրվել, որովհետև Հիսուսը չէր փառաբանվել»: (Հովհաննես 7:39)

Ի լրացում, Հիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) ինքը խոստովանեց, որ իր Աստվածը մեկն է և նա հանդիսանում է ուղղակի մարգարե: «Դու, միակ ճշմարիտ Աստվածը և Հիսուս Քրիստոսն ես, ում դու ուղարկել ես»: (Հովհաննես 17:3) Նմանապես, նա ասում է. «Եվ նրանք գայթակղեցին նրան: Սակայն Հիսուսը ասաց նրանց. «Մարգարեն պատվելի չէ բացառությամբ իր տան և ժողովրդի կողմից»»: (Մատթեոս 13:57) Նա իրեն նմանեցրեց այլ մարգարեներին, ում չեն պատվել իրենց ժողովուրդները:

Երբ Փարիսեցիները սպառնացին Հիսուսին (Խ.Ա.Ռ.Ն) Հերոդոտոսով, նա մեկ անգամ ևս հաստատեց, որ նա հանդիսանում է ուղղակի մարգարե: Նա ասում է. «Ես պետք է այսօր և վաղը և հաջորդ օրը գնամ իմ ուղղով, քանի որ այն Երուսաղեմն է: Օվ Երուսաղեմ, Երուսաղեմ, քաղաք, որը սպանդի է ենթարկում մարգարեներին և քարկոծում է նրանց, ում ուղարկել են այնտեղ»: (Ղուկաս 13:33-34) Նա խոստովանեց իր մարգարեությունը և նա վախ Եր ապրում մարդասպանից, ինչպես այլ մարգարեները, ուստի, նա լքեց Երուսաղեմը այն կոչելով «մարգարեների մարդասպան», ոչ թե «Աստվածների մարդասպան»:

Երբ նա (Խ.Ա.Ռ.Ն) ներկայացնում էր իր հրաշքները, նա աղոթում էր Ամենաբարձրյալ Ալլահին կապելով ամենը իր ուղերձի և մարգարեության հետ: «Սակայն ես կրկնում եմ այս շրջապատի մարդկանց համար, որպեսզի նրանք հավատք ընծայեն, որ դու ուղարկել ես ինձ»: (Հովհաննես 11:42)

Երբ Հրեաները մեկ անգամ փորձեցին սպանել նրան, նա մի հայտարարություն արեց, որտեղ նա պարզորոշ խոստովանեց, որ նա մարդ է և ուղղակի Ամենաբարձրյալ Ալլահի մարգարե: «Եվ այժմ դուք փորձում եք սպանել ինձ, մարդու, ով ասել է ձեզ ճշմարտությունը, որը ես լսել եմ Աստծուց»: (Հովհաննես 8:40)

Հաստատելով սա, բազմաթիվ անգամներ նա ասել է իր աշակերտներին, որ հանդիսանում է մարգարե և նրա խոսքերը անսխալական են, քանի որ նա խոսում է Ամենաբարձրյալ Ալլահի ոգեշնչությամբ: «Կրկին Հիսուսը

ասաց Նրանց. «Խաղաղություն լինի ձեզ: Ինչպես Հայրը ուղարկել է ինձ, նույնպես ես ուղարկում եմ ձեզ»»:
(Հովհաննես 20:21)

Նա ևս մեկ անգամ հաստատեց սա, երբ ասաց. «Հայրը, ով ուղարկել է ինձ, ինքը տվել է ինձ պատվիրաններ, թե ինչ ասել և ինչ խոսել»:
(Հովհաննես 12:49) և նա ասաց. «Խոսքը, որը դուք լսում եք, չի պատկանում ինձ, այլ Հորը, ով ուղարկել է ինձ»:
(Հովհաննես 14:24)

«Իմ ուսմունքը ինձ չի պատկանում, այլ Նրան, ով ուղարկել է ինձ»:
(Հովհաննես 7:16) Նա նույնպես ասում է. «Ոչ էլ գոյություն ունի մարգարե ավելի հզոր, քան մեկը, ով ուղարկել է Նրան»:
(Հովհաննես 13:16)

Այն, որ այդ ժամանակահատվածում բոլորը հավատք են ընծայել Նրան որպես մարգարե և հաստատել են այդ, առանց իր առարկության, մեկ այլ հաստատում է, որ Նա (Խ.Ա.Ո.Ն) ուղղակի մարգարե է: «Վախը պարուրեց Նրանց բոլորին և Նրանք փառաբանեցին Աստծուն ասելով. «Մեծ մարգարե է բարձրացել մեզանից»:
(Մատթ 23:16) և «Աստված այցելել է իր ժողովրդին»»:
(Ղուկաս 7:16) և երբ նա սնեց ամբոխը հինգ կտոր հացով և երկու ձկով, մարդիկ ասում են. «Սա իրոք, Մարգարեն էր, ով պետք է աշխարհ գար»:
(Հովհաննես 6:14) Նույնիսկ Պողոսը «քանի որ գոյություն ունի մեկ Աստված և մեկ միջնորդ Աստծո և մարդու միջև, այդ մարդը Հիսուս Զրիստոսն է»:
(Թիմոթեոս Ա 2:5)

Իր «Տարածվող Տիեզերքը» աշխատության մեջ Պր. Արթուր Ֆինդայլը ճշմարիտ էր: Նա ասում է. «Հիսուսը չէր հանդիսանում Աստված կամ փրկիչ, այլ Աստծո մարգարե, ով իր կյանքի ընթացքում ծառայեց, որպեսզի բժշկի տկարներին և հանդերձյալ կյանք ավետի: Նա ուսուցանեց, որ այս աշխարհի կյանքը հանդիսանում է Աստծո Արքայության ուղղակի նախապատրաստություն, որն էլ նշանակում է յուրաքանչյուր առաքինու ավելի լավ կյանք»:

Սա էլ ապացույց է, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի ծառան և Նրա մեծ մարգարեն, որն

Էլ համապատասխանում է մահմեդական հավատքին: «Նա ոչ ավելին էր, քան ծառա. Մենք շնորհում ենք Մեր շնորհը նրան և Մենք նրան օրինակ ենք դարձնում հարայելի շավակներին»: (Սուրբ Ղուրան 43:59)

ՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Քրիստոնյաները հավատք են ընծայում, որ Ամենաբարձրյալ Ալլահը մարմնավորվել է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մեջ, որի ապացույց են հանդիսանում Հովհաննեսի Ավետարանը: «Եվ Խոսքը մարմին դարձավ և բնակություն հաստատեց մեր մեջ»: (Հովհաննես 1:14)

Հասկանալու համար այս հատվածը, մենք ընթերցում ենք Մոնասթիկ Ջերսույթի Խմբագրության գիտնականների խոսքերը կապված մարմնավորման իմաստության հետ, որն էլ կարելի է գտնել (Առակներ 8:22 մեջ): Նրանք ասում են. «Մարմնավորված իմաստության գաղափարը, որը հանդիսանում է ուղղակի գրական արվեստ, ինչպես (Առակներ 14:1) զարգացում է ապրել Իսրայելում, գերության ժամանակաշրջանում, երբ կուռքերի երկրպագությունը ճշմարիտ կրոնի սպառնալիքն էր: Բոլոր հատվածների մեջ, որոնք նշում են մարմնավորված իմաստությունը, ոգու խոսքը, դժվար է տարբերակել պոետիկ արվեստը, հին կրոնական հավատքը և նոր ոգեշնչությունը»:

Ուստի, հնարավոր է, որ հատվածը, որը խոսում է մարմնավորված խոսքի մասին, ուղղակի գրական արվեստ է, որն էլ նույնն է ինչ փոխաբերական մարմնավորումը իմաստությունը, երբ դուրս է գալիս. «Իմաստությունը ավելի բարձր է փողոցներում, շուկաներում և բարձրաձայնում է և աղմկոտ փողոցների սկզբնահատվածում բղավում է»։ Առակներ 1:20-21 և «վայրի կին համարում անգիտությունը»։ (Առակներ 9:13-18)³⁵

Այս առումով գիտնականները հարցնում են մարմնավորված Որդու պատճառի մասին և, թե ինչու այն Հոր կամ Սուրբ Հոգու մարմնավորում չէ: Նրանք հարցրեցին, թե ինչու պետք է Ամենաբարձրյալ Ալլահը մարմնավորվի մարդկային

³⁵ Տես նույնպես Սինարք 4:11, Առակներ 9:1-6, 23:23 և այլ հատվածներ:

պատկերի մեջ, իջնի իր Բարձր գահից, մտնի կնոջ արգանդի մեջ և վերջապես ծնվի նրանից:

Հոգևորականները ջանասիրաբար աշխատել են այս հարցերի շուրջ և գրքերի մեջ չգտնելով որևէ պատասխան, նրանք կիրառեցին իրենց մտքերը: Հետևաբար, նրանք ունեն տարբեր կարծիքներ և քանի որ նրանք չեն կարող ապացուցել Պողոսի հայտարարությունը Աստծո մարմնավորման հետ, նրանք նույնպես չեն կարող գտնել այդ մարմնավորման պատճառը:

Նրանց պատասխանները և եզրահանգումները հետևյալն են.

ԱՌԱՋԻՆ. Սա առեղծված է, որը մենք ունակ չենք ընկալել, սակայն, մենք պետք է հավատք ընծայենք:

ԵՐԿՐՈՐԴ. Մարմնավորումը տեղի է ունենում որպեսզի լրացնի Ամենաբարձրյալ Ալլահի և մարդկության միջև գոյություն ունեցող անջրպետը և հաշտեցնի Ամենաբարձրյալ Ալլահին տեսնելու հնարավորությունը:

ԵՐՐՈՐԴ. Մարմնավորումը հանդիսանում է մի ուղղի, որը կարող է մարդկանց վերադարձնել առ Ամենաբարձրյալ Ալլահը և երկրպագել Նրան և դադարել երկրպագել կուռքերին և այլ արարածներին; ուստի. Ամենաբարձրյալ Ալլահը մարմնավորեց իրեն մարդկային պատկերի մեջ, որպեսզի Նրան երկրպագեն: Սուրբ Եփրահիմը ասում է. «Աստված տեսավ մեզ, մարդկանց արարածներ և կուռքեր երկրպագելիս, այդ իսկ պատճառով Նա կրեց արարված մարմինը, որպեսզի մենք երկրպագենք Նրան»:³⁶

ԶՈՐՐՈՐԴ. Մարմնավորումը անհրաժեշտություն է, որպեսզի հաշտեցնի Ամենաբարձրյալ Ալլահի արդարությունը և Նրա գթասրտությունը, քանի որ Նրա արդարությունը ձեռնադրեց մարդկային մահը և Նրա գթասրտությունը ձեռնադրեց, որ

³⁶ Անկեղծ կարծիք Քրիստոսի կամքի և բնույթի մասին, եպիսկոպոս Գաբրիել Աբդել Մասիիի էջ.59

Նրանք ապրեն, այդ իսկ պատճառով զոհաբերեցին Հիսուսին (Խ.Ա.Ռ.Ն.):

Խնդրի հետ կապված Նիկիայի ժողովի ամենակարևոր անդամներից մեկը, Եթանասիուսի ասում է. «Այդ իսկ պատճառով Աստծո խոսքը պետք է տարանջատի մեղսավորին առաքիլուց: Միևնույն ժամանակ, լրացնի այն, ինչ պահանջում է հայրը և այդ իսկ պատճառով Հիսուսը Աստծո խոսքն է, Նա միակ հարմար անհատն էր, ով կարող էր նորացնել ամենը և հոր առջև կրել ցավը բոլորի փոխարեն: Այդ իսկ պատճառով Նա մարմնով մեր երկիր իջավ, մաքուր և առանց մեղքի: Նա չի կրել մահվան ցավը, որպեսզի կանխի մարդկանց մահը, որովհետև այնուհետև նրա հոր արարածը կկորչի: Նա վերցրեց մի մարմին, որը նման է մեր մարմնին: Եթե Նա չգար և բնակություն չհաստատեր մեր մեջ, այդ կլիներ մարդկային ցեղի ավարտը»:

Արդյո՞ք Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) մահը փոխեց մարդկային մահվան խնդիրը, կամ արդյո՞ք մարդիկ մինչ այժմ կնքում են մահկանացուն:

Հարցին պատասխանելով Եթանասիուսը ասում է. «Մահը մուտք գործեց այս աշխարհ սատանայի չարախնդրությամբ: Դրանից հետո, մադիկ սկսեցին մեղք գործել և մահանալ, սատանան ունի ավելի մեծ իշխանություն, քան ենթադրվում է, որովհետև Նա եկավ որպես Աստծո սպառնալիքի պատճառ, մեղքի դեպքում»:

Զարմանալի է, թե ո՞րն է հանդիսանում մահվան բնական իշխանությունը և ո՞րն է մարդկանց մահվան տարբերությունը մինչ Հիսուսը (Խ.Ա.Ռ.Ն) և Հիսուսից հետո: Հարց է ծագում, թե ո՞րն է մահվան գաղտնիքը:

Նույնպես, Եթանասիուսը նշում է Ամենաբարձրյալ Ալլահի մարմնավորման մեկ այլ պատճառ, որը պետք է հարգստացնի մարդկանց: Նա ասում է. «Երբ Աստվածը, ամենի կառավարիչը արարեց մարդկանց իր խոսքով և տեսավ Նրանց տկարությունը Աստծո ճանաչման գործում

կամ նույնիսկ Նրա գաղափարի, Նա իջավ, որպեսզի ցույց տա նրանց իրեն: Նա չի թողել մարդկանց առանց իր մասին գիտելիքի, որպեսզի կանխի նրանց կարծել, որ իրենց գոյությունը անօգուտ է»:³⁷

Ըստ այդմ, Ամենաբարձրյալ Ալլահի մարմնավորումը մարդկության համար է, որպեսզի նրանք ճանաչեն իրենց Աստծուն և ջնջեն Արարչի և Արարածի միջև գոյություն ունեցող անջրպետը: Այդ իսկ պատճառով «Բնօրինակ Քրիստոնեությունը» գրքի մեջ Մտթը նշում է, «գոյություն ունի անվերջ մեծ անջրպետ.... ի լրացում, եթե Աստված չսկսեր և չփոփոխեր հարցը, այն կմնար նույնը: Մարդիկ կլինեին անհույս, փնտրտուքի մեջ, սակայն Աստված խոսեց և հայտարարեց իրեն»:³⁸

Դուկ. Աբդուլ Քարիմ Ալ Խաթիբը զարմանք է ապրում. «Ինչպե՞ս է հնարավոր նմանատիպ անջրպետ մարգարեների և իրենց Աստծո հարաբերությունների միջև»:

Արդյո՞ք նրանք ճանաչում են իրենց Աստծո Էական գիտելիքը, որը ուղղորդում է նրանց երկրպագել և հնազանդվել նրան:

Արդյո՞ք նրանց Ամենաբարձրյալ Ալլահի հավատքը թույլ և սխալ է:

Ինչպիսի՞ փոփոխություններ են տեղի ունեցել մարդկության հետ Ամենաբարձրյալ Ալլահի մարմնավորումից հետո: Արդյո՞ք բոլոր մարդիկ հավատք են ընծայում Ամենաբարձրյալ Ալլահին և ճանաչում են Նրան: Արդյո՞ք Աթեիզմը վերացավ աշխարհի երեսից:

Ինչպիսի՞ հաճույք է ստանում մարդկությունը, երբ տեսնում է իր Աստծուն ծեծված, ապտակված և անարգված: Այս իրենց մտքերի մեջ նվազեցնում է Ամենաբարձրյալ Ալլահի

³⁷ Քրիստոսը Ղուրանի, Թորայի և Ավետարանի մեջ Աբդուլ Քարիմ ել Խատիբ էջ.158-160

³⁸ Իբիդ 130-132 160-170

յուրաքանչյուր հավատք, քանի որ մարդկությանը արարել են անտեսանելի տեղեկության ցանկությամբ և հետաքրքրությամբ: Երբ նրանք տեղեկանում են, եթե անհայտը հայտնվի, այլևս չի լինի հետաքրքրություն և իրենց փնտրտուքի ցանկությունը կնվազի:

Ապա ի՞նչ կասեք հաջորդ սերունդների մասին, ովքեր չեն ունեցել մարմնավորված Աստծո տեսնելու հաճույքը: Արդյո՞ք արդար է դուրս մղել նրանց: Ինչպե՞ս են նրանք կարող ճանաչել իրենց Աստծուն, եթե չեն տեսնում նրան:

Ինչու՞ ենք մենք հաճույք և հանգստություն ստանում տեսնելով Ամենաբարձրյալ Ալլահին Իր մանկության և երիտասարդության, այլ ոչ թե միջին և ծեր տարիքում:

Մահմեդականները ժխտում են այս արդարացումը, ինչը վիրավորում է Ամենաբարձրյալ Ալլահի մեծությունը, դարձնում է Նրան անընդունակ թողությանը և շփոթեցնում է Նրան Իր գթասրտության և Իր արդարության մեջ: Նմանատիպ խնդիր չի ծագում իմաստուն մարդկանց հետ, այդ դեպքում, ինչպե՞ս ենք մենք կարող ընդունել Ամենաբարձրյալ Ալլահի համար:

Նմանատիպ արդարացումը Ամենաբարձրյալ Ալլահին դարձնում է ոչ պիտանի ուղղորդել մարդկանց, որպեսզի նրանք երկրպագեն Իրեն, բացառությամբ բազմաստվածային կերպ, ինչպես որ նրանք տեղյակ են:

Զարլզ Գենե Պիեռը համակարծիք է, Նա համամիտ է այս արդարացումների թուլության հետ: Նա հաստատում է, որ Պողոսը այն մեկն էր, ով արարել է մարմնավորված Աստծո գաղափարը: Նա բացատրում է այն պատճառները, որոնք ուղղորդել են Պողոսին այդպես վարվել: Պողոսը հանգել է մարմնավորման գաղափարին, գիտակցելով, որ «նոր բազմաստված հետևորդները չեն ընդունի խաչելության սկանդալը և պետք լինի լավ բացատրություն Հիսուսի ամոթալի մահվան, որի շուրջ թշնամին չի դադարել առաջացնել խնդիրներ: Բացատրությունը պետք է լինի

Եական, որպեսզի խաչելությունը դարձնի խորը կրոնական եության:

Պողոս առաքյալը զբաղվել է այս խնդրով... Նա զարգացրել է լուծումը, որը հսկայական ազդեցություն է թողել, նա անտեսում է Հիսուս Նազովրեցու գաղափարը, որն էլ հանդիսանում է տասներկուսի գաղափարը: Նա ոչինչ չի նշում, բացի խաչված Հիսուսից, պատկերելով նրան որպես աստվածային կերպար, ով գոյություն ուներ մինչ աշխարհը և համարել է նրան անձնավորման մի տեսակ: Առաքյալը գտավ գաղտնիքների հիմնական տարրերը, նա գտավ, առանց նույնիսկ փնտրելու...»³⁹

Պողոսը դեմ հանդիման կանգնեց մեկ այլ դժվարության հետ, երբ նա ավարտին էր հասցնում մարմնավորված Աստծո գաղափարը և արդյո՞ք այդ նա պատրաստվում էր ասել խաչի վրա Հիսուսի մահվան մասին, քանի որ Թորան հայտնում է, որ յուրաքանչյուր խաչված անհատ անիծված է: (Երկրորդ օրենք 21:23) Ուստի, այս ամոթալի մահը անարգում է Հիսուսին և որն էլ անիծեց նրան ըստ հրեական օրենքի:

Այս ճակատագրական խնդիրը լուծելու համար Պողոսը որոշեց անեծքը դրաձնել զոհողության օրինակ և վերածեց նրան Աստծո, ով ժառանգեց և մարմնավորվեց, որպեսզի փրկի մարդկային մեղքերը: Նա անիծվեց որպես Օրենքի անեծքի փրկագին, ինչպես ասում է Պողոսը. «սակայն Աստված ցույց է տալիս իր սերը մեզ, սակայն մենք դեռ մեղսագործներ ենք, Քրիստոսը մեզ համար կնքեց մահկանացուն: Այդ պահից, ուստի, մենք արդարացվել ենք իր արյամբ, ավելի շատ մենք կփրկվենք նրա միջոցով Աստծո զայրույթից: Քանի որ, եթե մենք թշնամիներ էինք, ապա մենք հաշտվել ենք Աստծո հետ, Որդու մահով»:

³⁹ Քրիստոնեությունը, սկիզբը և զարգացումը: Չարլզ Գենե Պիեր Էջ.134

(Հռոմեացիներ 5:8-10) Նա դարձավ անեծք, որպեսզի մեզ փրկի Օրենքի անեծքից:⁴⁰

Վերջապես, այն ինչ ասում են Քրիստոնյաները Ամենաբարձրյալ Ալլահի մասին, բազմազանությունը և մարմնավորումը, հանդիսանում է մարդկային չնչինության մի տեսակ և Ամենաբարձրյալ Ալլահի հստակ անարգանք: Ինչպես ասել է Մուհամմեդ, Մաջդի Մուրաջը, քանդակագործը «երբ նա արձան է կերտում, կարող է կործանել այն և ոչ ոք չի կարող ասել, որ արձանը կարող է հայտարարել, որ պատրաստվել է միևնույն նյութերից, ինչ իրեն պատրաստողը, կամ որ կազմում է Նրա մի մասը: Անգոր մարդը, ով հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի արարածներից, համարձակվեց վիրավորել Արարչին, Նա դարձավ ամբարտաժան և տգետ և այնուհետ գլխիվայր շրջեց փաստերը: Նա վերափոխեց իր Արարչին և իր իսկ երևակայությունից ելնելով, բաժանեց Նրան երեք մասի, յուրաքանչյուր մասը դարձնելով Աստված, հետևաբար փոխելով մեկ և եզակի Աստծուն երեքի: Նա նույնպես բաժանեց երեք աստվածների աշխատանքը և բեռը, որպեսզի խղճա մեկ Աստծուն, այնպես, որ Նա կրի այդ բեռը միայնակ: Որքան ճշմարիտ է մարդը»:⁴¹

Փաստորեն, մարմնավորման գաղափարը հանդիսանում է Քրիստոնյաների մեջ տարածված աթեիզմի ամենակարևոր պատճառը: Մարդ արարածը հակված է փառաբանել և գնահատել Արարչին, ելնելով իր իսկ ոգուց և բնագրից և համարել Նրան ամենապաշտելի և վեր որևէ մեկի հետ հավասարությունից: Քրիստոնեությունը, Ամենաբարձրյալ Ալլահին դարձնում է մարդ, ով դուրս է եկել Իսրայելցի կնոջ արգանդից:

⁴⁰ Գրքի մարդիկ, եկեք գանք ընդհանուր հայտարարի Ռաուֆ Շալաբի էջ.265

⁴¹ Ամենաբարձրյալ Աստվածը մեկ, թե երեք: մուհամմեդ, Մաջդի Մորջան էջ.125

Քրայնս Այերսոլդը ասում է. «Ելնելով գիտական տեսանկյունից, ես չեմ կարող Աստծուն պատկերացնել որպես նյութական, ում կարելի է տեսնել կամ տեղափոխել»:⁴²

Հետևաբար մարդիկ դեմ հանդիման կանգնում են դժվարության առջև, որպեսզի ընտրեն սխալ հավատքը և ճշմարիտ բնագործը, որոնց աջակցում են նրանց կարծիքները: Նրանցից շատերը չեն գտնում որևէ այլընտրանք, ուստի դեմ են գնում եկեղեցուն, որը տանջում է Աստծուն, ինչն էլ աճեցնում է Աթեիզմը: Ամենաբարձրյալ Ալլահը վեր է ամենից:

Մարմնավորման դավանանքի բացասական կողմերից մեկը այն է, որ թուլացնում է բարոյականությունը և սկզբունքները, որոնք ուսուցանել է Հիսուսը և հետևորդների համար օրինակ ծառայել: Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն.) աստվածայնության կոչը ազդում է այս ամենի վրա, քանի որ մարդիկ չեն կարող հետևել և գործել այն, ինչ գործել է Ամենաբարձրյալ Ալլահը:

Ամերիկանա Հանրագիտարանի հեղինակները ասում են. «Եթե Հիսուսը Աստված լիներ, ապա բարոյականությունը և սկզբունքները, որոնք նա ներկայացրել և տվել է մեզ իր համեստ կյանքի ընթացքում, կլինեին անգնահատելի, քանի որ նա ուներ այն հզորություն, որը մենք չունենք և մարդիկ չեն կարող նմանակել Աստծուն»:

Իր «Հիսուսի հետքերով» գրքի մեջ Թոմաս Եքեմբեշին ասում է. «Եթե Հիսուսը Աստված լիներ, ապա ոչ ոք չէր կարող հետևել նրան և ավանդություններին»:

⁴² Պատմության Միաստված Քրիստոնյաները, Աիմեդ Աբդուլ Ուահաբ Էջ.38-39,45

Սուրբ Հոգու Աստվածայնությունը

Մահմեդականների համար Սուրբ Հոգին հանդիսանում է Գաբրիել Ջրեշտակի և Ամենաբարձրյալ Ալլահի ոգեշնչության անունը և մարգարեների իր աջակցությունը:

Սուրբ Ղուրանը Գաբրիել Ջրեշտակին կոչում է Սուրբ Հոգի: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Ասա, Սուրբ Հոգին հայտնություն է բերել ձեր Տիրոջից ճշմարտության մեջ»: (Սուրբ Ղուրան 16:102) Նույնպես Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Այնուհետև Ալլահը ասում է. «Օվ Հիսուս, Մարիամի որդի: Հաշվիր իմ շնորհը քեզ և քո մորը: Ահա, ես ամրացնում եմ ձեզ սուրբ հոգով»»: (Սուրբ Ղուրան 5:110)

Ի լրացում, Սուրբ Ղուրանը իր մարգարեների ուղղված Ամենաբարձրյալ Ալլահի ոգեշնչությունը կոչում է Ոգի: Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Եվ, ուստի, Մենք ունենք, Մեր Պատվերով, ուղարկված ոգեշնչություն ձեզ»: (Սուրբ Ղուրան 42:52) Նա նույնպես ասում է. «Բարձրացված դիրքով, (կամ աստիճանով), Նա հանդիսանում է Գահի Տերը (իշխանությամբ). Իր Հրամանով Նա ուղարկել է Ոգի (ոգեշնչություն) իր այն ծառաներին, ում Նա է ցանկանում»: (Սուրբ Ղուրան 40:15)

Հարկ է նշել, որ Սուրբ Հոգու հետ կապված Սուրբ Ղուրանի խոսքերը մոտ են Աստվածաշնչի խոսքերին, սակայն համամիտ չեն Կոնստանտինոպոլիսի ժողովի իմաստի հետ:

Սուրբ Աստվածաշունչը նշում է, որ բազմաթիվ արարածներ պահպանում են «Սուրբ Հոգի» անվանումը.

1. Մարդկային ոգին, որը Ամենաբարձրյալ Ալլահը արարել է իր արարածների մեջ, հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի Ոգին, որն էլ Նա արարել է նրանց մեջ: «Եվ առաքիկների ոգիները կատարյալ են»: (Հրեաներ 12/23) «Երբ դուք վերցնում եք նրանց շունչը, նրանք կնքում են մահկանացուն և վերադառնում են փոշու: Երբ դու ուղարկում ես քո Ոգին, նրանք արարվում

են և դու վերականգնում ես երկրի երեսին»: (Սադմուսներ 104/29-30) Ամենաբարձրյալ Ալլահը միևնույն ոգով կյանք տվեց Ադամին: «Եվ փչում նրանց քթանցքները կյանքի շունչ, և մարդը դառնում է կենդանի արարած»: (Ճննդոց 2/7) Այս ոգին կոչվում է «Ամենաբարձրյալ Ալլահի ոգի» քանի որ այն ծագում է Ամենաբարձրյալ Ալլահից և Նրան է մեր վերադարձը: «Եվ ոգին վերադառնում է Աստծուն, ով տվել է այն»: (Եկ.12/7)

2. Ոգեշնչությունը, որը հրեշտակները կրում են մարգարեների համար. «Դավիթը ինքը, Սուրբ Հոգով հայտնեց»: (Մարկոս 12/36) նույնպես. «Եվ նրա հայր Չաբարիան լցվեց Սուրբ Հոգով»: (Ղուկաս 1/67) Պետրոսը ասում է. «Եղբայրներ, Գրեք պետք է լրացնել, որի մասին նախապես խոսել է Սուրբ Հոգին Դավթի շուրթերով»: (Գործք 1/16) Ամենաբարձրյալ Ալլահը կոչեց մարգարեներին և այն, ինչ նրանք բերում են իրենց ոգեշնչությամբ որպես Սուրբ Հոգի, Նա ասում է հանդիմանելով Իսրայելի ժողովրդին. «Դուք կամակոր ժողովուրդ, անթլպատ սրտով և աչքով, դուք միշտ դիմադրում եք Սուրբ Հոգուն: Ինչպես ձեր հայրերը այնպես էլ դուք: Ո՞ր մի մարգարեին չեն դատապարտել ձեր հայրերը»: (Գործք 7/51-52)

3. Սուրբ Հոգին նույնպես հանդիսանում է օգնության և իմաստության անունը, որը Ամենաբարձրյալ Ալլահը տվել է իր մարգարեներին և այլոց և հրեշտակները և այլոք կարող են տարածել այն: Հիսուսը ասում է. «Սակայն այդ Աստծո Հոգու միջոցով է, որ ես հանեմ սատանաներին»: (Մատթեոս 12/28) և ինչ ասաց փարավոնը իր ծառաներին, երբ Նա փնտրում էր իմաստուն մեկին: «Արդյո՞ք մենք կարող ենք գտնել նմանատիպ մեկի, ում մեջ Սուրբ Հոգին է»: (Ճննդոց 41/38) «Այժմ, գոյություն ունեւ մի մարդ Երուսաղեմում, ում անունը Սիմոն էր և այս մարդը առաքինի և նվիրյալ էր, սպասում էր Իսրայելի սփոփանքին և Սուրբ Հոգին նրա մեջ էր»: (Ղուկաս 2/25) Նույնպես Սուրբ Հոգին աջակցեց աշակերտներին տասնհիգերորդ օրը. «Եվ նրանք բոլորը լցվեցին Սուրբ Հոգով և սկսեցին խոսել

այլ լեզուներով, ինչպես Յոգին է տվել Նրանք»։ (Գործք 2/4) Սա Նույն խոսքերն են ինչ ասել է Հագգան. «Իմ Յոգին մնաց ձեր մեջ։ Մի վախեցեք»։ (Հագգաի 2/5)

4. Ուժեղ քամուն էլ կոչում են Սուրբ Յոգի։ Նկարագրելով կործանիչ քամին, Թորան ասում է. «խոտը չորանում է, ծաղիկները թառամում են, երբ Տիրոջ շունչը փչում է»։ (Եսայի 40/7) Նույնը կարելի է տեսնել Ճնևոցի մեջ. «Եվ Աստծո Ոգին շրջում է ջրերի վրա»։ (Ճնևոց 1/2) Այստեղ առկա է թյուրիմացություն, որը ուղղորդում է շփոթմունքի։ Ըստ Եսայիական հատվածը ասում է. «Նշանակում է ուժեղ քամի, որը եկել է Աստծուց և դադարեցնում է խավարը»։

Ավելին, այն ինչ կապված է Ամենաբարձրյալ Ալլահի ոգու հետ, ապա վերջին երկու հատվածները հանդիսանում են փառաբանություն և հարգանք։ Այն ասում է. «Աստծո լեռները»։ (Սադմոսներ 36/6)

Նրանք, ովքեր երկրպագում են Սուրբ Յոգին չեն ընդունում այն բոլոր իմաստները, որոնք ես նշում եմ։ Նրանք չեն ընդունում այն գաղափարը, որ Սուրբ Յոգին հանդիսանում է Ամենաբարձրյալ Ալլահի հզորությունը, կամ հրեշտակը։ Ըստ Զրիստոնեական գաղափարախոսության Սուրբ Յոգին Աստվածն է, որն էլ Երրորդության հիպոթեզն է։ Ըստ Նրանց գաղափարի ի՞նչ է Սուրբ Յոգին։ Ո՞ր վկայության հիման վրա են նրանք համարում նրան Աստված։ Ե՞րբ է դա տեղի ունեցել։

381 թվականին Կայսր Տեդիուսի հրամանով կազմավորվեց Կոնստանտինոպոլիսի ժողովը, որպեսզի քննարկեն եպիսկոպոս Մաքեդոնիուսի հավատքը։ Նա ժխտեց Սուրբ Յոգու աստվածայնությունը և հավատք ընծայեց Սուրբ Գրքերի խոսքերին։ Նա հավատք է ընծայում, որ «Սուրբ Յոգին աստվածային աշխատանք է, որը տարածվել է աշխարհում, այլ ոչ թե աստվածային անհատ, ով տարբերվում է Հորից կամ Որդուց» և «Նա նման է բոլոր արարածներին» և նա իրեն տեսավ Որդու ծառայի կարգավիճակում, ինչպես հրեշտակները։

Հարյուր հիսուն քահանա իրենց մասնակցությունը ունեցան: Նրանք որոշում կայացրեցին զրկել Մակեդոնիուսին իր իշխանությունից և կայացրեցին ևս մեկ կարևոր որոշում, որը երբեք, մինչ այդ չէր կայացրել եկեղեցական ժողովը, որն էլ Սուրբ Յոգու երկրպագություն էր: Նրանք ենթադրեցին այն երրորդության բաղադրիչ: Նրանք ասում են. «Մենք որևէ այլ իմաստ չունենք կապված Սուրբ Յոգու հետ, բացառությամբ Աստծո Յոգու, Աստված ոչինչ է բացառությամբ իր կյանքի և ասել, որ Սուրբ Յոգին արարած է, նույնն է, ինչ ասել, որ Աստված արարած է»:⁴³

Քահանա Յասին Մանսուրը ասում է. «Սուրբ Յոգին հանդիսանում է հավերժ Աստվածը, նա գոյություն է ունեցել մինչ արարումը և նա ամենի արարիչն է, ով ի վիճակի է լինել ամեն ինչ: Նրա ներկայությունը ամենուր է և նա հավերժ և անվերջ է»:

Նա նույնպես ասում է. «Սուրբ Յոգին հանդիսանում է երրորդության երրորդ հիպոթեզը: Նա ուղղակի հզորություն կամ բնորոշում չէ, այլ իրական ինքը և կենդանի էակ, և որոշակի աստվածային էակ: Նա առանձին չէ, նա աստվածային միություն է, որը տարբերվում է Յորից և Որդուց, սակայն համահավասար է հզորությամբ և դիրքով, կիսելով Նրանց հիմքը և միևնույն աստվածայնությունը»:⁴⁴

Քրիստոնյաները հաշվի են առնում Յովհաննեսի Կտակարանը, երբ խոսում են Սուրբ Յոգու աստվածայնության մասին: «Աստված հոգի է» (Յովհաննես 4/24) Նույնպես, նրանք հավատք են ընծայում, որ նա ոգի է, որը գոյություն է ունեցել արարածներից սկսած. «Սկզբում Աստված արարեց երկինքները և երկիրը: Աստծո Յոգին շրջում էր ջրերի երեսին»։ (Ծննդոց 1/1-2) Բազմաթիվ այլ

⁴³ Գրքի մարդիկ, Եկեք ընդհանուր Հայտարարի, Ռաուֆ Շալաբի Էջ.218-221

⁴⁴ Քրիստոնյա Հիպոստաս, Ահմեդ Ջեջազի Ասսաքա Էջ.42-44 Ալլահը մեկը, թե երեքն է, Մուհամմեդ Մագդի Մորջան Էջ.116-125

հատվածներ նույնպես նշում են ոգին ,Աստծո ոգին, կամ
Սուրբ Հոգին:

ՅԵՐՔԵԼՈՎ ՍՈՒՐԲ ՅՈԳՈՒ ԱՍՏՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Ես ենթադրում եմ, որ այն, թե ինչ ես նշել եմ Սուրբ Աստվածաշնչի մեջ գետնեղված Սուրբ Յոգու իմաստի մասին, բավարար է հերքելու այս տարօրինակ հավատքը: Ավելին, «Սուրբ Յոգի» խոսքերի իմաստը, որոնց հավատք են ընծայում Քրիստոնյաները, առկա չէ Սուրբ Աստվածաշնչի մեջ: Եթե մենք ուշադիր ուսումնասիրենք հատվածները, որոնք նշում են Սուրբ Յոգին, մենք համոզված կլինենք այս հավատքի տարօրինակությանը:

Սուրբ Յոգին մարմնավորվեց տարբեր կերպարների մեջ – մեկը որպես աղավնի, որը իջավ Զիսուսի (Խ.Ա.Ո.Ն.) վրա, երբ նա աղոթում էր «և Սուրբ Յոգին իջավ նրան մարմնավորված, ինչպես աղավնի» (Ղուկաս 3/22) Արդյո՞ք այդ աղավնին Ամենաբարձրյալ Ալլահն էր:

Մեկ այլ անգամ այն եկավ ինչպես կրակոտ լեզուներ, երբ տասնհինգերորդ օրը ստվերեց աշակերտներին: «Եվ հանկարծ երկնքից հզոր քամու ձայն հնչեց և այն լցրեց ամբողջ տունը, որտեղ նրանք նստած էին: Եվ բաժանված լեզուները ինչպես կրակ, հայտնվեց նրանց և հանգստություն ստացան նրանցից յուրաքանչյուրի մեջ: Եվ նրանք լցվեցին Սուրբ Յոգով»: (Գործք 2/2-4)

Ինչու՞ Քրիստոնյաները չեն ընդունում Սուրբ Գրքի այն փաստը, որ Սուրբ Յոգին կարող է լինել Գաբրիելը, կամ Ամենաբարձրյալ Ալլահի հրեշտակը: Սուրբ Յոգին եկավ Կորնելիոսին և Պետրոսին և նա Ամենաբարձրյալ Ալլահի հրեշտակներից մեկն էր. «Յոգին ասաց նրան. «Ահա երեք տղամարդ փնտրում են քեզ: Ոտքի կանգնիր և իջիր և ուղեկցիր նրանց առանց տատանվելու, քանի որ ես եմ ուղարկել նրանց»: Եվ Պետրոսը իջավ տղամարդկանց մոտ... Եվ նրանք ասացին Կորնելիոսին ... ուղղորդել է սուրբ

հրեշտակը, որպեսզի նա գա իր տուն և լսի այն, ինչ դու պետք է ասես»: (Գործք 10/20-22) Սուրբ հրեշտակը այն Յոգին էր, որը պետք է խոսեր Պետրոսի հետ և նա էր, ով խնդրեց Կորնելիոսին իրեն ուղարկել Պետրոսին:

Գաբրիել հրեշտակը հանդիսանում էր Իսրայելիցիների թշնամին: Նա Սուրբ Յոգին էր, ով բազմաթիվ անգամներ փրկեց Նրանց, այնուհետ, երբ Նրանք հաստատուն մնացին անհավատության մեջ, նա զայրացավ, խրատեց և դարձավ Նրանց թշնամին: «Եվ հրեշտակը իր ներկայությամբ փրկեց Նրանց, իր սիրով և խղճմտանքով նա փրկեց Նրանց, նա բարձրացրեց Նրանց վեր և կրեց բոլոր հին ժամանակներից: Սակայն Նրանք ըմբոստացան և մորմոքեցին Նրա Սուրբ Յոգին, ուստի, նա դարձավ Նրանց թշնամին և ինքը մարտնչեց Նրանց դեմ»: (Եսայի 63/9-10) Նրանք վշտացրեցին Ամենաբարձրյալ Ալլահի Սուրբ Յոգուն, հրեշտակին, ուստի, Նրա սերը վերածեցին թշնամության:

Սուրբ Յոգին Իսրայելի ժողովրդի հետ էր, երբ Նրանք լքեցին Եգիպտոսը: «Այնուհետ նա հիշեց հին օրերը, Մովսեսին և իր ժողովրդին: Որտե՞ղ էր նա, ով դուրս բերեց Նրանց ծովից իր հոտի հովիվների հետ միասին: Որտե՞ղ էր նա, ով Նրանց մեջ դրեց իր Սուրբ Յոգին, Ով բաժանեց ջրերը Նրանց առջև, որպեսզի իր համար հավերժ անուն վաստակի»: (Եսայի 63/11) սակայն նա հրեշտակ էր, ոչ թե աստվածային էակ: «Ահա, ես ուղարկել եմ հրեշտակ, որպեսզի պահպանեմ ձեզ ձեր ուղղու վրա և բերեմ ձեզ այն վայրը, որը ես եմ պատրաստել»: (Ելք 23/20) Սուրբ Յոգին հրեշտակն էր, որը Նրանց հետ էր:

Ամենաբարձրյալ Ալլահի Ոգին չի հանդիսանում Գաբրիելի անունը, այլ շատ այլ հրեշտակների: «Եվ գահի և չորս կենդանի արարածների և ծերերի մեջ, ես տեսա կանգնած գառ, կարծես արդեն սպանված, յոթ պոզերով և յոթ աչքերով, որոնք էլ հանդիսանում են Աստծո ոգիները ուղարկված ամբողջ երկրի վրա»: (Հայտնություն 5/6) Ոգիները, որոնց ականատես է եղել Յովհաննեսը

աստվածներ չեն, հակառակը, այդ դեպքում Քրիստոնեական երրորդությունը չէր լինի երեք, այլ տաս:

Հայտնությունը նշում է Ամենաբարձրյալ Ալլահի այս յոթ Ոգիները ևս երկու հատվածների մեջ. «Գահից եկավ կայծակի լույսը և որոտը և կայծակի մարգարիտները և գահի դիմաց այրվում էին կրակի յոթ կանթեղ, որոնք էլ հանդիսանում էին Աստծո յոթ ոգիները»: (Հայտնություն 4/5) «Եվ Սարդիսի եկեղեցու հրեշտակին գրառում են. «Նրա խոսքերը, ով ունի Աստծո յոթ ոգիներ և յոթ աստղեր»»: (Հայտնություն 3/1)

Ով էլ որ լինի Սուրբ Հոգին, ևս Ամենաբարձրյալ Ալլահը չէ: Եթե ևս Աստված է, ևս պետք է գործի միայնակ, սակայն ևս ի վիճակի չէ: Պետրոսը ասում է. «Եվ մարդիկ խոսեցին Աստծո անունից, կարծես նրանց մեջ Սուրբ Հոգին էր»: (Պետրոս Բ 1/21) Եթե Սուրբ Հոգին լիներ հավերժ Աստվածը և համահավասար լիներ Հորը ամեն ինչում, ևս մարդկանց կստիպեր ասել իր իսկ խոսքերը:

Սուրբ Հոգու աստվածայնությունը հերքում է իր անգիտությունը- ինչպես մյուսները- Դատաստանի Օրը, քանի որ ոչ ոք տեղյակ չէ այդ մասին բացառությամբ Հոր: «Սակայն այդ օրվա կամ ժամի հետ կապված, ոչ ոք տեղյակ չէ, նույնիսկ երկնքի հրեշտակները, ոչ էլ Որդին, այլ միայն Հայրը»: (Մարկոս 13/32)

Մեկ այլ փաստ, ինչը հերքում է Սուրբ Հոգու աստվածայնությունը այն է, որ հատվածները նրա մասին խոսում են ինչպես մարդուն տրված Ամենաբարձրյալ Ալլահի պարզ, ինչպես ասում է Հիսուսը. «Այդ դեպքում, եթե դուք, ովքեր չարիք եք, տեղյակ լինեք, թե ինչպես պարզևներ տալ ձեզ գավակներին, որքան ավելի կարող է տալ երկրային Հայրը Սուրբ Հոգին նրանց, ովքեր խնդրում են»: (Դուկաս 11/13) Անիմաստ է, որ Ամենաբարձրյալ Ալլահը, որպես երրորդ աստվածային էակ, հանդիսանում է պարզ, որը տրվում է մարդկանց և որը պատկանում է նրանց:

Ավելին, եթե Սուրբ Յոգին հանդիսանում է Աստվածը, ապա մարդկանց, ում մոտ նա իջել է, մենք պետք է ենթադրենք Աստված: Նա իջել է շատերի մոտ, օրինակ Դավիթի. «Եվ ես բնակություն կհաստատեմ Իսրայելի զավակների մեջ և չեմ լքի Իսրայելի իմ ժողովրդին»: (Թագավորաց Գ 6/13) Սիմոն. «Այժմ, երուսաղեմում գոյություն ունեւ մի մարդ, ում անունը Սիմոն էր և այս մարդը առաքինի և նվիրված էր, սպասելով Իսրայելի մխիթարությանը և Սուրբ Յոգին նրա մեջ էր»: (Ղուկաս 2/25) աշակերտները. «Եվ դուք հզորություն կստանաք, երբ Սուրբ Յոգին գա ձեզ մոտ և դուք կլինեք իմ վկաները»: (Գործք 1/8) Վերջապես նա իջավ Կորնթոսի ժողովրդի մեջ, ովքեր հավատք էին ընծայում Պողոսին: Պողոսը ասում է. «Արդյո՞ք դուք տեղյակ չեք, որ ձեր մարմինը հանդիսանում է Սուրբ Յոգու տաճար ձեր մեջ»: (Կորնթացիներ Ա 6/19) Նրանք բոլորը արժանի են երկրպագության, եթե Աստվածը, Սուրբ Յոգին նրանց մեջ է և համալրում է նրանց:

Սուրբ Աստվածաշունչը հավատացյալներ է համարում, ոչ միայն Սուրբ Յոգուն հավատացյալներին, այլև այն մարդկանց, ովքեր չեն լսել Սուրբ Յոգու մասին: Ի լրացում, այն նրանց համարում է աշակերտներ, անկախ փաստի, որ նրանք տեղյակ չեն հայտնված Աստծո մասին: «Եվ այնպես պատահեց, որ երբ Ապպոլոսը Կորնթոսում էր, Պողոսը անցավ ներքին երկիրը և եկավ Եփեսոս: Այնտեղ նա գտավ մի քանի աշակերտների: Եվ նա ասաց նրանց. «Արդյո՞ք դուք ստացել եք Սուրբ Յոգին, երբ դուք հավատք եք ընծայել»: Եվ նրանք ասացին. «Ոչ, մենք Նույնիսկ չենք լսել, որ գոյություն ունի Սուրբ Յոգի»: (Գործք 19/1-2) Սա անկասկած, հերքում է Սուրբ Յոգու աստվածայնությունը:

Սուրբ Յոգու «Աստված հոգի է» (Յովհաննես 4/24) աստվածայնության գաղափարը սխալ է: Հատվածը չի խոսում Ամենաբարձրյալ Ալլահի բնույթի մասին, այլ նրա բնութագրերի «Աստված սեր է» (Յովհաննես Ա 4/16), «Աստված լույս է» (Յովհաննես Ա 1/5) մասին:

Հովհաննեսը նկատի ունեւ, որ ոչ ոք չի կարող տեսնել Ամենաբարձրյալ Աստծուն, որովհետև նա նյութական մարմին չէ մսից և արյունից և Ղուկասը հաստատեց, երբ ասաց. «Քանի որ Հոգին չունի մարմին և ոսկոր»։ (Ղուկաս 23/39) Պատասխանելով այն հարցին, թե «ինչու՞ են մարդիկ ասում, որ Աստված Հոգի է» նրանք պատասխանեցին. «Նրանք ասում են, որ նա Հոգի է, որովհետև նա հեռու է նյութական լինելուց և չի կարող քայքայվել».⁴⁵

Ուստի գիտնականները հավատք են ընծայում, որ Սուրբ Հոգին Աստված չէ և Երրորդության գաղափարը կեղծ համոզմունք է, որը կազմել են եկեղեցական ժողովները ըստ պապերի և կայսրերի ցանկության, առանց որևէ ապացուցող վկայության։ Հավատք, որի մասին մարգարեները երբեք չեն լսել, որը երբեք չի նշել Հիսուսը և որը անհայտ էր աշակերտներին։

Ժամանակակից Կաթոլիկ հանրագիտարանը ճիշտ է ասելով. Որ «մեկ Աստծուն երեք դարձնելը հաստատում չի ունեցել Քրիստոնեական կյանքի կամ հավատքի մեջ, մինչ չորրորդ դարի ավարտը».⁴⁶

⁴⁵ Հիմնական Հավատքի Բացատրությունը. Դոկ, Քահանա Անդրյու Ուաթսոն և Դոկ, Քահանա Իբրահիմ Սաաիդ Էջ.28

⁴⁶ Քրիստոնեության և Իսլամի Ներողամտությունը, Իբրահիմ Խալիլ Ահմեդ Էջ.95

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյա դավանանքի կարևոր համոզմունքի, Երրորդության մասին խոսելիս սովորական է գտնել վկայություններ, որոնք պնդել են մարգարեները, այնուհետ Ջիսուսը (Խ.Ա.Ո.Ն.) և այնուհետ նրա աշակերտները:

Ամեն դեպքում, ուշադիր ուսումնասիրելով Սուրբ Աստվածաշունչը, Ջին և Նոր Կտակարանների մեջ մենք չենք կարող գտնել որևէ ակնհայտ վկայություն: Անշուշտ սխալ է շտապողաբար դատելը: Եկեք ընթերցենք, թե ինչ է նշել Սուրբ Աստվածաշունչը այս կարևոր հավատքի մասին:

ԱՌԱՋԻՆ. ԹՈՐԱՅԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ և ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյաները անդրադառնում են Թորայի որոշ հատվածներին և հայտնում են, որ դրանք հանդիսանում են Երրորդության աստվածային նշանները: Այս հատվածներից մի քանիսը կիրառում են Եբրայերեն «Ելոհիմ» բառի հոգնակին, երբ խոսում են Ամենաբարձրյալ Ալլահի մասին: «Սկզբում Աստված արարեց երկինքները և երկիրը»: (Ճննդոց 1/1) Նմանապես այն հոգնակի թվով է խոսում այն արարքների մասին, որոնք գործել է Ամենաբարձրյալ Ալլահը. «Եկեք իջնենք և այնտեղ խառնենք նրանց լեզուները»: (Ճննդոց 11/7)

Գոյություն ունեն այլ հատվածներ, որոնց Քրիստոնյաները վերաբերվում են ինչպես Թորայի Երրորդության նշաններ: Հրեշտակները ասում են. «Սուրբ, Սուրբ, Սուրբ է Չորրորդյան Տերը»: (Եսայի 6/3) Այստեղ Սուրբ բառը կիրառում են երեք անգամ: Նմանապես Հայտնության այն կենդանիները, որոնց տեսել է Հովհաննեսը ասում են «Սուրբ սուրբ, սուրբ է Ամենագոր Տեր Աստվածը»: (Հայտնություն 4/8)

ԹՈՐԱՅԻ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Քրիստոնյաները ընդունում են, որ այս հատվածների մեջ գոյություն չունի Երրորդության ակնհայտ վկայություն, որը հերքում է ակնհայտ միաստվածության հատվածները: Մյուս կողմից, Հին Կտակարանի ընթերցողները, սկսած վաղ մարգարեներից մինչ Իսրայելի զավակները, չեն ընկալում, որ հետևյալ հատվածները, ինչպես նշում են Քրիստոնյաները, հանդիսանում են Երրորդության նշումներ:

Քահանա Փոթթերը ընդունում է ասելով. «Երկիրը արարելուց հետո, Աստված լրացրեց այն արարելով մարդկային Եակներ, քանի որ Նա Իր մասին ոչինչ չի հայտարարել, բացառությամբ միաստվածության: Այսպես նշել է Թորան: Ամեն դեպքում, մինչ այժմ թաքնված են բազմաթիվ նշաններ, որոնք կապված են այս միաստվածության հետ, որովհետև ուշադիր ընթերցանությունը ասում է. «Աստծո խոսք, Աստծո իմաստություն, Աստծո Ոգի նախադասությունները: Նրանք, ում իջել է Թորան, տեղյակ էր մտադրված իմաստի միայն Ավետարանից.... քանի որ, այն, ինչ ակնարկել էր Թորան, Ավետարանը հայտարարել և բացատրել է»:⁴⁷

Կարելի է զարմանալ, թե ինչու է Ամենաբարձրյալ Ալլահը Մովսեսից և Իսրայելցիներից թաքցրել Երրորդությունը: Ինչու՞ է Նա խաբել նրանց բազմաթիվ միաստվածական հատվածներով, որոնք էլ ստիպել են նրանց ընդգծել Երրորդության դեմ և ժխտել այն: Արդյո՞ք Նա ներում է նրանց և մյուսներին, այս հանելուկների իրական իմաստը չգտնելու համար:

Գիտնականները մտածեցին Քրիստոնյաների հայտարարության մասին, և խաբուսիկ համարեցին այն,

⁴⁷ «Քրիստոնեության ճառերը» Մուհամմեդ Բու Չահրա Էջ.121
«Քրիստոնյա Դավանանքը Ղուրանի և Պատճառների միջև, Հաշիմ Ջոդահ Էջ.129-130

որը անընդունելի է տգետ մտքերի համար և որն էլ չի համապատասխանում գաղափարի իրական իմաստին: Հետևյալ հատվածները նշում են բազմաթիվ աստվածներ, առանց երեքի կամ չորսի դասակարգման:

Հոգնակի թիվը, որը կիրառել է Թորան (Էլոհիիմ, Թող մեզ, մենք ժառանգենք և այլն) փառաբանության համար էր, քանի որ ժողովուրդները սովորություն ունեին իրենց մեծերի մասին հոգնակի թվով խոսել: Կարելի է ասել, որ «մենք, մենք հավատք են ընծայում, մենք պատվիրում ենք» նշանակում է ինքներս: Ունկընդիրը ընկալում է, որ նա խոսում է իր մասին, այլ ոչ թե իր և այլոց մասին:

Հոգնակի թվի կիրառությունը փառաբանության մեջ սովորական երևույթ է հանդիսանում Սուրբ Աստվածաշնչի մեջ: Գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ, ինչպիսիք են հանդիսանում կանայք, գուշակները, ովքեր տեսել են Սամուելի ոգին նրա մահից հետո. Նա հոգնակի թվով խոսեց նրա մասին: Թորան ասում է. «Երբ կինը տեսավ Սամուելին, նա բարձրաձայն լաց եղավ: Եվ կինը ասաց Սավուղին «Ես տեսա աստվածներին, ովքեր դուրս են գալիս երկրից»: Նա ասաց նրան. «Ի՞նչ տեսք ունի նա»: Եվ նա ասաց. «Ծերունի է դուրս գալիս և նա փաթաթված էր հանդերձով»: Եվ Սավուղը տեղյակ էր, որ նա Սամուելն էր»» (Թագավորաց Գ 28/12-14 Արքա Ջեյմսի, Հակոբոսի Տարբերակ): Նա խոսում էր Սամուելի մասին և չնայած նա տեսավ նրան որպես ծերունի, նա խոսեց նրա մասին հոգնակի թվով (աստվածներ): Ուստի հոգնակիությունը չի նշում բազմակի թիվ, այլ փառաբանություն:

Երբ Իսրայելի Չավակները երկրպագեցին հորթին, ապա այդ հանդիսանում էր այն մեկն, որը երեք անգամ նշել է Թորան: «Եվ նա նրանց ձեռքերից ոսկի ստացավ և ձևավորեց այն քանդակի գործիքով և ոսկե հորթ պատրաստեց: Եվ նրանք ասացին. «Սրանք ձեր աստվածներն են, օվ Իսրայել, ովքեր ձեզ դուրս բերեցին Եգիպտական հողից»: Նրանք ոսկե հորթ են պատրաստել իրենց համար, և երկրպագել և զոհաբերել

են դրան ասելով. «Սրանք ձեր աստվածներն են, օվ հարայել, ովքեր ձեզ դուրս բերեցին եգիպտական հողից»»։ (Ելք 32/4-8)

Այս գլուխը շարունակում է հաստատել, որ հոգևակի թվի կիրառությունը նշանակում է մեկը։ «Այսպիսով Մովսեսը վերադարձավ Տիրոջ մոտ և ասաց. «Ավաղ, այս մարդիկ մեծ մեղք են գործել։ Նրանք ոսկուց աստվածներ են պատրաստել իրենց համար»»։ (Ելք 32/31)

Նմանտիպ հոգևակիությունը մենք գտնում ենք Սուրբ Ղուրանի մեջ, երբ Ամենաբարձրյալ Ալլահը ասում է. «Մենք անկասկած, ուղարկել ենք Մարգարե և Մենք անշուշտ կպահպանենք այն (կոռուպցիայից)»։ (Սուրբ Ղուրան 15:9) «Մենք» բառը վերաբերում է Միակ և Եզակի Ամենաբարձրյալ Ալլահին։

Խոսքերը երեք անգամ կրկնելը, ինչպես հրեշտակները և կենդանիները, որոնց տեսել է Յովհաննեսը, ամեն դեպքում չեն կարող համարվել վկայություն։ Եթե մենք շարունակենք կիրառել որպես վկայություն, մենք կարող ենք գտնել բազմաթիվ աստվածներ։

Սուրբ Աստվածաշունչը երկու հատվածների մեջ սուրբ բառը նշում է երեք անգամ։ Նույնպես քառասուն անգամ այն նշում է որպես մեկ բառ։ Այդ կրկնությունը միայն հաստատելու համար է, ինչպես Ավետարանների և Թորայի բազմաթիվ հատվածներ։⁴⁸

Հատվածներից մեկի մեջ Հրեաները ասում են. «սակայն նրանք շարունակեցին բղավել. «խաչեք, խաչեք նրան»»։ (Ղուկաս 23/21) Նույնը տեղի ունեցավ, երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) հարցրեց Պետրոսին, Նա երեք անգամ կրկնեց. «Երբ նրանք ավարտեցին Նախաճաշը, Հիսուսը ասաց Սիմոն Պետրոսին. «Սիմոն, Հովհաննեսի որդի, արդյո՞ք դու սիրում ես ինձ ավելի քան նրանք»»։ Նա պատասխանեց նրան. «Այո, Տեր, դու տեղյակ ես, որ ես սիրում եմ քեզ... Նա հարցրեց նրան երկրորդ անգամ."Սիմոն, Հովհաննեսի որդի, արդյո՞ք դու

⁴⁸ Երեմիա 7:4,22:29 Եզեկիել 21:27

սիրում ես ինձ» ... Նա հարցրեց Նրան երրորդ անգամ.
«Սիմոն, Հովհաննեսի որդի, արդյո՞ք դու սիրում ես ինձ»:
Պետրոսը տխրեց, որովհետև նա հարցրեց Նրան երեք
անգամ «Արդյո՞ք դու սիրում ես ինձ»։ (Հովհաննես 21/15-17)

ԱՎԵՏԱՐԱՆԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

և

Քրիստոնյաները հավատք են ընծայում, որ Նոր
Կտակարանի մեջ առկա վկայությունները ավելի շատ են,
քան Թորայի մեջ։ Նրանք հատվածները ներկայացնում են
հետևյալ կերպ. «Եվ երբ մկրտեցին Հիսուսին, նա
անմիջապես դուրս եկավ ջրի միջից և ահա, երկինքները
բացվեցին Նրան և նա տեսավ աղավալված մեջ բնակվող
Աստծո Հոգին, որը գալիս հանգստանում է Նրա մեջ։ Եվ,
ահա, երկնքի մի ձայն ասաց. «Սա իմ սիրելի Որդին է, ումից
ես գոհ եմ»»։ (Մատթեոս 3/16-17)

Այս հատվածը ներառում է Հայր, սիրելի Որդի և Հոգի, որոնք
բնակվում են աղավալված կերպարով։ Մեկ այլ հատվածի մեջ
Պողոսը ասում է. «Տեր Հիսուս Քրիստոսի փառքը, Աստծո
սերը և Սուրբ Հոգու ընկերակցությունը թող լինի ձեր բոլորի
հետ»։ (Կորնթացիներ Բ 13/14)

Մատթեոսի հատվածի ուշադիր ընթերցումը, պարզում է, որ
խոսքը գնում է երեք անհատի մասին, ովքեր տարբերվում են
անուններով և արարքներով։ Նրանցից յուրաքանչյուրը ունի
տարբեր Էություն. Մեկը մկրտված է դուրս եկել ջրից,
երկրորդը կերպարանափոխվել է որպես աղավալված և երրորդը
նման է երկնքի ասեղով. (սա իմ սիրելի որդին է)։ Այս ամենից
հետո, ինչպես է կարելի ասել, որ Նրանք հանդիսանում են
ուղղակի մեկ էակ։

Ավելին, Քրիստոնյաները հավատք են ընծայում, որ Հիսուսը
հանդիսանում է Որդին։ Այստեղ հատվածը նշում է, որ հոգին
մարմնավորվել է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մեջ որն էլ հաստատում
են բազմաթիվ հատվածները (Ղուկաս 3/22 Մատթեոս 12/18)
մինչդեռ այլ հատվածներ նշում են, որ Հայրը մարմնավորվել

Է նրա մեջ: (Հովհաննես 17/21,14/9-10) Այդ դեպքում ո՞ր աստվածային հիպոստասն է մարմնավորվել Հիսուսի (Խ.Ա.Ռ.Ն) մեջ:

Սուրբ Աստվածաշունչը Երրորդության միասնական հիպոստասը նշում է միայն երկու հատվածների մեջ. Երեք վկաների հատվածը Հովհաննեսի Առաջին Նամակի մեջ և Մատթեոսի Ավետարանի ավարտը:

Ա. ԵՐԵՔ ՎԿԱՆԵՐԻ ՀԱՏՎԱԾԸ

Այս հատվածը շատ կարևոր է: Հովհաննեսի Առաջին Նամակը ասում է. «Քանի որ երեքը վկայել են. Հոգին, ջուրը և արյունը և այս երեքը հանդիսանում են մեկը»: (Հովհաննես Ա 5/7 Միջազգային Տիպական Տարբերակ):

Այս հատվածը ակնհայտ ցույց է տալիս, որ երեքը հանդիսանում են միայն մեկ Աստված: Ամեն դեպքում, այն առկա չէ Սուրբ Աստվածաշնչի բոլոր հին ձեռագրերի, ոչ էլ առաջին տպագրված գրքի մեջ: Այն ավելացրել են ավելի ուշ:

Քրիստոնյա գիտնականները ընդունում են լրացումը: Նրանցից են Հենրի Ուեսքիթի Մեկնաբանություններ հավաքագրող Հերոնը, Ադամ Բլաքը և Ֆենդերը: Ի լրացում Սուրբ Էքշտեյնը, Երրորդության ընդդիմադիրների հետ բանավեճի ընթացքում չի նշում այս հատվածը: Ավելին, նա գրառում է տաս ատենախոսություն, որոնք մեկնաբանում են Հովհաննեսի Նամակը, սակայն չեն նշում հատվածը:

Վերանայված Տիպական Տարբերակը և որոշ միջազգային թարգմանություններ հեռացրել են այս Անգլերեն տարբերակից: Սակայն այն առկա է այլ թարգմանությունների մեծամասնությունների մեջ, օրինակ Դուայ-Ռեյմսի Աստվածաշնչի, Միջազգային Տիպական Տարբերակի, Ջեյմս Մուրդաքի Նոր Կտակարանի և Արքա Ջեյմսի (Հակոբոսի) Ժամանակակից Տարբերակի մեջ:

Անգլերեն Տիպական Տարբերակի և այլ թարգմանությունների մեջ հատվածը հետևյալն է. «որովհետև Ոգին ճշմարտությունն է: Քանի որ գոյություն ունեն երեքը, որոնք վկայում են. Ոգին, ջուրը և այս երեքը համամիտ են»: (Յուրանալու Ա 5/6-8) Իր ներածականի մեջ Մուսաթեյի Ձերսյուլթ թարգմանությունը կոչում է, հեռացման պատճառը: Այն ասում է. «Այս հատվածը երբեք չեն կոչել ձեռագրի մեջ մինչև տասնհինգերորդ դարը կամ ավելի հին ձեռագրերի մեջ, ոչ էլ լավագույն Լատիներեն թարգմանությունների մեջ: Հավանական է, որ այն լուսանցքում գրառված մեկնաբանություն է և այնուհետ տեղադրված տեքստի մեջ, երբ կիրառել են արևմուտքում»:

Բենջամին Ուիլսոնը, Հունական ձեռագրերի թարգմանիչը, կրկնում է նույնը: Նա ասում է. «Այս նախադասությունը, որը հանդիսանում է աստվածայնության վկայություն, չեն գտել որևէ Հունական ձեռագրի մեջ մինչև տասնհինգերորդ դարը: Հունական ոչ մի հեղինակ, ոչ էլ որևէ հին Լատինական պապ երբեք չեն կոչել այն, նույնիսկ, եթե այն անհրաժեշտ է թեմայի համար, ուստի անկեղծ, այն հանդիսանում է կեղծիք»:

Բ. ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԲԵՐԱԿԱՆԵՐԸ

Երկրորդ հատվածը, որը Քրիստոնյաները համարում են Երրորդության վկայություն, հանդիսանում է Մատթեոսի տարբերակի վերջին գլուխը: Այս տարբերակը խոսում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) մասին մինչև իր համբարձումը, երբ Նա պատվիրեց իր աշակերտներին: «Եվ Հիսուսը եկավ և ասաց նրանց. «Ամբողջ իշխանությունը երկնքում է և երկրի վրա տրվել է ինձ: Ուստի գնացեք և դարձեք ժողովուրդների աշակերտներ, մկրտելով նրանց Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից, ուսուցանելով նրանց, ուսումնասիրել ամենը, ինչ ես ձեզ պատվիրել եմ: Եվ ահա, ես միշտ ձեզ հետ եմ, մինչև դարի վերջը» (Մատթեոս 28/18-20)

Այս հատվածի առաջին քննադատական կետը այն է, որ անկախ նրա կարևոր լինելուց, մնացած երեք Ավետարանները չեն նշում այն: Այս Ավետարանները համամիտ են, որ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ավանակ հեծած մուտք գործեց Երուսաղեմ: Արդյո՞ք ավանակ հեծնելը ավելի կարևոր է, քան Երրորդությունը, որը ոչ ոք չի նշել, բացառությամբ Մատթեոսի:

Ի լրացում, Մարկոսի Ավետարանի վերջին հատվածի մեջ, երբ Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) պատվիրեց իր աշակերտներին, չի նշվել Երրորդությունը: Մարկոսը ասում է. «Եվ նա ասաց նրանց. «Անցեք աշխարհով մեկ և հայտնեք Աստվածաշունչը բոլոր արարածներին: Նա, ով հավատք է ընծայում և մկրտվում է, կփրկվի, սակայն նա, ով հավատք չի ընծայում կդատապարտվի»: (Մարկոս 16/15-16) Սա նշում է Երրորդության կեղծիքը Մատթեոսի Ավետարանի մեջ և ցույց է տալիս, որ այն հանճարեղ չէ:

Ավելին, ինչպես հաստատում են արևմտյան գիտնականները այս հատվածը հանդիսանում է կեղծիք: Ուիլյամ ասում է. «Ոչինչ չի ապացուցում, որ առաքյալները հավատք են ընծայել Երրորդությանը»:

Ադոլֆ Հարնաքը ասում է. «Երրորդության հատվածը, որը խոսում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու մասին, տարօրինակ է Հիսուսի համար որը նա չի նշել և որը երբեք գոյություն չի ունեցել Առաքյալների օրոք: Քրիստոնեության միայն վերջին ուսումնունքների մեջ մենք գտնում ենք, որ Հիսուսը տալիս էր հրահանգներ իր հարությունից հետո, քանի որ Պողոսը տեղյակ չէր այդ մասին»:⁴⁹ (Պողոսը չի մեջ բերում Հիսուսի խոսքերը, որը կոչ է քրիստոնեությանը ժողովուրդների մեջ:)

⁴⁹ Քրիստոնեությունը Առանց Քրիստոսի, Քեմել Սաաֆան Էջ.66 Քրիստոսը Քրիստոնեական Դավանանքի Աղբյուրների մեջ, Ամմեդ Աբդուլ Ուահաբ Էջ.61 Քրիստոնյաների Միաստվածական Դավանանքը Իսլամի և Քրիստոնեության մեջ, Հուսնի Ալ Աթիիր Էջ.92

Երբ պատմաբան Եսեփիուսը մեջ բերեց այս հատվածը, նա չէր նշել Յորդ կամ Սուրբ Յոզիմ, այլ ասաց. «Նրանք գնացին բոլոր ժողովուրդների մոտ, որպեսզի քարոզեն Ավետարանը, վստահելով Հիսուսի հզորությանը, ով ասաց Նրանց. «գնացեք և ուսուցանեք բոլոր ժողովուրդներին իմ անունից»»:⁵⁰

Ավելին, ինչը հաստատում է մեզ, որ Նոր հայտնագործած Յրեական ձեռագրերը Մատթեոսի Ավետարանի համար, որոնք բնօրինակով գրառվել են Եբրայերեն, չեն ներառում այս հատվածը: Սա, ըստ Դոկ. Գ.Ռեքարտի, Անգլիկան Միսիոներական Քոլեջի աստվածանության պրոֆեսորի, հանդիսանում է հստակ վկայություն, որ հատվածը կեղծ է: Նա ասում է. «Իրոք, Կաթոլիկ և Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները ստել են աշխարհին, որը կապված է Մատթեոսի վերջին տարբերակների հետ, քանի որ յուրաքանչյուրը, ով մկրտվել է այսպես, սխալ է մկրտվել և մահկանացուն է կնքել առանց քավության»:⁵¹

Աշակերտների պատմությունը հաստատում է մեզ, որ Նրանք տեղյակ չեն հատվածի մասին: Նրանք չեն գնում քարոզելու բոլոր մարդկանց, ինչպես ասում է Հիսուսը: Հակառակը, նա Նրանց ասում է քարոզել միայն Յրեաներին: «Այս տասներկուսին Հիսուսը ուղարկեց հրահանգելով. «Մի գնացեք Յեթանոսների մոտ և մի մտեք Սամարաթացիների քաղաքը, այլ հակառակը գնացեք Իսրայելի տան կրողույալ գառների մոտ»»: (Մատթեոս 10/5-6)

Սա համապատասխանում է երկրորդ դարի պատմական վկայությանը, որը հակասում է ազգերի քարոզի պատվիրանին և Նրանց մկրտությանը Երրորդությանը: Պատմաբան Ապոլլոնիոսը ասում է. «Ես ստացել եմ մեծամեծներից, որ մինչև համբարձումը, Հիսուսը պատվիրեց

⁵⁰ Եկեղեցու Պատմությունը, Եսեփիուս Էջ.100

⁵¹ Տես Նույնպես Գործք 10:48,8:16

իր աշակերտներին տասներկու տարի չհեռանալ երուսաղեմից»:⁵²

Աշակերտները հետևեցին Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) պատվիրանին: Նրանք չլքեցին Երուսաղեմը, մինչ հանգամանքները չստիպեցին նրանց: «Այժմ, նրանք, ովքեր ցրվեցին Սթեֆենում տեղի ունեցող հալածանքների պատճառով, ճանապարհորդեցին հեռու Փյունիկիա, Կիպրոս և Անտիոք, տալով խոսքը միայն Հրեաներին»: (Գործք 11/19)

Եթե աշակերտները լսեին Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) պատվիրանը քարոզել բոլոր ազգերին Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունից, ապա նրանք պետք է հետևեին և քարոզեին ուղերձը հեթանոսներին:

Երբ հեթանոս Կորնելիոսը, Պետրոսի օգնությամբ Քրիստոնեություն ընդունելուց հետո, կոչեց Պետրոսին ճանաչել Քրիստոնեության, աշակերտները մեղադրեցին նրան: Այնուհետ Պետրոսը ասաց նրանց. «Դուք ինքներդ տեղյակ եք, թե որքան անթույլատրելի է Հրեայի համար շփվել կամ այցելել մեկ այլ ազգի, սակայն Աստված ցույց տվեց ինձ, որ չպետք կոչեմ որևէ մի անհատի սովորական կամ անմաքուր»: (Գործք 10/28)

Ակնհայտորեն այստեղ Պետրոսը չի նշել, այդպես վարվել Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) խնդրանքի մասին, սակայն նա ասում է. «մեզ, ում ընտրել է Աստված որպես վկա, ով սնվել և ըմպել է նրա հետ մահկանացուն կնքելուց հետո: Եվ նա պատվիրեց մեզ քարոզել մարդկանց»: (Գործք 10/41-42) Այս նշանակում է միայն Հրեաներին:

Երուսաղեմ վերադառնալուց հետո, նա հանդիպեց մեղադրանքների: «Այսպիսով, երբ Պետրոսը եկավ Երուսաղեմ, թլպատության երեկույթը քննադատեց նրան

⁵² Քրիստոնեական Դավանանքի Միաստվածությունը Իսլամի և Քրիստոնեության միջև. Հոլանդի Ալ Աթիիր Էջ.230 Պատմության Միաստված Քրիստոնյաները, Ահմեդ Աբդուլ Ուահաբ Էջ.91-94

ասելով. «Դու այցելել ես անթափառ մարդկանց և հաց ես կիսել նրանց հետ»»։ (Գործք 11/2-3) Այնուհետև նա ասաց նրանց իր երազի մասին, երբ հաց է կիսել հեթանոսների հետ. «Եվ Պետրոսը սկսեց և բացատրեց այն նրանց, հերթականությամբ. «Ես Ձուփիա քաղաքում աղոթում էի և հափշտակության մեջ ես տեսիլք տեսա, սավանի պես մի բան, իջնաձ երկնքից իր չորս անկյուններով ինձ վրա։ Ավելի մոտ տեսնելուց այն, ես նկատեցի, որ կենդանիները և գազանները, սողունները և երկնքի թռչունները աղոթում են։ Եվ ես լսեցի մի ձայն, որն ինձ ասաց. «Արթնացիր Պետրոս, սպանիր և սնվիր։ Սակայն ես ասացի. «Ոչ մի դեպքում Տեր, քանի որ ոչինչ անմաքուր կամ անսովոր չի մոտեցել իմ շուրթերին։ Սակայն ձայնը երկրորդ անգամ պատասխանեց երկնքից. «Այն, ինչ Աստված մաքուր է դարձրել, մի կոչիր ընդհանուր։ Սա տեղի ունեցավ երեք անգամ և ամենը կրկին վերադարձավ երկինք»»»։ (Գործք 11/4-10) և ինչպես էր կարող Սուրբ Հոգին գալ և խնդրել նրան գնալ «Եվ Հոգին ասաց ինձ գնալ իր հետ, առանց խտրականության։ Այս վեց եղբայրները նույնպես ուղեկցեցին ինձ»։ (Գործք 11/12)

Պետրոսի նմանատիպ բացատրությունից հետո, աշակերտները համաձայնեցին թույլ տալ նրան գնալ և քարոզել հեթանոսներին։ «Երբ նրանք լսեցին այս ամենը, լռեցին։ Եվ նրանք փառաբանեցին Աստծուն ասելով. «Այնուհետև հեթանոսներին նույնպես Աստված շնորհել է քավություն, որը ուղղորդում է կյանքի»»։ (Գործք 11/18)

Ուստի, բոլորը, ներառելով Պետրոսին, ոչինչ չգիտեին Մատթեոսի հատվածի մասին, որը կոչ է անում ազգերին մկրտել հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու, ինչու⁶։ Որովհետև Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) չէր նշել այն և նրանք չէին լսել և եթե Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) ասեր դա, նրանց ոչ մի մեղադրանք չէին ներկայացնի։

Ի լրացում, աշակերտները համաձայնեցին Պողոսի հետ քարոզել հեթանոսներին և Հրեաներին։ Պողոսը ասում է. «Երբ նրանք տեսան, որ ես վստահել եմ անթափառներին ավետարանով, ինչպես Պետրոսը վստահել էր ավետարանով

թլպատվածներին: Նրանք տվեցին աջ ձեռքը ի նշան ընկերության Բարնաբային և ինձ, որպեսզի մենք ի վիճակի լինենք գնալ հեթանոսների մոտ և որպեսզի նրանք թլպատվեն»: (Գաղաթագիներ 2/7-9) Ինչպե՞ս էին նրանք կարող ընդդիմանալ Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն) պատվիրանին – եթե Մատթեոսի հատվածը ճշմարտություն է - և ժխտել քարոզել ազգերին և դա թողնել միայն Պողոսին և Բարնաբային:

Այս բոլոր վկայությունները հերքում են Մատթեոսի հատվածը և ապացուցում են, որ այն հանդիսանում է կեղծիք: Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն) չի ասել այս խոսքերը:

Եթե մենք նույնիսկ հետևենք այն ամենին ինչ նշել ենք, ապա հատվածի մեջ մենք ոչինչ չենք գտնի Սուրբ Երրորդության մասին: Այն խոսում է միայն երեք տարբեր անհատների մասին և կիրառում ու նշում է, որ նա խոսում է երեք տարբեր բաների մասին: Մատթեոսի հատվածի ճիշտ իմաստը հետևյալն է. «գնացեք Ամենաբարձրյալ Աստծո անունից և Հիսուսի, նրա մարգարեի և ոգեշնչության, որը նրան ուղարկել է Ամենաբարձրյալ Ալլահը, իր պատվիրանների հետ միասին»:

Մատթեոսի տարբերակը նման է Պողոսի խոսքերին, որոնք նա ասել է Տիմոթեոսին ուղղված նամակի մեջ: Ամեն դեպքում, Քրիստոնյաները դա չեն ենթադրում Երրորդության վկայություն: Պողոսը ասում է. «Աստծո և Հիսուս Քրիստոսի և ընտրված հրեշտակների ներկայությամբ ես պատվիրում եմ ձեզ պահպանել այս կանոնները առանց նախավճռի, կողմնակալության»: (Տիմոթեոս Ա 5/21) Այստեղ ոչ ոք չի ընկալում հրեշտակների աստվածայնությունը, կամ որ նրանք հանդիսանում են Երրորդության երրորդ հիպոսթասիսը: Պողոսի հատվածի քննադատությունը նման է Մատթեոսի հատվածի քննադատությանը:

Ելք-ի գիրքը նշում է նույնը, երբ խոսում է Իսրայելի շավակների կոչի մասին, որպեսզի նրանք հավատք ընծայեն Ամենաբարձրյալ Ալլահին և Մովսեսին (Խ.Ա.Ո.Ն) և նրանց ոչ ոք չի ենթադրում մեկը և համահավասարը:

«Այսպիսով մարդիկ վախեցան Տիրոջից և նրանք հավատք ընծայեցին Տիրոջը և նրա ծառա Մովսեսին»։ (Ելք 14/31)

Արտահայտության նմանատիպ ձևը սովորական երևույթ է լեզուների և գրքերի մեջ, քանի որ այն ևս գոյություն ունի Ղուրանի բազմաթիվ տարբերակների մեջ։ «Օվ դուք, ովքեր հավատք եք ընծայել, Հավատք ընծայեք Աստծուն և նրա Առաքյալին և գրին, որը Նա ուղարկել է Իր առաքյալին և գրին, որը Նա ուղարկել է նրա նախորդներին»։ (Սուրբ Ղուրան 4:136)

ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Եթե մենք ի վիճակի չենք գտնել որևէ վկայություն, որը աջակցում է Երրորդությանը, ապա արդյո՞ք Սուրբ Աստվածաշնչի մեջ գոյություն ունի որևէ վկայություն, որը աջակցում է հակառակ գաղափարին, որն էլ հանդիսանում է Միաստվածությունը:

Նա, ով ուսումնասիրում է Սուրբ Աստվածաշունչը, կարող է գտնել, որ Երրորդությունը տարօրինակ գաղափար է և որ Սուրբ Աստվածաշունչը լի է ակնհայտ փաստերով, որոնք հայտնում են Քրիստոնեության միաստվածությունը: Սուրբ Աստվածաշնչի մեջ գոյություն ունեն բազմաթիվ հատվածներ, որոնք պարզորեն հայտնում են, որ Միաստվածությունը հանդիսանում է Հիսուսի (Խ.Ա.Ո.Ն.), Նրա աշակերտների և Նախորդող բոլոր մարգարեների հավատքը:

ԱՌԱՋԻՆ. ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՄԻԱՏՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

Հին Կտակարանի մեջ ակնհայտ երևում է Միաստվածությունը: Մարգարեները խոսել և բազմաթիվ անգամներ հիշեցրել են մեզ այդ մասին իսկ հատվածները հստակորեն հաստատում են այս հավատքը: Մի քանի օրինակներ այդ հատվածներից.

- Այն ինչ մենք գտնում ենք Օրինաց Գրքի Մովսեսի (Խ.Ա.Ո.Ն.) պատվիրանների մասին, որոնք գրառել է Ամենաբաժրյալ Ալլահը երկու քարերի վրա և պատվիրել է Իսրայելի Չավակներին պահպանել, հաստատել է Հիսուսը (Խ.Ա.Ո.Ն.): «Լսիր, օվ Իսրայել. Տերը մեր Աստվածը, Տերը մեկն է: Դուք պետք է սիրեք Տիրոջը ձեր Աստծուն ամբողջ ձեր սրտով և ամբողջ ձեր հոգով և ամբողջ հզորությամբ: Եվ այս խոսքերը,

որը ես այսօր պատվիրում եմ ձեզ պետք է լինի ձեր սրտում: Դուք պետք է հրճվանքով ուսուցանեք ձեր զավակներին և խոսեք, երբ նստած եք ձեր տանը և երբ դուք քայլում եք և երբ դուք ննջում եք և երբ դուք արթնանում եք: Դուք պետք է ամրացնեք որպես նշան ձեր ձեռքին և նրանք պետք է լինեն ուղեցույց ձեր աչքերին: Դուք պետք է դրանք գրառեք ձեր տան դռանը և ձեր դարպասին»: (Երկրորդ Օրենք 6:4-9)

